

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

### ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — Պայքարը պետք է շարունակուի  
ի խնդիր մեր իրաւունքներու վերատիրացման..... 139

**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ** ..... 144

### ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — Աստուծոյ դառնալ  
(Turning to God)..... 147

### ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ — Մեկնութիւն  
Յովհաննու Աւետարանի (3.6-15)..... 158

### ՅՕԴՈՒԱԾ

ՊԱՐՈՅՐ ՎՐԴ. ՇԵՐՆԷՉԵԱՆ — Կը նայիմ Միւռնին... ..... 170

### ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՏԱԹԵՒԻԿ ՇԱԽԿՈՒԼԵԱՆ — Բարսեղ Կանաչեան (1885-1967)  
... մեծ ուսուցչի ուղիով ... ..... 174

### ՊԱՏՄԱՆՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՈՒՐԵՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ — 90-ամեայ հունձքը  
Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքին ..... 181

ՇԱՅԱՆ ԱՐՔ. ՍԱՐԳԻՍԵԱՆ — Մեծի Տանն Կիլիկիոյ  
Կաթողիկոսարանի Մատենադարանը..... 192

### ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ԶԷՅԵԱՆ — Կանտի բարոյագիտութեան  
նորարարութիւնը ..... 199

**ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ** ..... 206

### ՍՓԻՈՔԻ ՏԱՐԻ

ԹՐՐԳՈՍ ԵՊՍ. ՏՕՆՈՅԵԱՆ — Մենք կը նայինք ձեզի ..... 217

ՏԻԳՐԱՆ ԾԻՆՊԱՇԵԱՆ — Սփիւռքի ձգտումներուն հակասող  
որեւէ զիջում անընդունելի է ..... 219

**ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ** ..... 221

<b>ՏՕՆԱԿԱՆ</b> .....	224
ԿՈՄԻՏԱՍ ԱՐՔ. ՕՅԱՆԵԱՆ — Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հաւատոյ մեր հայրը .....	227
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — Յարուցեալ Զրիստոսը ապրի՛լ՝ որպէս կեանքի ուղեցոյց .....	241
ԱԻԵՏԻՔ ԱԲՂ. ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ — Եւ բացուեցան դռներն յուսոյ .....	245
<b>ԴՊՐԵՎԱՆՔ</b> .....	250
<b>ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ</b> .....	253
<b>ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ</b> .....	257
<b>ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈՉ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ</b> .....	265

# ՄԻՒՌՆՕՐՀՆԷՔ

ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՁԻՆ ՄԷՐ


ՋԵՌԱՄԲ՝

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ՈՒՐԲԱԹ, 1 ՅՈՒԼԻՍ 2022





ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿՄԱԿԳԻՐ  
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՅ  
ՄԵԾԻ ՏԱՆ ԿԻԿԿԻՈՅ

ՂԱ. ՏԱՐԻ 2022

ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ

ԹԻԼ 3-4

**ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ**

## **ՊԱՅՔԱՐԸ ՊԷՏՔ Է ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ Ի ԽՆԴԻՐ ՄԵՐ ԻՐԱԲՈՒՆՔՆԵՐՈՒ ՎԵՐԱՏԻՐԱՅՄԱՆ**

Կ'ապրինք այլազան տագնապներով յղի ծանր պայմաններու մէջ:

- Ճգնաժամի մէջ է մեր ազգը:

- Անորոշ է Արցախի ինքնանկախ գոյութիւնը:

- Վտանգուած է Հայաստանի հողային ամբողջականութիւնը ու  
Նոյնիսկ անկախութիւնը:

- Լուրջ մարտահրաւերներու դիմաց կը գտնուի մեր պահանջատի-  
րութիւնը:

Այս հաստատումները տեսական յղացքներ չեն, յուսահատութեամբ  
ու յոռետեսութեամբ պարուրուած զգացական արտայայտութիւններ  
չեն, այլ՝ ներկայ հայ կեանքի իրապաշտ արժեւորումէն թելադրուող  
խորապէս մտահոգիչ իրականութիւններ, որոնց նկատմամբ իրաւունք  
չունինք անտարբեր ըլլալու եւ լուռ մնալու: Արդ, հարկ է ըլլալ արթուն  
ու մանաւանդ՝ միակամ, եւ բարձրագոյն աստիճանի պատասխանա-  
տուութեամբ, խոհեմութեամբ ու հեռատեսութեամբ դիմագրաւել մեր  
ազգին ու հայրենիքին ապագան վտանգող մօտեցումներն ու քայլերը:

Մեր մեկուկես միլիոն նահատակներու անմոռաց յիշատակով օծուն Ապրիլ 24-ի առաւօտուն, սրբացեալ նահատակներու մասունքներուն առջեւ կանգնած ու հաւատարիմ անոնց կտակած սրբազան դատին, վեց կէտերու մէջ ամփոփելով Մեր մտածումներն ու մտահոգութիւնները, միասնականութեան եւ արթնութեան հայրական կոչ կ'ուղղենք մեր ազգի բոլոր զաւակներուն.-

Ա) Հարկ է համախմբուիլ մեր ազգին ու հայրենիքին գերագոյն ու ընդհանրական իտեալներուն, շահերուն ու արժէքներուն շուրջ, ինչ ալ ըլլան մեզ իրարմէ հեռացնող պատճառները եւ մեզ շրջապատող վտանգները: Հայութիւն ու Հայաստան պէտք է դաւանիլ ամէն բանէ վե՛ր՝ ոչ թէ սոսկ խօսքով, այլ գործով ու ամբողջական յանձնառութեամբ: Արդարեւ, լոզունքներ կրկնելով ու գիրար անգոսնելով կարելի չէ իրաւունք պաշտպանել, հայրենիք կառուցել եւ պետութիւն հզօրացնել: Հարկ է ազգին ողջ մարդուժն ու ներուժը համախմբել եւ գործի մղել բոլոր բնագաւառներէն ներս, ներքին թէ արտաքին ճակատներու վրայ, մեզ շրջապատող տագնապներուն դիմաց ու ապագայի տեսլականներուն շուրջ:

Բ) Հարկ է մերժել որեւէ առաջարկ կամ համաձայնագիր, ներսէն թէ դուրսէն, որ կրնայ վտանգել Հայաստանի անկախութիւնը: Գիտե՛նք, աշխարհաքաղաքական ներկայ պայմանները ի նպաստ մեզի չեն: Տարածաշրջանէն ներս համապարփակ խաղաղութեան հաստատման համաձայն ենք. սակայն՝ ո՛չ ի հեճուկս Հայաստանի անվտանգութեան, հողային ամբողջականութեան ու անկախութեան, ո՛չ զիջումներ միայն կատարելով եւ թոյլ դիրքերէ բանակցելով: Կը յուսանք, որ Հայաստանի ռազմավարական գործընկերը, տարածաշրջանէն ներս Հայաստանը կը նկատէ, փոխադարձ ամուր վստահութեան ու սերտ բարեկամութեան վրայ հիմնուած իր մնայուն ու վստահելի դաշնակիցը: Նաեւ կը յուսանք, որ Հայաստանի նո՛յն գործընկերը եւ Հայաստանի անմիջական դրացիները կ'անդրադառնան թէ՛ տկար Հայաստանի մը դիմաց զօրեղ Ազրայէճան մը, եթէ ոչ այսօր, վաղը անպայման փորձանք կրնայ դառնալ ողջ տարածաշրջանին համար: Ներկայ հանգրուանին, երբ Հայաստան տկար կացութեան մէջ կը գտնուի, զգո՛յշ պէտք է ըլլայ ստորագրելու այսպէս կոչուած խաղաղութեան որեւէ համաձայնագիր, որ հետագային կրնայ աղիտալի դառնալ Հայաստանին համար: Բոլոր պայմաններուն մէջ հարկ է հեռու մնալ պարտուողական մօտեցումներէ եւ մեր իրաւունքներէն նահանջել: Հայաստանը ինքնահզօրաց-

ման ազդու միջոցներու պետք է դիմէ այսօր, վաղը կրնայ ո՛րևէ ըլլալ: Կենսական է միաժամանակ, որ Հայաստանը միշտ հետամուտ ըլլայ ընդլայնելու ծիրը իր ռազմավարական գործընկերներուն՝ բնականաբար մեկնելով իր ազգային շահերէն եւ աշխարհաքաղաքական տըւեալ պայմաններէն: Անհրաժեշտ է որ ազգին երկու թեւերը, Հայաստանը եւ Սփիւռքը, տարբեր շեշտաւորումներով հաւաքական նո՛յն մօտեցումը ունենան ու կեցուածքը որդեգրեն Հայաստանը դիմագրաւող մարտահրաւերներու ու տագնապներու գծով:

Գ) Հարկ է քաջութիւնը ունենալ, եւ Արցախի ժողովուրդը ունի՝ այդ քաջութիւնը, մերժելու որեւէ առաջարկ, պարտադրանք կամ համաձայնագիր, որ կրնայ սպառնալ Արցախի հայութեան անվտանգութեան եւ հարցականի տակ առնել իր կամքը ազատօրէն արտայայտելու Արցախի ժողովուրդին իրաւունքը: Ժողովուրդին կամքը գերիվեր է բոլոր նկատումներէ: Ո՛չ ոք իրաւունք ունի անտեսելու իր պատմական հողերուն վրայ ապրող ժողովուրդի մը ինքնորոշման իրաւունքը, որ յստակօրէն ընդգծուած է մարդկային իրաւանց հռչակագրին մէջ: Անկախութիւնը բացարձակ արժեք է եւ կարելի չէ գայն սակարկութեան նիւթ դարձնել: Արցախի ժողովուրդը իր կամքը օրինական ճամբով արտայայտած է. եւ վերջակէտ: Կ'անդրադառնա՞նք արդեօք, որ Արցախի անկախութեան կորուստը պիտի վտանգէ Հայաստանի անվտանգութիւնը ու նաեւ անկախութիւնը: Արդ, հաւաքական ամուր կեցուածքով պետք է դիմագրաւենք «զիջում կամ պատերազմ» լոզունքներով վախի ու անորոշութեան մթնոլորտ ստեղծելու փորձերը: Արցախի ժողովուրդը իրաւունքը ունի անտեղիտալի վճռակամութեամբ պաշտպանելու երեսուն տարիներէ ի վեր արեան գնով հաստատած իր անկախութիւնը՝ ի պահանջել հարկին դիմելով ազգային դիմադրութեան: Եթէ մեր կեանքի ներկայ ճակատագրական հանգրուանին չկարենանք ժողովրդային ընդվզում, քաղաքական ամուր կամք ու մարտունակ դիւանագիտութիւն ցուցաբերել, այսօր Արցախը, վաղը Հայաստանը կրնան ուղղուիլ դեպի անդունդ: Հետեւաբար, արթո՛ւն եղիր, պի՛նդ կեցիր Արցախի հայութիւն. մենք քեզի հետ ենք:

Դ) Վերջին շրջանին դարձեալ կը խօսուի Հայաստան-Թուրքիա յարաբերութեան բնականոնացման մասին եւ նախնական որոշ քայլեր սկսած են առնուիլ այս ուղղութեամբ: Հայաստանի ու Թուրքիոյ իշխանութիւնները կ'ողջունեն այս երեւոյթը, եւ արեւմտեան պետութիւնները դրական կը նկատեն գայն: Վստահ ենք, որ նահատակներու արիւնը

կրող մեր ժողովուրդի զաւակներուն հարազատ կեցուածքին թարգմանը կ'ըլլանք կարեւորութեամբ յիշեցնելով՝ թէ մեզի համար անընդունելի է որեւէ քայլ, որ կրնայ վտանգել մեր պահանջատիրութեան պատմական, իրաւական ու քաղաքական հիմքերը: Պահ մը դիտեցէք ձեր շուրջը: Թուրքիա-Ազրայէճան գործակցութեամբ, նոր համաթուրանիզմ մը սկսած է ձեւաւորուիլ Կովկասէն, ինչպէս նաեւ արաբական աշխարհէն ներս: Արդարեւ, վտանգալից երեւոյթ մը, որ կրնայ անսխառտեւելի հետեւանքներ ունենալ յատկապէս Հայաստանի ուղղութեամբ: Եթէ Հայաստանի իշխանութիւնը շրջանէն ներս խաղաղութիւն հաստատուած տեսնելու յոյսէն եւ տնտեսական շահերէ մղուած կ'ուզէ դիւանագիտական յարաբերութիւն մշակել Թուրքիոյ հետ, անհրաժեշտ է որ ի յառաջագունէ յստակօրէն ճշդէ իր յարաբերութեան բնոյթն ու սահմանները՝ հաւատարիմ մնալով Հայաստանի սահմանադրութեան հիմքը կազմող անկախութեան հռչակագրին, ինչպէս նաեւ 100-ամեակի հռչակագրին մէջ հայ ժողովուրդի իրաւունքներուն հետապնդման գծով շեշտուած Հայաստանի պետութեան յանձնառութեան: Այլ խօսքով, հայ ժողովուրդի իրաւունքներու պահանջը պէտք է մնայուն տեղ գրաւէ Հայաստանի պետութեան օրակարգին մէջ:

Ե) Հարկ է որ մեր պահանջատիրական պայքարը նոր շեշտ ու ծաւալ ստանայ՝ համահունչ ներկայ ժամանակներու աշխարհաքաղաքական պայմաններուն ու մարտահրաւերներուն: Թուրքիան, պետութեան լայն կարելիութիւններու օգտագործումով իր ժխտողական քաղաքականութիւնը աւելի կազմակերպ կերպով կը շարունակէ՝ արեւմըտեան համալսարաններէն ներս թրքագիտութեան ամպիոններ հաստատելով, Հայոց Տեղասպանութիւնը ժխտող տեղեկատուական կեդրոններ հիմնելով եւ այլ միջոցներով: Հետեւաբար, անհրաժեշտ է, որ Հայաստանի պետութիւնը, եկեղեցին եւ Հայ Դատի մարմինները, աշխատանքի բաժանումով ու ներդաշնակ գործակցութեամբ առաւել թափով շարունակեն հետապնդել մեր նուիրական դատը: Սա համագային պարտաւորութիւն է:

2) Յաճախ յիշեցուցած ենք, որ ազգին ու հայրենիքին ճգնաժամային պահերը հրամայական է որ դիմագրաւենք միա՛սնաբար: Արդարեւ, Արցախի կարգավիճակին, Հայաստանի անվտանգութեան, ինչպէս նաեւ Թուրքիոյ հետ յարաբերութեան առնչուած եւ ո՛ղջ հայութեան համար ճակատագրական սկատուող հիմնահարցերու գծով, Հայաստանի իշխանութիւնը պարտաւոր պէտք է զգայ հաւաքական

գործընթացով ու համահայկական մասնակցությամբ որոշումներ գոյացնելու՝ Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի ղեկավարութեան հետ միատեղ: Այս ծիրէն ներս էական է քաղաքական ու յարաբերական հարուստ կենսափորձ ունեցող Սփիւռքի դերը: Հետեւաբար, Սփիւռքի գլխավոր կառոյցներուն միջեւ սերտ գործակցութիւնը կը նկատենք կարելոր ու անյետաձգելի: Կը կրկնենք. համահայկական խնդիրներու, ծրագիրներու եւ տագնապներու գծով համահայկական մաշտապով խորհրդակցութիւն ունենալը եւ ի պահանջել հարկին որոշում կայացրնելը՝ Ազգային խորհուրդի մը ճամբով, հրամայական անհրաժեշտութիւն է: Այս է ազգն ու հայրենիքը բարգաւաճման ու հզօրութեան առաջնորդող ապահով ճամբան:

\*

\* \*

Ապրիլ 24-ը մեր երախտագիտութիւնը յայտնելու օր է բոլոր անոնց, որոնք հակառակ Թուրքիոյ ճնշումներուն եւ նոյնիսկ սպառնալիքներուն, պաշտօնապէս ճանչցան քսաներորդ դարու առաջին ցեղասպանութիւնը:

Ապրիլ 24-ը նաեւ նոր սերունդին յիշեցնելու օր է, թէ ինք կոչուած է, որպէս սրբազան պարտաւորութիւն, վառ պահելու ջահը հայ ժողովուրդի պահանջատիրութեան:

Ապրիլ 24-ը յիշեցնելու օր է մանաւանդ Թուրքիոյ, թէ 107 տարիներ հայ ժողովուրդին զաւակները աշխարհի բոլոր ծագերուն իրենց բռնաբարուած իրաւունքները պահանջեցին եւ պիտի շարունակեն պահանջել՝ վերանորոգ վճռակամութեամբ ու աննահանջ ոգիով:

Փա՛ռք ու պատի՛ւ իր իրաւունքներուն համար պայքարող հայ ժողովուրդին:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ**  
**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**



## ԿՈՆԴԱԿՆԵՐ



### ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՅԱՐԴ ՀՐԱՊԱՐԱԿԱԾ ԿՈՆԴԱԿՆԵՐՈՒՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԵՐՈՒՆ ՀԱՄԱՔԱԾՈՆ\*

#### ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Ս. Աստուածածին եկեղեցւոյ հիմնադրութեան  
400-ամեակին առթիւ)

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն հայրապետական օրհնութեամբ ու քրիստոնէական ջերմ սիրով կ'ողջունենք ձեզ, ինչպէս նաեւ Սպահանի մեր ժողովուրդի սիրելի զաւակները:

Սպահանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բարգէն Եպս. Չարեանի Մեզի ուղղած նամակէն ուրախութեամբ իմացանք, որ Նոր Զուղայի մէջ հաստատուած Ս. Աստուածածին եկեղեցին պիտի նշէ իր հիմնադրութեան 400-ամեակը: Նոր Զուղա Մեր հովուապետական այցելութեան ընթացքին կը յիշենք Մեր այցելութիւնը նաեւ Մեծ Մէլտան թաղամասին մէջ գտնուող եւ 1613-ին Խոջայ Աւետիք Բաբաքեանի կողմէ կառուցուած եւ գեղեցկօրէն նկարագարուած այս եկեղեցին:

Արդարեւ, չորս հարիւր տարիներ շարունակ Ս. Աստուածածին եկեղեցին եղաւ մեր ժողովուրդի հոգեւոր տունը, ուր մեր ժողովուրդի զաւակները միասին եղան Աստուծոյ ներկայութեան դիմաց, միասին աղօթեցին ու իրենց քրիստոնէական հաւատքը ամրապնդեցին: Ս. Աստուածածին եկեղեցին նաեւ

\* Յունուար 2010-ի թիւով սկսանք հրատարակել Ս. Աթոռոյս Վեհափառ Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Կոնդակներու հաւաքածոն, սկսեալ 1995 թուականէն: Սոյն շարքը շարունակութիւնն է ընդհանուր հաւաքածոյին: *ԽՄԸ*:

եղաւ հայ հոգեւոր մշակոյթի կեդրոններէն մէկը՝ իր կարեւոր նպաստը բերելով Նոր Ջուղայի մշակութային առաքելութեան առաւել ծաղկման:

Այսօր, երբ յետադարձ ակնարկ մը կը նետէք Ս. Աստուածածին եկեղեցւոյ չորս հարիւր տարիներու կեանքին ու առաքելութեան, հարկ է որ յիշէք բոլոր այն հոգեւոր թէ աշխարհական պատասխանատուները, որոնք զանազան հանգամանքներով իրենց գործօն մասնակցութիւնը բերին այս եկեղեցւոյ պայծառութեան: Անցեալը յիշել նաեւ կը նշանակէ անցեալին ձեռք ձգուած իրագործումները առաւել հաւատքով շարունակել հաւատարիմ մնալով հայ եկեղեցւոյ սրբազան կոչումին: Արդարեւ, Նոր Ջուղան իր եկեղեցիներով ու մշակութային նուաճումներով յատուկ տեղ է գրաւած մեր ժողովուրդի պատմութեան մէջ: Ան կոչուած է վերանորոգ յանձնառութեամբ շարունակելու իր հոգեմտաւոր առաքելութիւնը ընդհանրապէս հայ ժողովուրդի ու յատկապէս Պարսկաստանի հայութեան կեանքէն ներս:

Այս առիթով կ'աղօթենք հոգիներուն համար բոլոր անոնց, որոնք Աւետարանի բացատրութեամբ՝ Ս. Աստուածածին եկեղեցւոյ ծառայութեան զանազանակի մէջ իրենց լուման դրին: Բարձրօրէն կը գնահատենք այն բոլոր հոգեւոր թէ աշխարհական մշակները, որոնք Ս. Աստուածածին եկեղեցւոյ ճամբով կը ծառայեն Նոր Ջուղայի ու Սպահանի մեր ժողովուրդի զաւակներուն: Թող Աստուած միշտ պայծառ պահէ մեր սուրբ եկեղեցին իր պայծառակերպիչ առաքելութեամբ:

**ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակս այս  
Ի Կաթողիկոսարանիս Մեծի Տանն Կիլիկիոյ  
Որ յԱնթիլիաս, Լիբանան  
Ի 30-ն Հոկտեմբերի, 2013 թուին Քրիստոսի, եւ  
Ի թուին Հայոց ՌՆԿԳ.  
Ընդ համարաւ Շ/ՅԻԳ.*



### **ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ**

(Տիար Յովհաննէս Պարտազճեանին,  
«Ս. Մեսրոպ Մաշտոց»ի շքանշան ստանալու առթիւ)

Խոր գոհունակութեամբ կարդացինք Քուէլթի եւ Շրջակայից թեմի Ազգային Վարչութեան վկայութիւնը՝ աւելի քան վեց տասնամեակներ շարունակ Քուէլթի հայութեան կեանքէն ներս Ձեր ունեցած նուիրեալ ծառայութեան մա-

սին, յատկապես հայ եկեղեցւոյ ծիսական ու կրօնական դաստիարակութեան մարզերէն ներս:

Կը գնահատենք մեր հոգեւոր արժէքներուն նկատմամբ Ձեր ցուցաբերած սերը, եւ մանաւանդ՝ հոգեւոր երգեցողութեան կալուածէն ներս Ձեր քաղած փորձառութիւնն ու մեր եկեղեցւոյ աւանդութիւնները նորահաս սերունդին փոխանցելու Ձեր նախանձախնդրութիւնը: Արդարեւ, պատանի տարիքին Հալէպի մէջ դպրաց դասի անդամակցութեամբ սկիզբ առած Ձեր եկեղեցանուէր ծառայութեան դաշտը դուք գիտցաք ընդարձակել նախ գործօն դերակատարութիւն ունենալով Քուէյթի Կիրակնօրեայ վարժարանի հիմնադրութեան ու գործունէութեան մէջ, եւ ապա դառնալով անդամ Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ թաղական խորհուրդին, ջանալով միշտ օգտակար հանդիսանալ եկեղեցւոյ ծառայութեան նուիրուած երիտասարդ տարրերուն:

Առ ի գնահատանք հայ եկեղեցւոյ պայծառութեան ի սպաս երկար տարիներու ձեր անխոնջ աշխատանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան

#### Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ ՇՔԱՆՇԱՆ

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի եւ Ձեր հարազատներուն շնորհէ քաջառողջ եւ երկար տարիներ՝ աստուածային բարիքներով լեցուն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակա ի Կաթողիկոսարանիս  
Ի դուռն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին  
Որ յԱնթիլիաս, Լիբանան  
Ի 30-ն Նոյեմբերի, 2013 թուին Քրիստոսի, եւ  
Ի թուին Հայոց ՌՆԿԲ.  
Ընդ համարաւ Շ/ՅԻԷ.*



Թ. Ա. Ր. Գ. Մ. Ա. Ն. Ա. Կ. Ա. Ն.

## ԱՍՏՈՒԾՈՅ ԴԱՌՆԱԼ (Turning to God)

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Շաբաթ, 25 Ապրիլ 2020

Աստուածաբանութիւն դասական դոկտրինան ընթացքին աշակերտներուն կը բացատրեմ, որ մարդաբանութիւնը կարեւոր տեղ ունի աստուածաբանութեան մէջ, որովհետեւ մարդ արարածը աստուածաբանական իրականութիւն է: Որոշ աստուածաբաններ կը խօսին «մարդաբանութեան» եւ կամ «մարդու վարդապետութեան» մասին: Քարլ Պարթի ծանօթ բացատրութեան հետեւողութեամբ, ես մարդաբանութիւնը կը սահմանեմ իբրեւ «աստուածամարդաբանութիւն», մօտեցում մը, որ յստակօրէն ցոյց կու տայ, թէ մենք չենք կրնար զԱստուած ճանչնալ իր էութեան մէջ, այլ՝ յայտնութեան ճամբով եւ յարաբերաբար մարդուն: Նոյնպէս, մարդ էակը, անոր ծագումն ու նպատակը կրնանք հասկնալ միայն յարաբերաբար Աստուծոյ:

Այս օրերուն, այլ հեղինակներու շարքին, վերստին կը կարդամ նախասիրած հեղինակներէս Ֆրանսացի աստուածաբան, իմաստասէր, հնագէտ եւ երկրաբան՝ Pierre Teilhard de Chardin-ի (1885-1955) գործերը: Մօտ 40 տարիներ առաջ կարդացած եմ իր հեղինակած գիրքերէն՝ *The Phenomenon of Man* (1955), *The Divine Milieu* (1957), եւ *The Future of Man* (1946): Վատիկանը լուրջ վերապահութիւն ունեցաւ ստեղծագործութեան առնչուած եղափոխութեան տեսութեան իր դրած շեշտին եւ սկզբնական մեղքին մասին արտայայտած գաղափարներուն համար: Սակայն, ես տպաւորուած էի յատկապէս իր զօրեղ հաստատումով՝ թէ մարդ արարածը հոգեւոր էակ մըն է, ի տարբերութիւն Աստուծոյ ստեղծագործութեան միւս արարածներէն, եւ թէ՛ այս յատկանիշն է, որ իրեն կու տայ մարդ ըլլալու իւրաքանչիւրութիւնը:

Մարդաբանութեան տարբեր դպրոցներ պիտի շարունակեն իրենց հետազոտութիւնն ու վերլուծութիւնները, մարդ արարածի մասին շատ աւելի լայն հասկացողութեան հասնելու համար: Ես կը հաւատամ, որ մարդը բնորոշող յատկութիւնը եւ ստեղծագործութեան մէջ անոր իւրաքանչիւր տեղն ու դերը պէտք է դիտուի աւելի լայն շրջագծի մէջ եւ բարոյագիտական մօտեցումով, ներառեալ գիտութիւններն ու ընկերային գիտութիւնները: Մարդ արարածը ներկայ է թէ՛ բնութեան եւ թէ՛ գեր բնութեան մէջ: Ան կա-

րողութիւնը ունի ինքնիր անձէն վեր բարձրանալու, ինչպէս նաեւ ներքին մղումը՝ դէպի ինքնակեդրոն գոյութիւն: Այս կարողութիւնը յատուկ է մարդկային բնութեան: Քրիստոնէութիւնը կը մերժէ մարդակեդրոն գոյութիւն: Մարդ արարածը հականօրէն կախեալ է Աստուծմէ. միայն Աստուծոյ մէջ ան կրնայ իր ճշմարիտ էութիւնը տեսնել, բնութեամբ եւ շնորհքով իբրեւ աստուածակեդրոն հակ: Մարդ արարածը կը հասկցուի միայն իր անձէն դուրս՝ յարաբերաբար Աստուծոյ:

Անոնք, որոնք ծանօթ են Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի պատմութեան, պիտի յիշեն որ Humanum անունով ծանօթ ուսումնասիրութեանց ծրագիրը կարեւոր տեղ գրաւած էր Խորհուրդի 1965-1975 տասնամեակի օրակարգին վրայ: Ասիկա այն շրջանն է, երբ բուռն բնավէճեր ու քննարկումներ կը կատարուէին մարդկայնացման եւ աշխարհայնացման դիմաց մարդու ինքնըմբռնումին շուրջ: Միջ-եկեղեցական այլ անյետաձգելի առաջնահերթութիւններու պատճառով, այս ծրագիրը ջնջուեցաւ: Մօտ երկու տասնամեակներ ետք, երբ Խորհուրդի ատենապետ ընտրուեցայ, կեանքի աստուածաբանութեան շրջագիծէն ներս յատուկ ծրագիր մը պահանջեցի, մարդաբանութեան վրայ կեդրոնանալու իբրեւ կարեւոր աստուածաբանական եւ բարոյագիտական խնդիր: Այսօր դարձեալ նոյն առաջարկը կը ներկայացնեմ: Աւելի քան երբեք, մարդաբանութիւնը կը մնայ առաջնահերթ խնդիր, որովհետեւ ան սերտօրէն առնչուած է Աստուած-մարդ, մարդ-ստեղծագործութիւն (կենսոլորտ) յարաբերութեան հետ: Ի՞նչ կը նշանակէ մարդ ըլլալ յարափոփոխ աշխարհի մը մէջ. ի՞նչ է մարդու կոչումը: Կրօնն ու գիտութիւնը պէտք է քննարկեն այս հարցը նոր բացայայտումներու, իրականութիւններու եւ տագնապներու լոյսին տակ:

## Կիրակի, 26 Ապրիլ 2020

Նշանաւոր տնտեսագէտ մը ըսած է, թէ համաճարակը գամ մըն է միտուած համաշխարհայնացումի դադարին վրայ: Չեմ բաժներ այս տեսակէտը: 1990-ի վերջերը, դասախօսութեան մը մէջ, լայնօրէն բացատրեցի Համաշխարհայնացումը բնորոշող հակասութիւնները, անոր առաւելութիւններն ու վտանգները, շեշտելով միաժամանակ թէ համաշխարհայնացումը անշրջելի ընթացք մըն է:

Ներկայ տագնապը յստակօրէն կը պարզէ համաշխարհայնացման երկդիմի կողմերը: Այսպէս, մէկ կողմէն, անցանկապատ սահմանները եւ հաղորդակցութեան ճարտարագիտութիւնը հսկայ կարելիութիւններ ընձեռած են տեղեկութիւններ քաղելու ու փոխանցելու եւ համակարգելու բժշկական ճիգերը՝ պայքարելու համար վիրուսին դէմ, ինչպէս նաեւ՝ մարդոց օգնելու իրենց տուններէն աշխատելու, մասնակցելու եկեղեցական արարողութիւններու եւ լայն չափով դիւրացնելու մարդոց առօրեայ կեանքին առնչուած հանրային ծառայութիւնները: Միւս կողմէն, վիրուս մը, որոշ վայրի մէջ

յայտնուած, ազատ սահմաններու եւ համաշխարհային ցանցին ընձեռած լայն կարելիութիւններուն պատճառով արագօրէն տարածուեցաւ ամբողջ աշխարհի մէջ վերածուելով ահաւոր համաճարակի: Համաշխարհայնացման զօրեղ ազդեցութեան հետեւանքով, վերջին տասնամեակներուն, համաշխարհային հարցերը լուծելու համար ազգեր դիմեցին հասարակաց ռազմավարութեան: Միաժամանակ, համաշխարհայնացումը մարդիկ իրենց միջավայրէն, եւ ազգեր իրենց սահմաններէն դուրս բերելով, բեւեռացում ու բաժանում յառաջացուց: Համաշխարհայնացումը զօրացուց փոխադարձ գործակցութիւնը եւ խորացուց փոխյարաբերութիւնը. ան նաեւ յառաջացուց ուժի կեդրոններ, որոնք կը հակակշռեն տնտեսութիւնը եւ ճարտարագիտութիւնը՝ ճնշելով ու ենթարկելով փոքր ազգերը: Կարելի է երկարել համաշխարհայնացումի ստեղծած հակասութիւններու շարքը:

«Եկեղեցին Ժողովուրդին Տանիլ» խորագիրը կրող իմ գիրքիս մէջ, ակնարկելով համաշխարհայնացումին, գրած եմ. «Աշխարհը օր ըստ օրէ առաւել եւս դէպի համաշխարհայնացում, համագործակցութիւն եւ փոխյարակցութիւն կ'ընթանայ: Մենք չենք կրնար կասեցնել համաշխարհայնացումի թափանցումը մեր կեանքէն ներս: Մեր անհատական եւ համայնական կեանքի բոլոր երեւոյթներուն վրայ համաշխարհայնացումին ունեցած անդրադարձը մեծապէս զգալի է: Տեղի ունեցող արմատական փոփոխութեան անդրադարձները եւ չնախատեսուած զարգացումները ընկերութեան գրեթէ բոլոր մարզերուն մէջ, պիտի շարունակեն ազդել մեր անհատական թէ հաւաքական կեանքին վրայ: Սակայն, մենք պէտք չէ կուրօրէն ընկալենք համաշխարհայնացումի հետեւանքով յառաջացած փոփոխութիւնները, արժէքները, կերպերը եւ յարացոյցները: Պէտք է գիտնանք քննական մօտեցումով եւ պատասխանատուութեամբ վարուել համաշխարհայնացումին հետ: Իրականութեան մէջ, քայլ պահելը համաշխարհայնացումի մշակոյթին հետ արկածախնդրութիւն է, որովհետեւ մէկ կողմէն ան կը մօտեցնէ, միւս կողմէն կը հեռացնէ, մէկ կողմէն կը խեղաթիւրէ, միւս կողմէն, սակայն, կը հարստացընէ» (էջ 216):

Համաշխարհայնացումը համաշխարհային հաւաքական պատասխանատուութեան կը հրաւիրէ: Փաստօրէն, ազգեր ձախողեցան հաւաքական պատասխանատուութեամբ գործել՝ իբրեւ համաշխարհային մէկ համայնք յարաբերաբար համաշխարհային տազնապներուն, մասնաւորաբար Քովիտ-19 համաճարակին դժով: Արդեօք համաճարակը ներկայ ընկերութիւնը պիտի առաջնորդէ դէպի ապա-ապաշխարհայնացո՞ւմ, թէ դէպի վերա-համաշխարհայնացում: Արդեօք համաշխարհայնացումը ժամանակաւոր ալիք մըն է, որ շուտով պիտի փարատի: «Չափազանցուած համաշխարհայնացումը» որ ճարտարագիտական հրաշքներ յառաջացուց, օրհնութի՞ւն է, թէ վտանգալից չափազանցութիւն: Արդեօք ազգային, ժողովրդային, ցեղային եւ կրօնական վերածնունդը նոր հնչեղութիւն, ճիւղաւորում կամ ուղղութիւն պիտի տա՞ն համաշխարհայնացումին, որ դարձած է կենսատճ ու մշակոյթ, որ պիտի շար-

ունակէ ծաւալիլ իր հակասութիւններով ու ծայրայեղութիւններով: Այս հարցումներն ու անոնց պատասխանները կը կարօտին խոր քննարկումներու:

Ես կը հաւատամ, որ համաշխարհայնացումը պէտք է վերափոխուի եւ մարդկայնացուի: Կրօններ մտահոգ էին համաշխարհայնացումին ստեղծելիք հետեւանքներով, եւ հետեւաբար լայն չափով անոնք անտեսած են զայն: Սակայն, կը խորհիմ, թէ փոխանակ անտեսելու, կրօններ պէտք է համաշխարհայնացման տեսլական մը յառաջացնեն, որ կը հետապնդէ չորս հիմնական նպատակներ:— 1.— Համաշխարհայնացումի նոր տեսլականը պէտք է համաշխարհայինի շրջանակի մէջ տեղայինի ինքնութիւնը պահպանէ: 2.— Ան պէտք է միասին գործելու անհրաժեշտութիւնը շեշտէ, համագործակցութեան թափանցիկ ռազմավարութիւններ զարգացնելով՝ հասարակաց օրակարգի մը շուրջ: 3.— Ան պէտք է համաշխարհայնացումը վերածէ ժողովրդակեղրոն եւ դէպի ժողովուրդ ուղղուող գործընթացի: 4.— Ան պէտք է յատուկ կարեւորութիւն տայ հասարակաց բարոյագիտական արժէքներու նկատմամբ: Հարկ է, որ համաշխարհայնացումը հիմնական բարոյագիտական արժէքներով առաջնորդուի. այլապէս անկէ յառաջացած հակադրութիւնները մնայուն չափանիշերու պիտի վերածուին եւ շփոթ ու անհաւասարութիւն ստեղծեն՝ մարդկութիւնը առաջնորդելով դէպի անորոշ ապագայ: Այլ դասախօսութեան մը մէջ նաեւ դիտել տուած եմ, թէ այլ պատճառներու կարգին, կրօնական ծայրայեղութիւնը հակադրեցութիւն մըն է համաշխարհային մշակոյթի մը, որ կը կործանէ տեղական մշակոյթները ու ընկերութիւնները եւ կ'անտեսէ հիմնական բարոյագիտական արժէքները:

Պատմութեան ընթացքին, քրիստոնէութիւնը բազմաթիւ մշակութային, բարոյագիտական, փիլիսոփայական, ընկերային, քաղաքական եւ աշխարհական մտածողութեանց հետ, ներառեալ մարդկայնականութեան ու բանապաշտութեան, շփումներու ընթացքին կրցած է գտնել միջին եզր մը, (modus vivendi) պաշտպանելով իր էական ճշմարտութիւններն ու հիմնական արժէքները: Եկեղեցին՝ ինքզինք համաշխարհայնացումին դէմ պաշտպանելու համար, պէտք չէ բարոյագիտական, վարդապետական կամ հոգեւոր «հակամարմիններ» ստեղծէ: Այս մօտեցումը ապահով դարման մը չէ: Ընդհակառակը, եկեղեցին պէտք է քննական եւ կառուցողական փոխգործակցութեան-փոխյարաբերութեան սկսի աշխարհայնացումին հետ, առանց նահանջելու իր հիմնական արժէքներէն եւ մարգարէական առաքելութենէն:

## Երկուշաբթի 27 Ապրիլ 2020

Ժամանակ առ ժամանակ ակնարկ մը կը նետեմ ընկերային ցանցերուն վրայ, իրագեկ դառնալու միջազգային թէ շրջանային կարեւոր իրադարձութիւններու, որոնք յաճախ տեղ կը գտնեն այնտեղ, եւ այլապէս կրնան ուշադրութենէս վրիպած ըլլալ:

Այս առաւօտ յօդուած մը կարդացի, որուն համաձայն, միլիոններ կը

ծախսուհին քաղաքական, տնտեսական, ելեմտական եւ հանրային ղեկավարող անվտանգութեան համար: Վստահաբար, պիլիոններ ալ կը ծախսուին հաւաքական անվտանգութեան համար. օղակայաններ, հաստատութիւններ, կառավարական գրասենեակներ եւ հանրային կեդրոններ պաշտպանուած են տեսանելի եւ անտեսանելի միջոցներով: Անվտանգութիւնը դարձած է մարդոց առաջնահերթ մտահոգութիւնը, եւ ապահովութեան համար աշխարհի մէջ ամէնուրեք տեսախցիկներ եւ լուսանկարչական գործիքներ զետեղուած են: Անվտանգութեան իսկական գաղափարը ու փորձառութիւնը ունենալու համար, մարդ պէտք է այցելէ Քորէական Ապառազմային Գօտի՝ (DMZ) Հիւսիսային եւ հարաւային Քորէաներու միջեւ անջատման գօտին: 1994-ին, Հարաւային Քորէայի զինուորական իշխանութիւններու յատուկ արտօնութեամբ, Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի ատենապետի հանգամանքով, Հարաւային Քորէայի Եկեղեցիներու Խորհուրդին Ընդհ. Քարտուղարին հետ միասին գրեթէ մէկ ժամ անցուցի յիշեալ գօտիին մէջ: Ասիկա աշխարհի ամենէն սարսափազդու վայրը կը համարուի:

Պատմութեան ընթացքին մարդ արարածը բազմաթիւ գործիքներ հնարած է ինքնապաշտպանութեան համար: Առիթով մը, երբ առեւտրական մը մտահոգութիւն յայտնեց իր հաստատութեան ապահովութեան համար, սփոփեցի զինք ըսելով, որ շմտահոգուի, որովհետեւ ամենագորեղ նկարչական հսկիչ մեքենան երկինքի մէջ կը գտնուի, որ ամենայն կատարելութեամբ մեզ կը դիտէ, կը հետեւի մեր շարժումներուն եւ կը պաշտպանէ մեզ...:

Մարդկութիւնը կը դիմագրաւէ անյաղթահարելի թշնամի մը՝ փոքր վիրուս մը, եւ մեր ամենաարդի առողջապահական սարքերը, հսկայ տնտեսական ու մարդկային միջոցները անկարող են ապահովելու մարդուն անվտանգութիւնը: Աշխարհի ամենակատարեալ ճարտարագիտական գիւտերն ու միջոցները կարողութիւնը չունին կասեցնելու աւերն ու ողբերգութիւնը, զորս կը գործէ այս անտեսանելի ուժը: Ոչ ոք գիտէ թէ որքան ժամանակ պիտի տեւէ այս թշնամիին տիրապետութիւնը: Պատմութիւնը անգամ մը եւս կը յիշեցնէ մեզի, որ մարդկութիւնը միշտ անապահով պիտի զգայ բոլոր տեսակի չարիքներուն ու տագնապներուն դիմաց, եթէ ան ապաւինի սոսկ մարդկային ուժին եւ մարդուն հնարած միջոցներուն, անտեսելով Աստուծոյ կեդրոնական տեղը մարդկային կեանքին մէջ:

Բոլոր ընկերութիւնները՝ հարուստ թէ աղքատ, զօրաւոր թէ տկար, հաւասարապէս անապահով կը զգան: Անվտանգութեան մտահոգութիւնը պէտք չէ օրինականացնել եւ չարաշահել՝ նպատակ ունենալով հակակշռի տակ առնելու աշխարհի բոլոր միջոցները, միջավայրը եւ տնտեսութիւնը եւ թոյլատրելով համաշխարհային ուժերուն, շահագործելու փոքր ազգերը: Համաճարակին ստեղծած անապահովութիւնը մարդիկը առաւել եւս մօտեցուց կրօնին՝ իբրեւ ապահով ապաստան: Կը յուսամ, որ աշխարհի քաղաքական ղեկավարները պիտի անդրադառնան, որ ազգային անվտանգութիւնը, տնտեսական զօրութիւնը, զինուորական գերազանցութիւնը եւ աշխարհաքա-



ղաքական շահերը, որոնք համաշխարհայնացած աշխարհի նոր կուռքերն են, անկարող են մնայուն ու ամբողջական ապահովութիւն տալ մարդուն: Մարդկութիւնը պէտք է գիտակցի, որ իր իսկական ապահովութիւնը կախեալ է Աստուծոյ հանդէպ իր ունեցած հաւատարմութենէն:

### Երեւոյթ, 28 Ապրիլ 2020

**Ս. Ներսէս Ընորհալիին** նկատմամբ մեր ժողովուրդի ունեցած ամուր կապուածութենէն մղուած՝ անոր աղօթքներուն ու շարականներուն կեդրոնական տեղ տրուած է այս օրերուն մանաւանդ, մեր եկեղեցւոյ ամենօրեայ արարողութիւններուն ուղղակի սփռումներուն մէջ: **Ս. Ներսէս Ընորհալիին** (1100–1173) հայ եկեղեցւոյ ամենածանօթ կաթողիկոսներէն մէկն է: Աստուածաբանական, բանաստեղծական եւ միջ-եկեղեցական մարզէն ներս իր ունեցած հետաքրքրութեան ու ներդրումի կողքին, ան օժտուած էր նաեւ երաժշտական կարողութիւններով:

Շնորհալիին գրած ու յօրինած է մեր եկեղեցւոյ աղօթքներէն ու շարականներէն կարեւոր բաժին մը: «Հաւատով Խոստովանիմ»ը, որ Մեծ Պահոց ընթացքին կ'ըսուի, իր ամենաժողովրդական աղօթքներէն մէկն է: 24 համարներէ բաղկացած այս աղօթքը ցարդ թարգմանուած է 33 լեզուներու (առաջին հրատարակութիւնը՝ 1862-ին Վիեննա, եւ 2009-ին, Անթիլիաս): Աղօթքին 11-րդ համարը սովորաբար կ'արտասանուի համաժողովներու կամ հաւաքական աշխատանքային նիստերու սկսելէ առաջ. «Իմաստութիւն Հօր Յիսուս, տո՛ւր ինձ իմաստութիւն՝ զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա՛լ զիս, եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս»: (Յիսուս Քրիստոս, Հօրը իմաստութիւնը, իմաստութի՛ւն տուր ինձ ի՛նչ որ ամէն ժամ բարին խորհիմ, խօսիմ եւ գործեմ. չար խորհուրդներէ, խօսքերէ եւ գործերէ փրկէ՛ զիս. եւ ողորմի՛ր քու արարածներուդ եւ ինձ ի՛նչ բազմամեղիս):

15-րդ համարը կ'աղօթենք քննալէ առաջ. «Պահապան ամենայնի Քրիստոս, աջ քո հովանի լիցի ի վերայ իմ, ի տուէ եւ ի գիշերի, ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ, ի ննջել եւ ի յառնել, զի մի՛ երբեք սասանեցայց, եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս»: (Յիսուս Քրիստոս, որ բոլորին պահապանն էս, քու աջը թող հովանի՛ ըլլայ իմ վրաս՝ գիշեր ու ցերեկ, տան մէջ թէ՛ ճանապարհին, քունի մէջ թէ՛ արթուն, որպէսզի երբե՛ք չսասանիմ. եւ ողորմի՛ր քու արարածներուդ եւ ինձ ի՛նչ բազմամեղիս):

Փորձութեան ու դժուարութեան այս ծանր օրերուն, որքա՛ն կարիքը ունինք աղօթքի փրկարար զօրութեան, որպէսզի նորոգուի մեր կեանքը, լուսաւորուի մեր միտքը, աշխուժանայ մեր գործը եւ ի բարին առաջնորդուինք մեր հոգեւոր ճանապարհորդութեան մէջ:

«Ս. Ներսէս Ընորհալիին եւ Եկեղեցւոյ Միութիւնը» (St. Nerses the Gracious and Church Unity 2010 Անթիլիաս) գիրքիս մէջ, քննարկած եմ անոր

միջ-եկեղեցական մօտեցումներն ու լայնախոհակամբությունը եւ աստուածաբանական խորաթափանց ու նպատակասլաց հեռանկարները՝ ի խնդիր միջ-եկեղեցական աւելի լայն համագործակցութեան: Շնորհալին միջ-եկեղեցական օրինակելի տիպար է եւ բոլոր ժամանակներու համար սուրբ մը: Անոնք, որոնք լրջօրէն հետաքրքրուած են աստուածաբանական երկխօսութեամբ եւ մասնաւորապէս վերականգնելու կոտորուած միութիւնը Արեւելեան Ուղղափառ Ոչ-Քաղկեդոնական եւ Արեւելեան Ուղղափառ-Քաղկեդոնական եկեղեցիներու միջեւ, պէտք է կարդան Շնորհալին վարդապետական ճառերը, հովուական նամակները եւ եկեղեցւոյ միութեան առնչուած նամակները, որոնց մէջ ան յստակօրէն կը նկարագրէ եւ կանոնաւոր կերպով կը ներկայացնէ կարելի բոլոր միջոցները՝ հասնելու համար եկեղեցւոյ իսկական միութեան:

1972-ին, մինչ կ'աշխատէի վերոյիշեալ գիրքիս վրայ, իբրեւ աւարտաճառ Աստուածաբանութեան Մագիստրոս աստիճանի, Օքսֆորտի մէջ հանդիպեցայ Charles Dowsett-ին որ Օքսֆորտ Համալսարանի Հայկազիտական Ուսմանց ամպիոնի առաջին փրոֆեսորն էր: Խնդրեցի իր ցուցմունքը Շնորհալիի աստուածաբանական ճառերն ու նամակագրութիւնները գրաբարէ անգլերէնի թարգմանութեան վերաբերեալ: Օր մը, մինչ կը բացատրէր դասական հայերէնի տարբեր դպրոցներուն առանձնայատկութիւնները եւ զանոնք ճիշդ ու հարազատ ձեւով անգլերէնի թարգմանելու կերպերը, ան ըսաւ որ հայ ժողովուրդը հին գրականութեան հսկայ ոսկի հանք մը ունի, որ հարկ է ըստ արժանւոյն պեղել եւ ուսումնասիրել, որպէս կենսական մէկ մասը հնագոյն քաղաքակրթութեան եւ Մերձաւոր Արեւելքի պատմութեան: Ասիկա մարտահրաւէր մըն է, որուն պէտք է լրջօրէն մօտենան մեր բանասէրները:

## Զորեգաբթի, 29 Ապրիլ 2020

Ներկայ համաճարակը յստակօրէն պարզեց, թէ կ'ապրինք աշխարհի մը մէջ, ուր կեանքը իր բոլոր խաւերով ու արտայայտութիւններով ենթակայ է մնայուն սպառնալիքի: Թէեւ գիտութիւնն ու ճարտարարուեստը լայն պատեհութիւններ կու տան մարդուն՝ պաշտպանելու կեանքը, միևս կողմէ, սակայն, անոնք նաեւ մեծ վտանգներու ենթակայ կը դարձնեն մեզ: Կեանքին սպառնացող ուժեր, կեանքը այլակերպող եւ ապականող կենցաղակերպեր ու երեւոյթներ յաճախ գրաւիչ պիտակներով եւ հեշտ միջոցներով կը շրջապատեն մեզ: Կեանքը ինքնին բարոյապէս, հոգեւորապէս, ֆիզիքապէս եւ կենսոլորտային իմաստով վտանգուած է: Այլ տազնապներու կողքին, կլիմայական փոփոխութիւնը, քորոնա վիրուսը եւ ընտանեկան կեանքի ու համայնական արժէքներու անկումը, փլուզումի եզրին գտնուող աշխարհի մը ախտանիշերն են:

Կեանքը ստեղծուած է Աստուծոյ կողմէ. անիկա Աստուծոյ պարգեւն է: Աստուած է տէրը, պաշտպանն ու փրկիչը կեանքին: Կեանքի սրբութիւնը,

ամբողջականութիւնը, արժանապատուութիւնն ու անբռնաբարելիութիւնը հիմնական յատկանիշերն են, որոնք պէտք է պահպանուին ու պաշտպանուին: Նոր Կտակարանի ուսուցման համաձայն, ապականուած կեանքը Քրիստոսով վերստեղծուեցաւ: Քրիստոս աշխարհ եկաւ մարդուն կեանք տալու համար: Քրիստոսով «մահէն կեանքի անցած եմք» (Ա.ՅՏ 3:14): Քրիստոսով տրուած կեանքը լեցուն կեանք է (ՅՏ 10:10): Քրիստոս նոր կեանքն իսկ է. Քրիստոսով կեանքը, որ սկիզբ կ'առնէ մկրտութեամբ՝ մեղքէն եւ չար ուժերէ ազատագրումն է:

Կեանքը սուրբ է՝ ո՛չ միայն որովհետեւ զայն պարզեւողը Սուրբ է, այլ որովհետեւ անոր նպատակը՝ Աստուծոյ թագաւորութեան հաստատումը, սուրբ է: Կեանքը ո՛չ միայն աստուածային պարզեւ մըն է, որ պէտք է պահպանուի, այլ կոչում մը՝ որ պէտք է շարունակուի Աստուծոյ պատուէրին հաւատարմութեամբ: Կեանքը աննպատակ իրողութիւն մը չէ. Աստուծմէ անջատ՝ կեանքը ո՛չ գոյութիւն, ո՛չ իմաստ եւ ոչ ալ նպատակ կրնայ ունենալ: Եսակեդրոն կեանքը խոտոր կը համեմատի քրիստոնէական հաւատքին, որ կեանքը կ'ըմբռնէ իբրեւ աստուածակեդրոն եւ Աստուածանպատակ իրականութիւն:

Աստուածաշունչին համաձայն, կեանքը պէտք է նկատուի համապարփակ մէկ ամբողջութիւն: Կեանքի բոլոր ոլորտներն ու արտայայտութիւնները սերտօրէն ընդելուզուած են, եւ կը կազմեն մէկ եւ համահունչ ամբողջութիւն մը: Քրիստոսի մարդեղութեան նպատակը վերականգնել էր կեանքի ամբողջութիւնն ու արժանապատուութիւնը՝ այնպէս, ինչպէս ստեղծուած էր Աստուծոյ կողմէ:

Այսօր, կեանքի որակը կը չափուի իր արտադրողական կարողականութեամբ. շահը, արագութիւնն ու ինքնաբաւութիւնը դարձած են կեանքի չափանիշ՝ ի հեճուկս որակին, ստեղծագործական ոգիին եւ բարոյական արժէքներուն: Մարդկային կեանքը հետզհետէ աւելի կ'արժեզրկուի՝ տեղի տալով սպառողական մշակոյթին եւ նիւթական հարստութեան: Հսկայական գումարները, որոնք կ'օգտագործուին գինուորական հետազօտութիւններու համար, պէտք է յատկացուին այնպիսի հետազօտական ծրագիրներու, որոնք կը նպաստեն կեանքի որակաւորման, կանխարգիլելով հիւանդութիւնները, եւ նուազեցնելով աղքատութիւնն ու տառապանքը: Այս իմաստով, Քովիտ-19 համաճարակի տարածումը արթնութեան կոչ մըն է: Եթէ զայն անտեսենք, անհակազիւ մարդակեդրոնութիւնը պիտի կործանէ կեանքը իր ամբողջութեանը մէջ:

Արդարեւ, կեանքին սպառնացող վտանգներուն դէմ պայքարը կրօններու կոչումին անբաժանելի մասը կը կազմէ: Կեանքին, բանական թէ՛ ոչ-բանական, մարդակեդրոն մօտեցումը խոտոր կը համեմատի կրօններու հոգեւոր եւ բարոյագիտական ուսուցումներուն: Համաճարակը նաեւ յառաջացուց կեանքին առնչուած բարոյագիտական, բժշկական եւ ճարտարագիտական էական հարցեր, որոնք կը կարօտին խոր ուսումնասիրութեան եւ քննար-

կումի: Միաժամանակ, կարեւոր իրազործումները, որոնք կ'արձանագրուին ծինային եւ կենսաճարտարագիտութեան մարզերէն ներս, լուրջ հարցադրումներ կը յառաջացնեն յատկապէս կրօններու համար: Հարկ է, որ կրօններ զարգացնեն կեանքի այնպիսի աստուածաբանութիւն մը, որ դրական ու շինիչ գործակցութիւն յառաջացնէ կրօնքին, բարոյագիտութեան, կենսաճարտարարուեստի, կենսաբարոյագիտութեան, սեռայնականութեան եւ մարդկային իրաւունքներուն միջեւ: Նման հարցեր, իմ կարծիքով, կարեւոր տեղ պէտք է գրաւեն միջ-կրօնական երկխօսութեան օրակարգին վրայ:

Կեանքի մշակոյթ զարգացնելը, կրօններու, մշակոյթներու եւ պետութիւններու համար պէտք է դառնայ առաջնահերթ մտահոգութիւն: Հրամայական անհրաժեշտութիւն է լծուիլ համաշխարհային գործակցութեան, նպատակ ունենալով պահպանել կեանքը՝ մարդկային, կենդանական եւ կենսոլորտային երեսներով:

### Հիմնգշարթի, 30 Ապրիլ 2020

Քորոնա վիրուսին դէմ մղուած համաշխարհային պայքարի այս օրերուն, խորապէս կ'ազդուիմ ականջալուր դառնալով այն տխուր տեղեկութիւններուն, որոնք կը վերաբերին յուսահատ մարդոց, խափանուած երազներու, չիրականացած ծրագիրներու եւ չյազեցած կեանքերու: Մարդիկ հարց կու տան, թէ արդեօք որեւէ յոյս կա՞յ յաղթահարելու այս համաճարակը, ի շարս բազմաթիւ տագնապներու, զորս մարդկութիւնը կը դիմակալէ աշխարհի տարածքին: Վստահ եմ, որ բազմաթիւ մարդիկ յուսահատութեան մատնուած՝ ջղազրգիռ օրեր եւ անքուն գիշերներ կ'անցընեն: Միւս կողմէ, կը սփոփուիմ տեսնելով յոյսի նշաններ՝ մասնաւորաբար բժիշկներու, հիւանդապահակներու եւ հոգեւոր ու համայնքային ղեկավարներու նուիրեալ աշխատանքներուն ընդմէջէն:

Յոյսը առանցքային տեղ կը գրաւէ Աստուածաշունչի մէջ: Հին Կտակարանը Մեսիայի գալստեան յոյսի պատմութիւնն է. Նոր Կտակարանը Մեսիայի գալստեան պատմութիւնն է: Քրիստոնեաներուն համար, յոյսը տեսութիւն մը չէ. մարմնացեալ Քրիստոսի գալուստը յոյսի իրականացումն է: Յոյսը՝ աշխարհին տրուած նոր կեանքին մէջ արմատացած է շնորհիւ Քրիստոսի խաչին եւ յարութեան: Քրիստոս աշխարհի յոյսն է, ով որ հաւատայ իրեն՝ պիտի չկորսուի (Ղկ 2.25-35): Եկեղեցին յոյսի համայնք մըն է: Պատմութեան ընթացքին մեծ դէմքեր Քրիստոսի յոյսով զօրացած, ահաւոր դժուարութիւններ դիմագրաւեցին եւ յեղաշրջումներ կատարեցին, վկայեցին, ծառայեցին եւ նոյնիսկ իրենց արիւնը թափեցին: Քրիստոնեան յոյսով կը սպասէ Քրիստոսի երկրորդ գալուստը, եւ «Յոյսը երբեք ամօթով չի ձգեր» (Հռ 5.5): Սուրբ պատարագը ո՛չ միայն կը յիշեցնէ Քրիստոսի Վերջին ընթրիքը, այլ նաեւ կը պատրաստէ, կը ծանուցէ եւ կը նախատեսէ Քրիստոսի երկրորդ գալուստը: Անիկա յոյսով զօրացած հաւատքի արտայայտութիւնն է:

Միջ-եկեղեցական համաժողովներու նիւթերը միշտ համապատասխան եղած են տուեալ ժամանակին աշխարհի դիմագրաւած մտահոգութիւններուն եւ մարտահրաւէրներուն: Անոնք որոնք մասնակցութիւն բերած են միջ-եկեղեցական շարժումին, պիտի յիշեն, թէ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի երկրորդ համաժողովի նիւթն էր «Քրիստոս՝ Աշխարհի Յոյսը» (1954, Evanston, USA): Համաճարակի այս օրերուն, յոյսը համայն մարդկութեան աղօթքներուն առանցքը կը կազմէ: Համաշխարհային ցնցումին մէջ յոյսին ապաւինիլը, իրաւամբ խոր հաւատքի եւ հոգեւոր գորութեան արտայայտութիւնն է: Վախին դիմաց, Քրիստոսի բերած յոյսը կը զօրացնէ քրիստոնեան՝ քաջութեամբ պայքարելու զինք տագնապեցնող խնդիրներուն դէմ: Յոյսը կը զօրացնէ մարդը պայքարելու աշխարհի խաւար ուժերուն դէմ եւ չնուաճուելու անոնցմէ: Յոյսը կը քաջալերէ մարդը շրջանցելու զինք կաշկանդող անորոշութիւններն ու յուսահատութիւնը:

Քրիստոս միակ յոյսն է անոնց, որոնք ուխտած են հետեւիլ իրեն: Եկեղեցին, իր հովուական եւ ծառայական առաքելութեամբ, կոչուած է յոյսի փարոսը դառնալու, նոյնանալով ժողովուրդի կարիքներուն ու մտահոգութիւններուն հետ:

**Այս առաւօտ եկեղեցւոյ մէջ, արարողութեան ընթացքին աղօթեցինք. –**

«Տէ՛ր, դո՛ւն ես աղբիւրը յոյսին: Ատելութեան մէջ, սիրոյ գորութեամբ խրախուսուած ենք: Վախի մէջ, հաւատքի գորութեամբ գօտեպնդուած ենք: Յուսահատութեան մէջ, յոյսի գորութեամբ հզօրացած ենք»:

Մարդկային կեանքը իր ճշմարիտ ինքնութեան եւ իսկական նպատակին կը հասնի, երբ հաւատքով կը խրախուսուի, սիրով կ'արտայայտուի եւ Քրիստոսի յոյսով կը հաստատուի:

**Քրիստոնեայ ըլլալ կը նշանակէ մերժել յուսահատութիւնը:**

**Քրիստոսի յուսալը, կը փոխակերպէ մարդկային կեանքը:**

## Ուրբաթ, 1 Մայիս 2020

Քորոնա վիրուսին դէմ պայքարը համաշխարհային պատերազմի վերածուած է: Մասնագէտներու համաձայն, անիկա դիւրաւ յաղթահարելի թշնամի մը պիտի չըլլայ: Այս պատերազմը, բոլոր պատերազմներու պէս, հերոսներ ունի: Աշխարհի բոլոր կողմերը, բժիշկներ, հիւանդապահուհիներ շտապ օգնութեան եւ առողջապահութեան մարզէն ներս աշխատողներ եւ կամաւորներ վիրուսային ռազմադաշտին առաջնագիծին վրայ են, գիշեր թէ ցերեկ ծառայելով վարակուածներուն՝ վտանգի ենթարկելով իրենց կեանքերը: Անոնց կողքին, ոստիկանութեան պաշտօնեաները կարգ ու կանոն կը պահեն խճողուած հիւանդանոցներու եւ առողջապահական կեդրոններու շուրջ, եւ թղթակիցներն ու լրագրողները իրենց կարգին, իբրեւ ականատես վկաններ, մարդկութեան կը պարզեն օրուան իրավիճակը:

Յիշեալ անձերը, պարզապէս իրենց գործը չէ որ կը կատարեն, անոնք

իրենց առողջութիւնը կը վտանգեն ուրիշներու կեանքերը փրկելու համար: Խորքին մէջ, վարակուած մը բուժելը, վարակուածներով լեցուն խումբերու կարգ-կանոն պահելը, օրուան պատկերը կամ իրավիճակը ներկայացնելը պայքարի առաջնագիծին վրայ, ինքնին առաքելութիւն մըն է: Այս անձերը հերոսութեան մարմնացումն են եւ արժանի՝ մեր բարձր գնահատանքին ու երախտագիտութեան: Ինչպէս Նիլ Եորքի կառավարիչը հարց տուաւ երէկ, արդեօք ի՞նչ պիտի պատահէր քորոնա վիրուսէն վարակուած հազարաւոր մարդոց, եթէ բժիշկները, հիւանդապահուհիները, առողջապահութեան աշխատակիցներն ու կացութեան մասին առաջին արձագանգողները տունը մնային: Անկասկած, անոնք մարդկութեան ազնուագոյններն են: Իրենց դառն փորձառութեան մասին այս մարդոց տուած վկայութիւնները յուզիչ են եւ սրտաճմրիկ:

Ահաւասիկ վկաներուն կարգ մը պատմութիւնները, զորս առցանց լրատուամիջոցներէն քաղած եմ.–

«Իմ ամբողջ կեանքս առողջապահութեան մարզին մէջ անցուցած եմ, բայց երբեք այնքան դառն փորձառութիւն չեմ ունեցած, որքան այս համաճարակին ստեղծած կացութիւնը» (բժիշկ մը):

«Այժմ կ'անդրադառնամ վարակուածներուն ծառայելու խոր իմաստին ու հրամայական կարեւորութեան» (հիւանդապահուհի մը):

«Կեանքիս մէջ երբեք ականատես չեմ եղած նման սրտաճմրիկ տեսարաններու» (ոստիկան մը):

«Կարծես թղթակից մը չըլլայի, այլ՝ բժիշկ մը, որ կը փորձէր բուժում գտնել վիրուսէն վարակուածներուն» (թղթակից մը):

«Որոշ պահերու, ո՛չ թէ պարզապէս կ'օգնէի բժիշկներուն եւ կը ծառայէի վարակուածներուն, այլ նաեւ կ'աղօթէի անոնց համար» (հիւանդապահուհի մը):

Այս առաւօտ ես ալ աղօթեցի անոնց համար, եւ թելադրեցի մեր թեմերուն, ծովներուն, եկեղեցականներուն եւ ժողովուրդին, աղօթելու բոլոր վարակուածներուն, ինչպէս նաեւ՝ բոլոր առողջապահութեան մարզէն ներս գործողներուն եւ թղթակիցներուն համար: Թելադրեցի նաեւ, որ հրապարակաւ իրենց բարձր գնահատանքն ու խոր երախտագիտութիւնը յայտնեն անոնց նուիրեալ ծառայութեան համար: Արդարեւ իրենց անձնուիրութեամբ ու ծառայութեամբ, այս անձերը նոր օրերու հերոսներ են:

Անգլերէնէ թարգմանեց՝  
ՄԱԿԱՐ ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆ

(Շար. 6)

Մ Ե Կ Ն Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն
-------------------------

## Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Յ Ո Վ Հ Ա Ն Ն Ո Ւ Ա Բ Ե Տ Ա Ր Ա Ն Ի (3.6-15)

«Որովհետև մարմինն էն ծնածը մարմին է, իսկ հոգին էն ծնածը՝ հոգի»  
(Յհ 3.6):

1) Նախորդ համարը կը խօսի ջուրէն ու Հոգիէն ծնելու մասին, եւ ըսինք թէ ատիկա ակնարկութիւն է մկրտութեան խորհուրդին, որուն կրնային մասնակցիլ թէ՛ մանուկները եւ թէ՛ չափահասները: Այս հաստատումով, Տէրը կը յայտնէ թէ մարմինէն (իր ծնողէն) ծնածը մարմին կը մնայ, այնքան ատեն երբ չէ ծնած Սուրբ Հոգիէն: Երբ ծնի Սուրբ Հոգիէն՝ կը դառնայ հոգի, որովհետեւ «Հոգիէն ծնածը՝ հոգի է»: Մարդս մարմինի կտոր մըն է, միսի կոյտ մըն է, ջիղերու հաւաքածոյ մըն է, ճիշդ անասունի նման կարծէք, բայց երբ ջուրէն ու Սուրբ Հոգիէն ծնի՝ հոգի կը դառնայ, հոգեւոր կը դառնայ, ճիշդ Քրիստոսի նման. «Առաջին մարդը՝ Ադամ, ստեղծուեցաւ իբրեւ շնչաւոր էակ, մինչ երկրորդ Ադամը՝ Քրիստոս, կենդանարար հոգի է» (Ա.Կր 15.45):

2) Երբ Տէրը կ'ըսէ՝ «մարմինն էն ծնածը մարմին է», ըսել կ'ուզէ, թէ այն անձը որ կը ծնի իր մօրմէն՝ ոչ միայն մարմին է, այլեւ՝ մարմինին ու մարմնաւորին ենթակայ է, նիւթին ու նիւթականին ստրուկ է, եւ որքան տարիքով մեծնայ՝ այդ ենթակայութիւնն ու ստրկութիւնը աւելիով կը շեշտուի իր մօտ: Այդ վիճակին մէջ կը մնայ մինչեւ որ ծնի Հոգիէն: Երբ ծնի Հոգիէն՝ հոգի՝ կը դառնայ, այսինքն՝ հոգեւոր՝ կը դառնայ, հոգեւորին մասին մտածող կը դառնայ, երկնաւոր բաներու մասին խորհող կը դառնայ (Կղ 3.2), որուն իբրեւ հետեւանք՝ իր հայեացքն ու վերաբերմունքը կը փոխուին մարմնաւոր ու նիւթական իրականութեանց հանդէպ. անոնք իրենց արժէքն ու իմաստը կը կորսնցնեն իրեն համար, եւ իր սիրոյն ու ուշադրութեան առանցքը կը դառնան երկինքի Գառնուկն ու անոր պաշտամունքը, Աստուածն ու անոր կամքին կատարումը:

3) Ինչպէս յղացուած մանուկը որ իր մօրը որովայնին մէջ է, չի կրնար տեսնել այս աշխարհը մինչեւ որ չծնի եւ աշխարհ չգայ, նոյնպէս ալ, ոչ ոք կրնայ իր հոգիին աչքերով տեսնել գալիք աշխարհը, եթէ չծնի Սուրբ Հոգիէն,

ու չդառնայ հոգի: Այլ բացատրութեամբ մը, մարմինն էն ծնած մարմինը՝ կը տեսնէ մարմնեղէն այս աշխարհը, իսկ Հոգիէն ծնածը՝ կը տեսնէ հոգեղէն աշխարհը, Աստուծոյ արքայութիւնը:

4) **Տէրը կ'ուզէ նաեւ յստակ դարձնել, թէ մարմինն էն ծնած մարմինը չի կրնար մտնել Աստուծոյ արքայութիւնը, եթէ Հոգիէն ծնելով՝ հոգի չդառնայ, հոգեւորին հետապնդիչը չդառնայ:** Առաքեալը կ'ըսէ, թէ «մարմինն ու արիւնը իրենց ներկայ վիճակով չե'ն կրնար Աստուծոյ արքայութիւնը ժառանգել. եղծանելի չի կրնար անեղծութիւնը ժառանգել» (Ա.Կր 15.50): Պէտք է մէկը Հոգիէն ծնի՝ որպէսզի կարենայ հոգեղէնին ժառանգորդը դառնալ:

«Դուն մի՛ գարմանար, որ քեզի ըսի՝ թէ պէտք է վերստին ծնիմ: Հովը ո՛ւր որ ուզէ՝ կը փչէ. դուն անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր թէ ուրկէ՛ կու գայ եւ ո՛ւր կ'երթայ: Նոյնպէս եւ բոլոր անոնք, որոնք Հոգիէն կը ծնին» (Յե 3.7-8):

1) **Երբ Յիսուս վերստին ծնելու մասին խօսեցաւ, Նիկոդեմոս այդ ծնունդը մարմնաւոր իմաստով հասկցաւ:** Յիսուս պարզեց անոր թէ վերստին ծնունդը մարմնաւոր հասկացողութիւն չունի, այլ ատիկա տեղի կ'ունենայ ջուրէն եւ Հոգիէն ծնելով: Իսկ ցոյց տալու համար անոր թէ Հոգիէն ծնիլը ի՛նչպէս տեղի կ'ունենայ՝ Յիսուս տուաւ հովին<sup>1</sup> օրինակը: Խորքին մէջ, Յիսուս հովին օրինակը տալով, ուզեց պարզել Նիկոդեմոսին, թէ մարդկային միտքը չի կրնար գիտնալ թէ այդ ծնունդը ի՛նչպէս տեղի կ'ունենայ, եւ ճիշդ անոր համար ալ մկրտութեան արարողութիւնը կը կոչուի՝ խորհուրդ: Արդարեւ, ինչպէս մէկը չի գիտեր թէ «հովը ուրկէ՛ կու գայ եւ ո՛ւր կ'երթայ», նոյնպէս ալ, մէկը չի կրնար գիտնալ թէ մարդուն վերածնունդը՝ Հոգիէն ծնիլը, ե՛րբ եւ ի՛նչպէս տեղի կ'ունենայ, ի՛նչ ընթացք կ'ունենայ, եւ դէպի ո՞ւր կ'ընթանայ:

2) «Հովը ո՛ւր որ ուզէ՛ կը փչէ»: Այս բառերով Տէրը կը պարզէ թէ Սուրբ Հոգին ո՛ւր որ ուզէ եւ որո՛ւ վրայ որ ուզէ՝ կը փչէ, կը հանգչի: Ան ազատութիւնը ունի լեցնելու ոեւէ մէկը որ կը փնտռէ այդ լեցունութիւնը: «Ուր որ ուզէ». արգիլուած տեղ չկայ իրեն, արգիլուած սիրտ չկայ իրեն: Ամենէն մոլթ տեղերն անգամ կրնայ հասնիլ եւ լուսաւորել: Ամենէն փակ սիրտերն անգամ կրնայ մոտք գործել ու կենդանութիւն բերել անոնց:

3) «Դուն անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր թէ ուրկէ՛ կու գայ եւ ո՛ւր կ'երթայ»: Տէրը կը պարզէ Նիկոդեմոսին ու մեզի, թէ մենք չենք տեսներ

<sup>1</sup> «Հով»ին համար գործածուած Յունարէն բառը, թէ՛ «հոգի» եւ թէ՛ «հով» կը նշանակէ, կ'ըսէ Զարեհ Արք. Ազնաւորեան:



*Սուրբ Հոգին, չենք գիտեր թէ ուրկէ՛ կու գայ եւ ո՛ւր կ՛երթայ, բայց կը լսենք անոր ձայնը, այլ խօսքով՝ կը տեսնենք անոր փոխակերպիչ զօրութիւնը մարդոց կեանքին մէջ:*

4) «Զես գիտեր թէ ուրկէ՛ կու գայ»: *Ըսել կ՛ուզէ, թէ մարդ չի կրնար հովին սկզբնաւորութեան մասին գիտնալ: Արդարեւ, ինչպէս ո՛չ ոք գիտէ թէ հովը ի՛նչպէս կը սկզբնաւորուի, ի՛նչպէս իր սկիզբը կ՛առնէ, ուրկէ՛ իր սկիզբը կ՛առնէ, նոյնպէս ալ, ո՛չ ոք գիտէ, թէ Սուրբ Հոգին ի՛նչպէս Հօրմէն կը բղխի, ե՛րբ կը բղխի: Գիտենք թէ Հօրմէն կը բղխի, բայց չենք գիտեր թէ ի՛նչպէս կը բղխի: Հօրը էութենէն անոր բղխումը՝ ո՛չ ոք կրնայ հասկնալ, եւ ուստի՝ ո՛չ ոք կրնայ բացատրել:*

5) «Եւ ո՛ւր կ՛երթայ»: *Տէրը ցոյց կու տայ մեզի, թէ ո՛չ ոք գիտէ թէ հովը ո՛ւր կ՛երթայ, ո՛ւր կ՛աւարտի, ո՛ւր կը հասնի: Նոյնպէս ալ, ո՛չ ոք գիտէ, թէ Սուրբ Հոգին Հօրմէն բղխելով՝ ո՛ւր կ՛երթայ, ի՛նչ կ՛ընէ, որո՛նց կը հասնի եւ ի՛նչպէս կը հասնի, որո՛նց կեանքը կը փոխէ եւ ի՛նչպէս կը փոխէ, որո՛նց սիրտերուն կը հպի եւ ի՛նչպէս կը հպի, որո՛նց նոր սիրտ ու նոր հոգի կը շնորհէ եւ ի՛նչպէս կը շնորհէ: Չենք տեսներ այս բոլորը, «բայց կը լսենք անոնց ձայնը»: Կը լսենք՝ որովհետեւ կը տեսնենք այն փոփոխութիւնները որ յառաջ կու գան մարդուն կեանքին մէջ, երբ անիկա Հոգիէն կը ծնի: Անառակ որդիին առակին մէջ կը կարդանք, թէ երբ երէց որդին ազարակէն դարձաւ ու տան մօտեցաւ՝ «երգի ու պարի ձայներ լսեց» (ՂԿ 15.25): Ան չտեսաւ թէ Հոգին ի՛նչպէս փչեց իր կրտսեր եղբօր վրայ ու փոխեց անոր սիրտը, բայց լսեց անոր երգի ու պարի ձայնը, այլ խօսքով՝ անոր փրկութեան ու փրկութեան բերած ուրախութեան ձայնը:*

«Նիկոդեմոս հարցուց. "Ինչպէ՞ս կրնայ պատահիլ ատիկա": Յիսուս պատասխանեց. "Դուն որ Իսրայէլի ժողովուրդին վրայ ուսուցիչ կարգուած ես, ատիկա չե՞ս գիտեր"» (Յհ 3.9-10):

1) «Ինչպէ՞ս կրնայ պատահիլ ատիկա»: *Նիկոդեմոսի այս հարցումը կրնայ մեզի այն տպաւորութիւնը տալ, թէ տակաւին կը դժուարանար հասկնալ վերջստին ծնունդի խնդիրը, եւ սակայն, երբ կարդանք յաջորդող երկու համարները, յստակ կը դառնայ, որ Նիկոդեմոս (եւ հետը եղողները), ո՛չ միայն կը դժուարանային հասկնալ վերածնունդի մասին Տիրոջ խօսքը կամ խօսքին իմաստը, այլ՝ նաեւ կը դժուարանային ընդունիլ զանոնք (11-րդ համար), եւ հաւատալ անոնց (12-րդ համար): Յիշեալ համարներուն մէջ արձանագրուած «չէք ընդունիր» ու «չէք հաւատար» բառերը յոգնակի են, ուղղուած են մէկէ աւելի անձերու. ուստի զանոնք պէտք է հասկնալ միայն Նիկոդեմոսին համար: Խօսքը կրնայ վերաբերիլ նաեւ անոնց՝ որոնք անոր հետ էին եւ անոր աշակերտներն էին, եւ կամ ալ խօսքը պէտք է հասկնալ ընդհանուր առումով:*

**Արդարեւ, մարդոց հետ Յիսուսի երկխօսութիւնները՝ բոլոր մարդոց կը վերաբերին:**

2) **Նիկողեմոս (եւ հետը եղողները), չհասկցան Տիրոջ խօսքին իմաստը, եւ անոր համար ալ չընդունեցին անոր ուսուցումը ու չհաւատացին անոր խօսքին: Բան մը որ չենք հասկնար՝ չի նշանակեր որ պէտք է մերժենք զայն, կամ չհաւատանք անոր: Շատ անգամ հաւատալի է՝ տք է որ կը սկսինք որոշ բաներ հասկնալ: Օգոստինոս կ'ըսէ. «Մի՛ սպասեր որ հասկնաս՝ որպէսզի հաւատաս, այլ՝ հաւատա՛՛ որպէսզի հասկնաս»:**

3) **«Ինչպէ՞ս կրնայ պատահիլ ատիկա»: Նիկողեմոսի այս հարցումը ցոյց կու տայ, թէ աշխարհիկ մարդը չի կրնար հասկնալ Սուրբ Հոգիին գործերը: Արդարեւ, աշխարհիկ մարդուն համար դժուար է հասկնալ, թէ ի՞նչպէս տեղի կ'ունենայ մարդուն վերածնունդը Սուրբ Հոգիէն: Երկրաւոր ու երկրաւորին կապուած մարդը չի կրնար հասկնալ ու գիտնալ, թէ ի՞նչպէս Սուրբ Հոգիին մարդուն քարեղէն սիրտը՝ մտեղէն սրտի կը փոխակերպէ, կամ ի՞նչպէս մեղքով մեռած մարդուն սիրտը՝ Յիսուսի սիրով կը կենդանացնէ ու կը լեցնէ:**

4) **«Ինչ որ Խարայէլի ժողովուրդին վրայ ուսուցիչ կարգուած ես, ատիկա չե՞ս գիտեր»: Նիկողեմոս Սուրբ գիրքերու ուսուցիչ ըլլալով հանդերձ՝ չէր գիտեր վերածնունդի մասին, բայց հետաքրքրականը այն է, որ ան ոչ միայն չէր գիտեր վերածնունդի մասին, այլեւ՝ անկարող էր հասկնալ զայն, կամ հաւատալ անոր: Այսօր որքա՛ն ուսուցիչներ ու քարոզիչներ կան Քրիստոսի եկեղեցիին մէջ՝ որոնք եկեղեցիներուն բեմերը կը լեցնեն, որոնք սակայն չեն գիտեր ու չեն հասկնար թէ մարդուս վերածնունդը ի՞նչպէս տեղի կ'ունենայ, չեն գիտեր ու չեն հասկնար թէ Սուրբ Հոգիին ի՞նչպէս կը գործէ ու կը ներգործէ մարդուն սրտին մէջ ու կը փոխակերպէ զանիկա: Չեն գիտեր ու չեն հասկնար, որովհետեւ այդ փորձառութիւնը չունին:**

**«Լաւ գիտցիր, թէ ինչ որ գիտեմ՝ կը խօսիմ եւ ինչ որ տեսնեմ՝ անոր մասին կը վկայեմ, բայց մեր վկայութիւնը չէ՛ք ընդունիր» (Յե 3.11):**

1) **Յիսուս յոգնակիրով կը խօսի: Չ'ըսեր «ինչ որ գիտեմ՝ կը խօսիմ», այլ՝ «ինչ որ գիտեմ՝ կը խօսիմ»: Կարգ մը մեկնիչներ կ'ըսեն, թէ ան կ'ականարկէ Հին Կտակարանի մարգարէներուն՝ որոնք կը խօսէին միայն այն՝ ինչ որ ստուգապէս գիտէին, ինչ որ յայտնուած էր իրենց: Ուրիշ մեկնիչներ կ'ըսեն, թէ Յիսուս կ'ականարկէ Յովհաննէս Մկրտիչին եւ իր աշակերտներուն՝ որոնք կ'ըսէին ու կը խօսէին ինչ որ կը յայտնուէր իրենց Աստուծոյ կողմէ (ՅՅ 1.32–34: Մտ 16.17): Յիսուսի ականարկութիւնը կրնայ ըլլալ նաեւ իր Հօրը՝ որ իր մէջ էր (ՅՅ 14.10), եւ Սուրբ Հոգիին՝ որ իր վրայ էր (ՂԿ 4.18): Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին գիտութիւնը նոյնն է: Որդիին տուած վկայութիւնը՝ Հօրը ու Հոգիին կողմէ տրուած վկայութիւն է նաեւ: Եւ այդ վկայութիւնը բացար-**

ձակ ճշմարտութիւնն է. *ա՛յս էր որ Տէրը ուզեց բացայայտել երբ ըսաւ. «Լաւ գիտցիր»*: Այս բառերով, *ան ուզեց Նիկողեմոսին (եւ անոր հետ եղողներուն) յայտնել, թէ ինչ որ կ'ըսէ ու կը խօսի՝ բացարձակ ճշմարտութիւնն է*:

2) «Ինչ որ տեսանք՝ անոր մասին կը վկայեմք, բայց մեր վկայութիւնը չէք ընդունիր»։ *Վերեւ Տէրը խօսեցաւ իր (կամ իրենց) գիտցած ճշմարտութիւններուն մասին, իսկ այստեղ կը խօսի իր (կամ իրենց) տեսած ճշմարտութիւններուն մասին*: Տէրն ու իր ճշմարտ հետեւորդները, ոչ միայն գիտեն ճշմարտութիւնը, այլեւ՝ կը տեսնեն զանոնք։ Անոնք ոչ միայն գիտեն հոգեւոր իրականութեանց մասին, այլեւ՝ կը տեսնեն զանոնք։ Ոչ միայն գիտեն երկինքի մասին, այլեւ կը տեսնեն երկինքը իրենց հոգիի աչքերով։ Յիսուս Նաթանայէլին ու բոլոր աշակերտներուն ըսաւ թէ պիտի տեսնեն երկինքը բացուած (ՅՆ 1.51)։ Սուրբ Ստեփանոս տեսաւ զԱստուած իր ամբողջ փառքով, եւ տեսաւ երկինքը բացուած (Գրծ 8.55-56)։ Յովհաննէս Մկրտիչ տեսաւ երկինքը բացուած ու տեսաւ Սուրբ Հոգիին էջքը Յիսուսի վրայ (Մտ 3.16)։ ՅՆ 1.32-34)։ Պողոս առաքեալ մինչեւ երրորդ երկինքը յափշտակուելով՝ անպատմելի բաներ լսեց ու տեսաւ (Բ.Կր 12.2-4)։

3) «Ինչ որ տեսանք՝ անոր մասին կը վկայեմք, բայց մեր վկայութիւնը չէք ընդունիր»։ *Շատ բան կայ որ Յիսուս տեսած է ու կը տեսնէ, եւ իր տեսածին մասին վկայեց ու կը վկայէ, բայց քանի՞ հոգիներ ընդունեցին իր վկայութիւնը*։ Ան պատմեց իր տեսած երկինքին մասին ուրկէ իջաւ, բայց քանի՞ հոգիներ հաւատացին իր պատմածին։ Տեսաւ դժոխքը ու պատմեց անոր մասին, բայց քանի՞ հոգիներ ականջ տուին իր խօսքերուն։ Տեսաւ գալիք ահաւոր դատաստանը եւ զգուշացուց մարդիկը, բայց քանի՞ հոգիներ զգաստացան։ Վկայեց թէ ինքն է երկինքէն իջած հացը, բայց քանի՞ հոգիներ ընդգրկեցին այդ հացը, ճաշակեցին զանիկա ու կշտացան անով։

4) «Ինչ որ տեսանք՝ անոր մասին կը վկայեմք»։ *Այս բառերով Տէրը մեզ կը հրաւիրէ՝ վկայելու մեր տեսածներուն մասին*։ Ով որ տեսած է երկինքն ու երկնային ճշմարտութիւնները իր սրտի ու հոգիի աչքերով՝ պէտք է վկայէ անոնց մասին։ Ով որ տեսած է Արքան ու անոր արքայութիւնը՝ պէտք է վկայէ անոնց մասին։ Բայց Տէրը նաեւ կը յիշեցնէ մեզի, թէ մարդիկ կրնան մեր վկայութիւնը չընդունիլ ու մերժել, ինչ որ համարին վերջին բառերը ցոյց կու տան. «Մեր վկայութիւնը չէք ընդունիր»։

«Եթէ երկրաւոր բաներու մասին խօսեցայ ձեզի եւ չէք հաւատար, ինչպէ՞ս պիտի հաւատաք ինձի՝ եթէ երկնաւոր բաներու մասին խօսիմ» (Յհ 3.12)։

1) *Ի՞նչ են այդ երկրաւոր բաները որոնց մասին խօսեցաւ Յիսուս Նիկողեմոսին*։ Առաջին հերթին ատիկա մարդուն վերջստին ծնելու անհրաժեշտու-

Թիւնն է. սա երկրաւո՞ր բան է. այո՛, երկրաւոր բան է, այն հասկացողութեամբ՝ որ վերստին ծնունդը երկրի վրայ է որ տեղի կ'ունենայ, եւ ոչ թէ երկինքի մէջ: Մեզի վերստին ծնունդ տուողը՝ Սուրբ Հոգին, երկինքէն կու գայ, բայց այդ ծնունդը երկրի՛ վրայ կ'իրագործուի: Այդ ծնունդին համար անհրաժեշտ է նաեւ մկրտութեան ջուրը, որ երկրաւոր տարր մըն է: Բացատրելու համար թէ այդ ծնունդը ի՞նչպէս տեղի կ'ունենայ՝ Յիսուս տուաւ օրինակը փչող հովին, որ դարձեալ երկրաւոր տարր մըն է: Հետեւաբար, երբ կ'ըսէ՝ «երկրաւոր բաներու մասին խօսեցայ ձեզի», ըսել կ'ուզէ՝ թէ երկրաւորներուն յատուկ տարրերու (ջուր, հով) օգտագործումով խօսեցայ ձեզի երկրի վրայ տեղի ունեցող բաներու մասին, «եւ չէք հաւատար»:

2) «Ինչպէ՞ս պիտի հաւատաք ինծի՛ եթէ երկնաւոր բաներու մասին խօսիմ»: Այս բառերով Յիսուս Նիկողեմոսին կ'ըսէր. «Եթէ երկրաւոր տարրերու օգտագործումով խօսեցայ ձեզի, եւ չէք հաւատար ինծի, ի՞նչպէս պիտի հաւատաք կամ պիտի կարենաք հաւատալ ինծի՛ եթէ երկնաւոր տարրերու օգտագործումով խօսիմ ձեզի: Եթէ ձեզի տուի ջուրին օրինակը գոր կը տեսնէք, եւ հովին օրինակը՝ որունն ձայնը կը լսէք, եւ չէք հաւատար ինծի, հապա ի՞նչպէս պիտի հաւատաք ինծի, եթէ խօսիմ ձեզի՛ ձեզի համար անտեսանելի երկնաւոր օրինակներով»: Արդարեւ, եթէ երկրաւոր մարդը չի կրնար հասկնալ երկրաւոր իրականութիւնները՝ ի՞նչպէս պիտի հասկնայ երկնաւոր իրականութիւնները: Եթէ չի կրնար ըմբռնել ժամանակաւորը՝ ի՞նչպէս պիտի կարենայ ըմբռնել յաւիտենականը:

3) Երկինքի բնակիչները իրենց յատուկ լեզուն ունին. անիկա ո՛չ Եբրայերէն է, ո՛չ Յունարէն է, եւ ո՛չ ալ Արամերէն: Եթէ Յիսուս մարդոց խօսեցաւ իրենց ծանօթ լեզուով, (երկրաւորներուն յատուկ բաներով), եւ անոնք չհասկըցան զինք ու չհաւատացին իրեն, ի՞նչպէս պիտի հասկնային զինք ու հաւատային իրեն՝ եթէ երկնաւորներուն յատուկ լեզուով խօսէր անոնց: Յիսուս միշտ երկրաւոր տարրերու ու առականերու օգտագործումով խօսեցաւ մարդոց՝ անոնց երկնաւոր ճշմարտութիւններ բացայայտելու համար, բայց անոնք շատ անգամ կը դժուարանային հասկնալ զինք ու հաւատալ իրեն: Այստեղ հանդէս կու գայ մէկ կողմէ Յիսուսի ճիգը՝ իր ուսուցումները հասկնալի դարձնելու մարդոց, իսկ միւս կողմէ՝ մարդոց սրտի կուրուրթիւնն ու փակուածութիւնը այդ ուսուցումներուն լոյսին դիմաց:

«Ո՛չ ոք երկինք ելաւ՝ բացի Մարդու Որդիէն, որ երկինքէն իջաւ, եւ որ երկինքի մէջ է» (Յհ 3.13):

1) Մենք գիտենք որ երկինք բարձրացան Ենովք (Ծն 5.24), Եղիա (Դ.Թգ 2.11), եւ Պողոս առաքեալ (Բ.Կր 12.2): Արդ, ի՞նչպէս պէտք է հասկնալ Յիսուսի խօսքը՝ «ոչ ոք երկինք ելաւ՝ բացի Մարդու Որդիէն»: Այն երկինքը ուր Ենովք,

Եղիա եւ Պօղոս բարձրացան, նոյն այն երկիրնքը չէ ուրկէ իջաւ եւ ուր բարձրացաւ Յիսուս: Համաձայն Աստուածաշունչին չորս երկիրքներ գոյութիւն ունին.-

ա) Առաջին երկիրնքը օգային այն տարածութիւնն է, ուր ամէն տեսակի թռչուններ կը թռչին, եւ որ կը կոչուի՝ «թռչուններուն երկիրնքը». «Երկինքի թռչուններուն եւ երկրի վրայ սողացող բոլոր կենդանիներուն վրայ իշխեցէ՛ք» (Ծն 1.28): «Երկինքի թռչուններէն ալ եօթնական հատ առ...» (Ծն 7.3): Այս երկիրնքին մէջ է որ ամպերը կը դիզուին, եւ հոսկէ է որ անձրեւ կը տեղայ:

բ) Երկրորդ երկիրնքը երկնակամարն է, այլ խօսքով, այն անսահման տարածութիւնը՝ ուր կը գտնուին արեւը, լուսինը, աստղերը եւ ամբողջ համաստեղութիւնը: Այս երկիրնքին համար է որ կ'ըսուի. «Աստուած հաստատութիւնը երկինք կոչեց» (Ծն 1.8): Այս հաստատութեան մէջ էր որ դրուեցան արեւը, լուսինը եւ աստղերը. «Աստուած երկինքի հաստատութեանը մէջ դրաւ զանոնք, որպէսզի երկրի վրայ լոյս տան» (Ծն 1.17): Այս երկիրնքին ակնարկեց Պետրոս առաքեալ երբ ըսաւ, թէ՛ «մեծ շառաչիւնով պիտի չքանայ, երկնային մարմինները պիտի վառին եւ հալին» (Բ.Պտ 3.10,12), երբ Տէրը երկրորդ անգամ յայտնուի: Տէրը ինք եւս երբ ըսաւ թէ՛ երկիրնքը պիտի անցնի (Մտ 5.18), ակնարկեց տուեալ «հաստատութեան»:

գ) Երրորդ երկիրնքը դրախտն է, եւ անիկա նիւթական վայր մը չէ: Հոս էր որ յափշտակուեցաւ Պօղոս առաքեալ. «Պիտի պարծենամ իբրեւ քրիստոնէայ մը, որ տասնըչորս տարիներ առաջ մինչեւ երկինքի բարձունքը (բառացի՝ «երրորդ երկինքը») յափշտակուեցաւ, չեմ գիտեր՝ մարմինով թէ՛ հոգիով. Աստուած գիտէ: Մինչեւ դրախտ յափշտակուեցաւ» (Բ.Կր 12.2-4): Ուշադրութիւն ըրէք որ առաքեալը երրորդ այս երկիրնքը «դրախտ» կը կոչէ: Հոս էր որ յափշտակուեցան Ենովք եւ Եղիա: Հոս էր որ տարուեցաւ հաւատքը ընդգրկած Քրիստոսի խաչակից «աւազակին» հոգին. «Այսօր ինձի հետ պիտի ըլլաս դրախտին մէջ» (ՂԿ 23.43): Եւ վերջապէս, հոս է որ կը տարուին բոլոր արդարներուն հոգիները, եւ կը սպասեն մինչեւ դատաստան:

դ) Չորրորդ ու բարձրագոյն երկիրնքը՝ Աստուծոյ «բնակութեան վայրն է»: Այս երկիրնքին ակնարկեց Յիսուս երբ ըսաւ. «Ոչ ոք երկինք ելաւ՝ բացի Մարդու Որդիէն, որ երկինքէն իջաւ, եւ որ երկինքի մէջ է»: Այս երկիրնքին ակնարկեց երբ պատուիրեց երդում չընել «երկինքի վրայ» (Մտ 5.34): Այս երկիրնքին ակնարկեց Սողոմոն երբ ըսաւ. «Ո՞վ երկինք ելաւ ու իջաւ» (Առ 30.4): Սողոմոնի այս խօսքը Յիսուսի խօսքին հետ նոյն իմաստը ունի: Ան եւս կը հաստատէ, թէ՛ ոչ ոք կրցած է Աստուծոյ բնակութեան խորհրդանիշ եղող երկիրնքը բարձրանալ եւ հոնկէ դարձեալ վար իջնել:

2) Սողոմոն իր մէկ աղօթքին մէջ կը խօսի չորս երկիրնքերու մասին. «Ահա երկինք<sup>1</sup> ու երկինքներու<sup>2-3</sup> երկինքը<sup>4</sup> քեզ չեն կրնար պարունակել.

ն<sup>o</sup>ւր կը մնայ այս իմ շինած տունս» (Գ.Թդ 8.27): Ճիշդ է որ հաստատուեցաւ թէ Աստուած կը բնակի չորրորդ երկինքին մէջ, խօսքը սակայն բառացի իմաստով պէտք չէ առնել: Սողոմոն կը վկայէ, որ, ոչ թէ չորրորդ երկինքը, այլ չորս երկինքները միասին չեն կրնար բովանդակել զԱստուած: Երբ կը հաստատուի թէ Աստուած կը բնակի երկինքին մէջ, կամ չորրորդ երկինքին մէջ, խօսքին նպատակն է պարզապէս ցոյց տալ, թէ Աստուած առնչութիւն չունի մեղքին հետ. ան չի՛ կրնար բնակիլ ու չի՛ բնակիր հոն ուր մեղքը կը բնակի: Չորրորդ երկինքը բացարձակ սրբութեան նշանակ նկատուած է. Աստուած բացարձակ սուրբը ըլլալով՝ կը բնակի բացարձակ սրբութեան մէջ:

3) Նիկողեմոս Յիսուսը կոչեց՝ «Աստուծոյ կողմէ դրկուած ուսուցիչ» (ՅՀ 3.2): Յիսուս սակայն ինքնիր համար գործածելով «երկինքէն իջաւ» բառերը, ուզեց պարզել Նիկողեմոսին, թէ ինք սոսկ երկինքէն դրկուած անձ մը չէ, ինչպէս մարգարէները կը դրկուէին, այլ՝ երկինքէն իջած անձ մը. իջած՝ իր ազատ կամքով: Ղրկուած՝ Հօրը կամքով, եւ իջած՝ իր սեփական կամքով:

4) Յիսուս ինքզինք «Մարդու Որդի» կոչելով՝ իր մարդկային բնութիւնն է որ ցոյց տուաւ, իսկ «երկինքէն իջաւ» ըսելով՝ իր աստուածային բնութիւնը: Եւ ուստի, Քրիստոս երկինքէն իբրեւ Աստուած իջաւ: Մարիամէն մարմին առաւ ու իր աստուածային բնութեան միացուց, եւ Մարիամէն ծնաւ իբրեւ կատարեալ Աստուած ու կատարեալ մարդ:

5) «Բացի Մարդու Որդիէն, որ երկինքէն իջաւ»: Այս բառերով Յիսուս ըսել չ'ուզեր թէ ինք երկինքէն իջաւ իբրեւ Մարդու Որդի. իր ըսել ուզածն այն է՝ որ Մարդու Որդին որ այժմ երկրի վրայ է՝ երկինքէն իջաւ: Ան երկինքէն իջաւ իբրեւ Աստուծոյ Որդի. երկիր իջնելէն ետք էր որ դարձաւ Մարդու Որդի: Մարդու Որդի իր մարմինը երկինքէն չբերաւ, այլ՝ երկրէն առաւ Մարիամէն:

6) «Եւ որ երկինքի մէջ է»: Այս բառերով Հօրմէն իր անբաժանելիութիւնը բացայայտեց Յիսուս: Որդին Հօրը հետ մէկ եւ նոյն բնութիւնը ունի: Իր մարդեղացումով բաժանում չեկաւ իր եւ Հօրը բնութեան միջեւ: Որդին երկիր գալու համար՝ բաժնուեցաւ իր աստուածային փառքէն, բայց ո՛չ իր աստուածային բնութենէն: Իբրեւ մարդ՝ Նիկողեմոսի հետ էր, բայց իբրեւ Աստուած՝ Հօրը հետ ու Հօրը մէջ էր (ՅՀ 1.18):

7) «Եւ որ երկինքի մէջ է»: Յիսուս այս բառերը ըսաւ երկրի վրայ եղած ատեն, որ կը նշանակէ թէ երկրի վրայ եղած ատեն՝ միաժամանակ երկինքի մէջ էր: Երկրի վրայ էր իբրեւ Աստուածամարդկային բնութիւն, եւ երկինքի մէջ՝ իբրեւ աստուածային էութիւն: Երկրի վրայ գործած ատեն՝ իր կապը չխզուեցաւ երկինքի հետ: Ան երկինքի մէջ Տէրն ու Իշխանն էր հրեշտակներ-

րուն, երկրի վրայ եղած ատեն ալ Տէրն ու Իշխանն էր հրեշտակներուն (Մտ 4.11): Այս բառերով Յիսուս լռելեայն կերպով իր աստուածային բնութիւնը յայտնեց Նիկողեմոսին, բայց ան վստահաբար չհասկեցաւ ատիկա:

8) Դանիէլ կ'ունենայ Հինաւուրցի (Հօր Աստուծոյ) տեսիլքը, ինչպէս նաեւ տեսիլքը Մարդու Որդիին որ ամպերով եկաւ, եւ զինք մօտեցուցին Հինաւուրցին: Մարդու Որդիին տրուեցաւ յաւիտենական իշխանութիւն, յաւիտենական պատիւ, ու յաւիտենական թագաւորութիւն (Դն 7.9,13-14): Հըրեաներ հոս յիշուած «Մարդու Որդի» բացատրութեամբ կը հասկնային խոստացուած Մեսիան: Ուստի, Յիսուս ինքզինք «Մարդու Որդի» կոչելով՝ ուզեց յայտնել Նիկողեմոսին թէ ինք խոստացուած Մեսիան է:

9) Յիսուս ինքզինք «Մարդու Որդի» կոչեց, բայց միաժամանակ հաստատեց թէ ինք երկինքէն իջաւ ու երկինքի մէջ է, որպէսզի Նիկողեմոս եւ ուրիշներ յանկարծ չխորհին թէ ինք Աստուծոյ կողմէ զրկուած սոսկ ու սովորական մարդ է, եւ ոչինչ ունի իր մէջ աստուածային: Ինքզինք «Մարդու Որդի» կոչեց, պարզելու Նիկողեմոսին թէ ինք մարդ է ամէն մարդու պէս, բայց միաժամանակ հաստատեց թէ ինք երկինքէն իջաւ ու երկինքի մէջ է, պարզելու Նիկողեմոսին թէ ինք «Մարդու Որդի» ըլլալուն կողքին՝ նաեւ «Աստուծոյ Որդի» է:

10) «Մարդու Որդի» բառերը կը պարզեն նաեւ Յիսուսի խոնարհութիւնը: Ծիշդ է որ ինքզինքին համար ըսաւ՝ «երկինքէն իջաւ», բայց միեւնոյն ատեն ինքզինք կոչեց «Մարդու Որդի»: Իրեն համար դիւրին էր ըսել. «Ես երկինքէն իջայ, եւ ուստի՝ Աստուծոյ Որդի եմ»: Չըրաւ այդպիսի բան: Ինքզինք երկինքէն իջած Մարդու Որդի կոչելով, ուզեց պարզել Նիկողեմոսին, թէ իր ծագումը երկնային է, աստուածային է, բայց մե'ր սիրոյն ու մեր փրկութեան համար դարձաւ Մարդու Որդի:

«Եւ ինչպէս Մովսէս պղինձէ օձը բարձրացուց անպատիւն մէջ, նոյնպէս ալ Մարդու Որդին պէտք է բարձրանայ, որպէսզի անոր հաւատացողը յաւիտենական կեանք ունենայ» (ՅՏ 3.14-15):

1) Այս բառերով, Յիսուս ցոյց կու տայ մեզի, թէ պղինձէ օձին բարձրացումը Մովսէս մարգարէին կողմէ՝ կը նախապատկերացնէր իր խաչ բարձրացումը: Զողին վրայ կախելու արարքը կը նախապատկերացնէ Քրիստոսի կախուիլն ու խաչուիլը փայտին վրայ, մինչդեռ պղինձէ օձը ո'չ թէ կը նախապատկերացնէ Քրիստոսը, այլ՝ կը խորհրդանշէ՝ Քրիստոսը: Որոգիներէս կ'ըսէ. «Պղինձէ օձը Փրկիչը չէր, այլ պարզապէս կը ներկայացնէր Փրկիչը»: Կրնա'նք ըսել թէ հոգեւոր ժայռը որ Հրեաներուն հետ կ'երթար անապատին մէջ եւ որմէ անոնք խմեցին՝ «Քրիստոս ինքն էր» (Ա.Կր 10.4), բայց սխալ է ըսել թէ Մովսէսի կողմէ ձողի վրայ բարձրացուած պղինձէ օձը Քրիստոսն էր:

2) *Ձողին վրայ կախուած պղինձէ օձը կը նախապատկերացնէր այն անէծքը որ Յիսուս մեզի համար պիտի կրէր՝ մեզ ազատելու համար Օրէնքի անէծքէն: Այս մասին Պողոս առաքեալ կ'ըսէ. «Քրիստոս Օրէնքի այդ անէծքէն մեզ ազատեց, ինք մեր տեղը անէծքի առարկայ դառնալով. որովհետեւ Օրէնքի գիրքին մէջ գրուած է. – Անիծեալ է ան՝ որ փայտէ կը կախուի» (Գղ 3.13: Բ.Օր 21.22-23):*

3) *Ձողին վրայ բարձրացուած պղինձէ օձը իրական օձ չէր. օձի պատկեր ունէր, բայց կենդանի օձ չէր: Յիսուս սակայն ոչ թէ մարդու պատկեր ունէր, այլ՝ իրակա՛ն մարդ էր, ճշմարիտ մարմին ունէր (ՅՀ 1.14: Ա.ՅՀ 4.2-3: Բ.ՅՀ 7): Եւ քանի պղինձէ օձը իրական օձ չէր՝ անոր բերած փրկութիւնն ալ իրական ու մնայուն չէր, այլ՝ ժամանակաւոր. մինչդեռ մեր Փրկիչը որ իրական մարմին ունէր՝ իր խաչելութիւնն ալ իրական էր, եւ քանի խաչելութիւնը իրական էր՝ բնականօրէն մեզի շնորհուած փրկութիւնն ալ իրական էր: Մենք Տիրոջ մարմինով փրկուեցանք (Ա.Պտ 2.24): Տէրը իր մարմինին մէջ դատապարտեց մեր մեղքերը (Հռ 8.3):*

4) *Պղինձէ օձը որ Մովսէս ձողի վրայ բարձրացուց՝ մեռած տարր մըն էր, կեանք չկար անոր մէջ: Ասիկա կը նախապատկերացնէր Քրիստոսի մահը: Կենդանի ու կենդանատու Աստուածը՝ Յիսուս, խաչին վրայ անկենդան դարձաւ, որպէսզի իր մահով՝ խափանէ մահուան իշխանութիւնը, եւ իր յարութեամբ՝ նոր կեանք պարգեւէ մեզի (Բ.Տմ 1.10):*

5) *«Պղինձէ օձին նայողները կ'ազատէին ժամանակաւոր մահէն, իսկ Քրիստոսի նայողները կը փրկուին յաւիտեանական մահէն: Կախուած օձը բժշկեց օձերէ խայթուողները, իսկ խաչեալ Փրկիչը բժշկեց մեզ Վիշապին խայթումներէն: Հրեաներ իրենց նիւթական աչքերով պէտք էր նայէին օձին որպէսզի բժշկուէին, իսկ մենք որպէսզի բժշկուինք՝ մեր բոլոր մեղքերը պէտք է դնենք Յիսուսի վրայ» (Յովհան Ոսկեբերան):*

6) *Ինչպէս անապատին մէջ պղինձէ օձին բարձրացումը Մովսէսի կատարած վերջին հրաշալի գործն էր, կամ ըսենք, վերջին հրաշքն էր, այնպէս ալ Քրիստոսի խաչ բարձրացումը, վերջին բանն էր որ Աստուած կրնար ընել մարդոց փրկութեան համար: Խաչուելէն ու մեռնելէն աւելի Աստուած ի՞նչ պէտք էր ընէր կամ ի՞նչ կրնար ընել:*

7) *Կիզող օձերուն կողմէ խայթուողները եթէ նայէին ձողին վրայ կախուած պղինձէ օձին՝ ժամանակաւոր փրկութիւն ձեռք կը ձգէին: Մինչդեռ անոնք որոնք հաւատքով կը նային իրենց համար խաչ բարձրացած Յիսուսին՝ յաւիտեանական փրկութիւն ձեռք կը ձգեն:*

8) *Մովսէս պղինձէ օձը ձողի մը վրայ բարձրացուց՝ որպէսզի անիկա բուժէր ու փրկէր կիզող օձերուն կողմէ խայթուող մարդիկը, իսկ Յիսուս խաչ*



բարձրացաւ՝ որպէսզի բուժէ անոնք՝ որոնք կը խայթուին առաջին Օձին՝ Սատանային (Յտ 12.9, 20.2) ու անոր չար ոգիներուն կողմէ, զորս Յիսուս կը կոչէ՝ օձեր (ՂԿ 10.19):

9) **Զողին վրայ կախուած օձը իրական օձ չէր, այլ պղինձէ շինուած էր: Ուստի, թոյն չկար անոր մէջ: Պատկերաւոր ձեւով մը, անիկա ցոյց կու տայ, թէ Քրիստոս իր մէջ չունէր մեղքի թոյնը: Ան մեղաւորներու մարմինին նման մարմին առաւ, առանց սակայն մարմինին յատուկ մեղքը առնելու իր մէջ: Ան մեզի համար մեղքի վերածուեցաւ՝ որպէսզի կտարէ մեղքին փուշը մեր կեանքին մէջ (Հռ 8.3):**

10) **Պղինձէ օձին բարձրացումին նպատակը մարդիկը մահէն ազատելն էր, Քրիստոսի խաչ բարձրացումին նպատակը՝ մարդիկը փրկելն էր մահէն, յաւիտենական մահէն:**

11) «Մովսէս պղինձէ օձը բարձրացուց ձողի մը վրայ՝ որպէսզի անիկա բժշկէր կիզող օձերուն կողմէ խայթուող մարդիկը (Թւ 21.6-9): Արդ, եթէ պղինձէ օձը իր խաչուելովը ձողին վրայ կրնար բժշկել հաւատով իրեն նայող մարդիկը, մարմնացեալ եւ խաչեալ Աստուածորդին չի՞ կրնար փրկել մարդիկը» (**Կիւրեղ Երուսաղէմացի**):

12) «Անցեալին շատերու կեանքը կը փրկուէր փայտերու միջոցաւ: Օրինակ, Նոյի Ժամանակ, Նոյի եւ հետը եղողներուն կեանքը փրկուեցաւ տապանի փայտին միջոցաւ: Մովսէսի օրերուն, Կարմիր ծովէն անցնիլը փայտի մը հարուածով եղաւ: Եթէ Մովսէսին գաւազանը գորութիւն ունէր, Փրկիչին խաչը գորութիւն չունի՞: Փայտի մը միջոցաւ էր որ դառն ջուրերը քաղցր եղան. դարձեալ, փայտի մը վրայ էր որ Յիսուսի կողէն ջուր հոսեցաւ» (**Կիւրեղ Երուսաղէմացի**):

13) «Խաչուողը, անշարժութեան դատապարտուողը եւ իր իշխանութիւնը կորսնցնողը եղաւ Սատանան ինք, եւ ասիկա տեղի ունեցաւ երբ Յիսուս մեր օրինագանցութիւնները գամեց խաչին վրայ, որով ոգեղէն աշխարհի իշխանութիւններն ու պետութիւնները մերկացան իրենց իշխանութենէն եւ դառն պարտութիւն կրեցին (Կղ 2.14-15): Եւ ուստի, ձողին վրայ բարձրացուած օձը մէկ կողմէ կը ներկայացնէ մեր մեղքերը շալկած Յիսուսը, իսկ միւս կողմէ՝ այն «հին օձը» (Սատանան), որ Յիսուս գամեց իր խաչով եւ որմէ իլեց այն իշխանութիւնը որ անիկա կը բանեցնէր հաւատացեալներուն վրայ» (**Որոգի-նէս**):

14) **Գրիգոր Տաթեւացի խօսելով պղինձէ օձին ձողի վրայ բարձրացումին եւ Քրիստոսի խաչ բարձրանալուն մասին՝ տասը կէտեր կը յիշէ, որոնց եօթն այստեղ պիտի յիշեմ.-**

ա) Ինչպէս օձը ձողին վրայ բարձրացուեցաւ, այնպէս ալ մեր Տէրը խաչ բարձրացաւ:

բ) Ով որ պղինձէ օձին նայէր կը բժշկուէր, եւ ով որ հաւատայ Խաչեալին՝ կը բժշկուի Օձին մահաբեր թոյնէն:

գ) Պղինձէ օձը կ'ապրեցնէր եւ կը փրկէր իր թշնամիները՝ մարդիկը, եւ կը սատկեցնէր իր ազգակիցները՝ օձերը, իսկ մեր Տէրը կ'ապրեցնէ եւ կը փրկէ իր ազգակիցները՝ մարդիկը, եւ կը հալածէ Սատանան:

դ) Պղինձէ օձը ոսկետեսակ էր, իսկ Տիրոջ մարմինը աստուածատեսակ փառքով եւ ներդործութեամբ էր:

ե) Պղինձէ օձը անփուռ (չփտող) էր, իսկ Քրիստոսի մարմինը անապական է:

զ) Պղինձէ օձը առանց դառնութեան եւ առանց թոյնի էր, իսկ մեր Տէրը առանց մեղքերու դառնութեան է:

է) Մեռած օձը՝ օձեր կը սպաննէր եւ հարուածուածները կ'ապրեցնէր, իսկ մեր Տէրը իր մեռած մարմինով՝ մեղքը կը մեռցնէ եւ իր կենդանի աստուածութեամբը մարդիկը կը կենազործէ:

15) Մովսէս պղինձէ օձը բարձրացուց անապատին մէջ: Յովհաննէս Մկրտիչ քարոզեց անապատին մէջ: Աստուածաշունչին մէջ անապատը կը պատկերացնէ առաքինութիւններէ մերկացած ու Աստուծոյ ներկայութենէն դատարկուած մարդիկը: Պղինձէ օձին ձողի վրայ բարձրացումը ցոյց կու տար, թէ Քրիստոս խաչ պիտի բարձրանար՝ առաքինութիւններէ մերկացած մարդիկը զարդարելու առաքինութիւններով, եւ Աստուծոյ ներկայութենէն դատարկուածները՝ Աստուծոյ ներկայութեամբ լեցնելու:

16) «Եթէ երբեք Հրեաները պղինձէ օձին նայելով ազատեցան մահէն, որքա՛ն աւելի մեծ բարիքներ պիտի վայելեն անոնք՝ որոնք Խաչեալին կը հաւատան: Յիսուս չիսաշուեցաւ որովհետեւ տկար էր, կամ որովհետեւ Հրեաները իրմէ աւելի զօրաւոր էին, այլ՝ որովհետեւ սիրեց աշխարհը» (Յովհան Ոսկեբերան):

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ

(Շար. 12)

## ՅՕԴՈՒԱԾ

## ԿԸ ՆԱՅԻՄ Ս. ՄԻԲՌՈՆԻՆ...

*Լիբանանի ներկայ վերիվայրումներու եւ ալեկոծ վիճակին մէջ, կը պատրաստուինք նուիրական ու փառաւոր արարողութեան մը, որուն ականատեսը դառնալու բախտաւորութիւնը կ'ունենանք եօթը տարուան սպասումէ ետք - Միւռոնօրհնէքը: Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին բարձր տնօրինութեամբ եւ օրհնութեամբ, այս տարուան միւռոնօրհնէքը պիտի կատարուի Ուրբաթ, 1 Յուլիսին, Կաթողիկոսարանի շրջափակէն ներս: Արդէն իսկ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմերը, իրենց զաղութներու ներառումով, կը պատրաստուին հասնիլ Լիբանան, որպէսզի վերանորոգուին եւ ներշնչուին այս անզուգական արարողութեամբ:*

*Դպրեվանքեան առօրեայէս հազիւ պահ մը դադար առած՝ նստած էի գրասեղանիս ետին, երբ զգացի թէ «Հասկ» պաշտօնաթերթի անցեալի թիւե-*



ընդ սիրտս կը կանչէին: Աչքս գնաց յիսունական թուականներու «Հասկ»-ընդ: Ճիշդ է, որ մեր կաթողիկոսութեան համար, ինչպէս նաեւ հայութեան համար, յիսունական թուականները տազնապալից եղած են, սակայն միաժամանակ անոնք դարձած են կռուանը՝ մեր կաթողիկոսութեան ամրապնդուած ուխտին եւ ազգային արժէքներու պահպանութեան: Այո՛, չեմ ծնած ու չեմ տեսած այդ թուականները, որպէսզի աւելի հարազատօրէն հասկնամ այդ ժամանակի տազնապնդներն ու ալիքները, որոնց հայութիւնը, ի մասնաւորի կաթողիկոսութիւնը ականատես եղաւ, սակայն կը գիտակցիմ որ կրկնական «միջնաբերդը» միշտ ալ մնացած է իր վեհութեան մէջ...

Կը թերթատեմ էջերը, կը դիտեմ նկարները, եւ կը փնտռեմ յօդուած մը, որպէսզի ընթերցեմ զայն... եւ յանկարծ կը կենամ Միւսուորհնութեան մը նկարներուն առջեւ: Թէեւ թերթատումս աննպատակ կը թուէր եւ չէի ծրագրած, թէ ի՞նչ պիտի կարդամ, սակայն այս վարկեանիս, որ այս տողերը կը գրեմ, կ'անդրադառնամ, թէ ինչպէ՞ս եւ ինչո՞ւ այդ թիւը ի մասնաւորի սիրտըս կը քաշէր...:

«Հասկ», թիւ 10 Հոկտեմբեր, ԻԶ. Տարի, 1957<sup>1</sup>: Նախ կը դիտեմ նկարները ու ինքզինքս կը պատկերացնեմ Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի բակին մէջ՝ աղօտ, սեւ ու ճերմակ նկարներուն ընդմէջէն: Խուռներամ բազմութիւն մը, որ ասեղին իսկ տեղ չի գիշիր: Տանիքներէն, բարձր ու ցած տեղերէ մարդիկ անհամբեր կը սպասեն Զարեհ Ա. Վեհափառ Հայրապետի անոյժ դէմքին, որպէսզի դուրս գայ Վեհարանէն եւ շքեղ թափօրով ուղղուի Սրբոց Նահատակաց մատրան դիմաց, Միւսուորհնքի համար կառուցուած փայտէ բեմին վրայ: Կ'ուզեմ տեսնել Ս. Լուսաւորիչ Աջը՝ ապահով ձեռքերու մէջ...:

Տարբեր էր այս Միւսուորհնքը: Քանիբերորդ անգամ ըլլալով «տարբեր» էր այս միւսուորհնքը: Անթիլիասի բազմահազար ներկաները, միւսիթարութիւն եւ վիշտի դարմանում կը փնտռէին, մեր Հաւատքի Հօր՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչի անմահական մասունքէ Աջէն, որ տակաւին նոր «վերադարձած» էր իր տունը: Այո՛, հայկական ինքնութեան հանդէպ մեր ունեցած բծախնդրութենէն մղուած օրին ընտրուեցաւ եւ կը շարունակենք ընտրել «վերադարձած» բառը... սակայն, պահ մը մէկդի դնելով, նոյն տարուան ընթացքին տեղի ունեցած ազգավնաս միջադէպերը, ուզեցի պատկերացնել ներկաներուն հոգեկան ապրումներն ու զգացումները, իրենց աչքերը յառած Վեհարանի մուտքին...:

Միայն չորս եպիսկոպոսներ կը տեսնեմ պատկերին մէջ՝ Խորէն Արք. (ապա՝ Կաթողիկոս), Ղեւոնդ Արք., Տաճատ Եպս. եւ Արտակ Եպս.: Ականջ-

<sup>1</sup> Մէկ տարի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետին Աջը կ'անհետանայ Կրկնիկոյ Կաթողիկոսութենէն: 1957-ին, Ս. Աջին վերադարձին առթիւ, Զարեհ Ա. Վեհափառ Հայրապետին օրհնութեամբ եւ տնօրինումով, նոյն տարուան աշնան՝ Հոկտեմբեր 13-ին տեղի կ'ունենայ Սրբալոյս Միւսուորհնի Օրհնութիւնը:

ներուս մէջ կը հնչեն Արամ Ա. Վեհափառ Հայրապետին յաճախակի կերպով արտասանած խօսքը. «Կիրիկիոյ Կաթողիկոսութիւնը միայն քանի մը միաբաններով ալ գոյատեւած ու ոտքի կեցած է: Քանակը ոչինչ կ'ըսէ, այլ որակն է կարեւորը»: Այո, նկարներուն մէջ հոժ բազմութիւնն ալ կը վկայէր ու կը խօսէր այդ քանակին ու որակին մասին...:

Հետաքրքրութիւնս աւելի կը սրի եւ կ'ուզեմ գտնել քարոզին բաժինը, մտածելով թէ արդեօք Զարեհ Վեհափառը ի՞նչ պատգամ փոխանցեց այդ օր: Արդեօք այդքան բազմութիւն ի՞նչ լսելու եկած էր եւ ի՞նչ պատգամ տարին անոնք իրենց հետ: Կը կարդամ Վեհափառ Հօր խօսքերը եւ էութեամբս կը զգամ զանոնք. խօսքեր, որոնց համար Նորին Սրբութիւնը ամբողջ հոգի եւ շունչ վերապահած էր:

«... Մեր աղաչանքն է, ու մեր ամբողջ իղձը, որ Շնորհաց Տէրը Հայց. Եկեղեցին կանչէ բոլորին, ՔԱՆԻ ՈՐ ՄԻ Է ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԵՒ ՄԻ Է ՀԱՅՈՑ Ս. ՄԻԻՌՈՆԸ: Ո՛Չ ՈՔ ՊԻՏԻ ԿԱՐԵՆԱՅ ԲԱԺՆԵԼ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ, Ո՛Չ ՈՔ ՊԻՏԻ ԿԱՐԵՆԱՅ ԲԱԺՆԵԼ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒ Ո՛Չ ՈՔ ՊԻՏԻ ԿԱՐԵՆԱՅ ՄՈՒՑՆԵԼ ՄԵԶԻ ՄԵՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ: Թող մեր սուրբերը մինչեւ վերջ պահպանեն Հայց. Եկեղեցին եւ հրեշտակները հսկեն հայ ժողովուրդին վրայ: Այս սուրբ խորհուրդին առթիւ, Սուրբ Հոգին իջնէ՛ հայ ժողովուրդին եւ բոլոր այս միւռոնով մկրտուողներուն վրայ, որպէսզի կրկին դառնանք ՄԷԿ ՀՕՏ, ՄԷԿ ՀՈՎԻԻ ԵՒ ՄԷԿ ԵԿԵՂԵՑԻ»:

Բառերէն անդին, Հայրապետին տառապող սիրտն ու ձայնը կը զգայի հոգիիս մէջ: Կը զգայի, թէ Զարեհ Վեհափառը ի՞նչ վիշտերէ դուրս կը բերէր այս խօսքերը ու կ'ուզէր դրոշմել իւրաքանչիւր ունկնդրողի սրտին մէջ: Հոփիւի ձայնի նման, ան կը կանչէր իր գաւակները համախմբուելու մէկ երթի մէջ, զգուշացնելով բոլոր պառակտումի տանող ճամբաներէն ու փորձութիւններէն: Յովհաննէս Մկրտիչը չէր, որ անապատին մէջ կ'աղաղակէր ու կը քարոզէր Աստուծոյ արքայութեան գալուստին մասին, այլ՝ Հայոց Հայրապետին ձայնն էր, որ կը կանչէր իր գաւակները մէ՛կ Եկեղեցւոյ սիրոյ սուրբ յարկին տակ...:

Կանգ կ'առնեմ ու կը սկսիմ մտածել ներկային մասին: Հայերս որքա՛ն կը խօսինք միութեան ու միասնականութեան մասին: Բոլորս ալ կ'ուզենք հաւատալ միասնութեան ու միաբանութեան գաղափարին, սակայն որքա՛ն կը դժուարանանք զայն կիրարկելու, ինչ-ինչ պատճառներով: Շատերս կը կարծենք թէ միասնութիւնը միատիրութիւն է, իսկ շատերս կը հաւատանք որ մենք ճիշդ ենք, միւսները՝ սխալ: Շատերս ալ արդէն յանձնուած ենք այն մտքին թէ մենք երբեք միասնակամ պիտի չըլլանք: Ո՞ւր, ինչո՞վ, ինչպէ՞ս միասնակամ ենք կամ կրնանք ըլլալու նիւթը կրնայ մեծ քննարկումի, վէճի ու վիճաբանութեան առիթ տալ, բայց Զարեհ Վեհափառին խօսքերը, զիս կը մղեն անդրադառնալու երկու մեծ իրականութեանց, որուն մէջ մենք բոլորս մէկ ենք՝ Մեր նահատակաց արիւնը եւ Ս. Եկեղեցւոյ Միւռոնը:

Յաւ ի սիրտ, հայ ժողովուրդի անցեալն ու ներկան ծով դարձած է մեր

նահատակներուն սուրբ եւ անգին արեամբ: Չկայ աւելի սիրտ ու հոգի միացնող պատճառ, որքան մեր նահատակներով ու անձնագորհ անձնաւորութիւններով հարուստ ազգ ըլլալը: Արդեօք ինքնին կանչ ու կոչում չէ՞՞ այս մէկը մեզի համար, եւ պարտք՝ մեր նահատակներուն հանդէպ, միաձուլուելու հայ ազգի ինքնութեան տակ, այնպէս ինչպէս մէկ մարմնի տարբեր երակներէ հոսող արիւն: Արդեօք ուրիշ ի՞նչ կրնանք ընել եւ կամ ուրիշ ի՞նչ ճանապարհ կարելի է գտնել, եթէ ոչ մեր նահատակներուն սուրբ արեան շուրջ համախմբուելի՛ իբրեւ մէկ ազգ եւ մէկ ինքնութիւն: Թող մեր Տիրոջը Յիսուս Քրիստոսի փրկութիւնը օրինակ մը ըլլայ, թէ ինչպէս Ս. Խաչն ու փրկարար արիւնը համախմբեց ամբողջ ազգերը մէկ անունի տակ:

Զարեհ Վեհափառին ձայնը հարազատօրէն լսած եւ տառապալից օրերու աղանատեսը դարձած Արամ Ա. Վեհափառը, միասնականութեան եւ վերակազմաւորման նպատակով, 2022 թուականը հռչակեց «Մփիւռքի Տարի»: Չկայ աւելի անմիջական տեսիլք՝ քան տեսնել վերակազմակերպուած եւ ամրապնդուած Մփիւռք: Այսօրուան Հովիւը՝ Հայոց Հովուապետը կը կանչէ իր գաւակները. «Մէ՛կ ՀՕՏ, Մէ՛կ ՀՈՎԻԻ ԵՒ Մէ՛կ ԵԿԵՂԵՑԻ» կոչով: Կը կանչէ մեզ, իբրեւ Մփիւռք, ամուր կռնակ կազմելու, որպէսզի ո՛չ հայու ինքնութիւնը, ո՛չ մշակոյթը, ո՛չ հայրենիքը, ո՛չ լեզուն, ո՛չ դատը եւ ո՛չ ալ որեւէ հայկական արժէք փուլ գայ... Նահատակաց արիւնը տակաւին թաց է, իսկ ժամանակը՝ շատ կարճ...:

Նահատակաց արեան յարութեան խորհրդանիշը Ս. Միւռոնն է: Ս. Միւռոնով քանի՛-քանի՛ մանուկներ ու պատանիներ Ս. Հոգւոյ շնորհքը ստանալով, կը դառնան Հայ Առաքելական Եկեղեցւոյ գաւակ: Միւռոնը (մկրտութիւնը) ցոյց կու տայ, թէ մեր ազգը կը բազմանայ եւ նոր սերունդներ մեր արեան երակները կը նորոգեն: Ս. Միւռոնը ցոյց կու տայ, որ մենք մէ՛կ ազգի գաւակներ ենք, ըլլա՛նք Հայրենիքի մէջ, թէ Մփիւռքի մէջ՝ ըլլանք հայախօս, թէ օտարախօս: Ս. Միւռոնը կը խորհրդանշէ, թէ մենք մէ՛կ գմբէթի տակ ենք, որ գիտէ նայիլ միա՛յն դէպի երկինք: Ս. Միւռոնը կը խորհրդանշէ, որ մեր արիւնը, նոր անուշաբոյր կեանքով նորոգուած է եւ յանձնառութիւններ ունինք մեր ազգին ու եկեղեցիին հանդէպ...

Կը նայիմ այն պատկերին, ուր Զարեհ Վեհափառը երկիւղալից աչքերով կ'օրհնէ Ս. Միւռոնը՝ «վերադարձած» աջով: Բոլոր եպիսկոպոսներուն նայուածքները մէկ տեղ են՝ Ս. Միւռոնին, որ Հաւատքի Հօրը Աջը կը շարժէ: Ես ալ կարծէք կը նայիմ Ս. Միւռոնին մէջ, կ'ուզեմ անոր խորը թափանցել, տեսնել, զգալ, ըմբռնել զայն... Չորս եպիսկոպոսները եղած են 22, իսկ վարդապետաց դասը՝ 40... Կը սպասեմ Յուլիսին... կը սպասեմ անհամբեր լսելու մեր Հովուապետին ձայնը, որ ուժեղ պիտի հնչէ եւ նոր յոյս պիտի ներշնչէ տագնապալից այս օրերուն...:

ՊԱՐՈՅՐ ՎՐԴ. ՇԷՐՆԷՋԵԱՆ

### ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին հրամանով, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքի տպարանէն լոյս տեսաւ երգահան, խմբավար եւ ուսուցիչ Բարսեղ Կանաչեանին (1885-1967) «Երաժշտական Երկերու Ժողովածու»ն, երկու հատորով, աշխատութեամբ՝ երգահաւաք ու երաժշտաբան տիար Պետրոս Յովսէփ Ալահայտոյեանի եւ երաժշտական խմբագիր ու համակարգչային նօթագրող Դոկտ. Ծովիկ Մկրեան-Մարգարեանի (2019): Յաջորդաբար շնորհահանդէս կատարուեցաւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Կիլիկիա» սրահին (Անթիլիաս, 2019) եւ Կոմիտասի Թանգարան-Ինստիտուտին (Երեւան, 2021) մէջ:

ՀԱՍԿի յաջորդական թիւերով լոյս կ'ընծայենք գլխաւոր երեք խօսքերը.–

ա) Տիկ. Տաթևիկ Շախկուլեանի («Կոմիտաս»ի անուան կեդրոնի գիտական բաժինի վարիչ) վերլուծական բանախօսութիւնը:

բ) Դոկտ. Անդրանիկ Տագէսեանի ներկայացուցած Բ. Կանաչեանի կենսագրականը:

գ) Հոգւ. Տ. Մեղրիկ Եպս. Բարիքեանի Բ. Կանաչեանի երաժշտական վաստակը:

### ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱՉԵԱՆ (1885-1967)

... մեծ ուսուցչի ուղիով ...

*«Իր պզտիկութենէն երգի սիրահար, ջութակի գերի, այնքան միևնույն իր ըլլալը՝ ջութակահար, ատեն մը դաշնակահար, յետոյ՝ առաջնորդ նուագախումբի՝ ի Սամաթիա ու Գումգարու:*

*Եւրոպական երաժշտութեամբ, մաս մը աւելի՝ իտալական երաժշտութեամբ, մեծցած միտք մը, որ, սակայն, դեռ նոր կը բացուի լոյսին. միտք մը՝ որ մանկական է, յոյսեր ունի՝ բացուելու, մեծնալու... գեղեցկանալու...»:*

Բանահալաք, կոմպոզիտոր, կոմիտաս Վարդապետի սան Միհրան Թումանյանն այսպէս է նկարագրել հայ երաժշտական մշակույթի կարկառուն ներկայացուցիչ, կոմպոզիտոր, խմբավար, երաժշտական-հասարակական գործիչ, նոյնպէս կոմիտաս Վարդապետի սան Բարսեղ Կանաչեանին, որի հետ նրա մտերմութիւնը չի սահմանափակուել միայն վարդապետի ղեկավարութեամբ ու նախաձեռնութեամբ ուսումնական գործընթացի շրջանակով, այլեւ փոխադարձ յարգանքով շարունակուել է հետագայում:

Սկիզբ...

Բարսեղ Կանաչեանը ծնուել է Օսմանեան կայսրութեան հիւսիս արեւմուտքում գտնուող Ռոդոստո (ներկայում՝ Թեքիրդաղ) քաղաքում: Ներկայում, Թուրքաբնակ այս քաղաքում, Առաջին աշխարհամարտի շրջանում ապրում էին գլխավորապէս յոյներ, ապա նաեւ Թուրքեր եւ հայեր: Երեք տարեկանում Բարսեղ Կանաչեանը ընտանիքով տեղափոխուում է Կոստանդնուպոլիս, որտեղ ստանում է իր նախնական կրթութիւնը: Տասնմէկ տարեկանում գաղթում են Բուլղարիայի Վառնա քաղաքը, որը կոմպոզիտորի կեանքում երաժշտական կրթութիւն ստանալու իմաստով բեկումնային է լինում, քանի որ այստեղ է նա սովորում ջութակ, երաժշտութեան տեսութիւն եւ խմբավարութիւն՝ Նաթան Ամիրխանեանի ղեկավարութեամբ: 18 տարեկանից Կանաչեանը հաստատուում է Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում, որտեղ, շարունակելով երաժշտութեան բնագաւառում իր կատարելագործման ուղին, սովորում է դաշնամուր եւ հարմոնիա:

Կոմիտասի սան


1908 թ. Կանաչեանը վերադառնում է Կոստանդնուպոլիս: Այստեղ է 1910 թ. ծանօթացել կոմիտաս Վարդապետի հետ եւ դարձել նրա հանրայայտ «Գուսան» երգչախմբի անդամ, ապա նաեւ՝ սիրելի եւ վստահելի սան: Յայտնի է, որ իր բազմաթիւ սաներից կոմիտասն առանձնացրել էր շուրջ 16 անհատների, որոնց հետ նա մեծ նպատակներ իրագործելու յոյսեր ունէր եւ ծրագրել էր հայ երաժշտութեան զարգացման որոշակի ուղի: Ժամանակի ընթացքում սաները գտուել են, եւ մնացել են հինգը, այդ թւում՝ Բարսեղ Կանաչեանը:

Այս խումբը որոշակիօրէն սկսել էր անցնել կոմիտասի նախանշած ուղիով: Անգամ ձեւակերպել էր սեփական տարբերանշանը:



Կոմիտաս Վարդապետի սաները





Կոմիտասի սաների տարբերանշանի փորձեր

Խմբի անդամների մտերմութիւնն այնքան իւրատիպ էր, որ անգամ նրանք համատեղ ստեղծագործական նախաձեռնութիւններով էին հանդէս գալիս: Այսպէս, 1920 թուականին է վերաբերում «Անուշ» նախագծի իրագործումը, որը հիմնուում էր Յովհաննէս Թումանեանի պիեսի վրայ եւ որը հեղինակել էին Կոմիտասի սաները: Նախագիծն անուանել էին «գուսաներգութիւն» եւ ընդգրկել հուրինների տեսարանը՝ երեք արար եւ չորս պատկերի շրջանակներում: «Անուշ»ի թեմայի ընտրութիւնը եւս վկայում է աշակերտների կողմից Կոմիտասեան գաղափարների վերարտադրման միտման մասին. յիշենք, որ Կոմիտասն ինքը «Անուշ» օպերայի հեղինակ էր, որի աւարտուած լինել կամ չլինելը դեռեւս քննարկելի է:

1920 թ. Կոմիտասի սաները մեկնում են Փարիզ երաժշտական կրթութիւն ստանալու նպատակով: Փարիզում Բարսեղ Կանաչեանը ընկերների հետ միասին գիտելիքներ է ստանում երաժշտատեսական առարկաներից, սակայն նախատեսուած երկու տարուայ ուսուցման փոխարէն այնտեղ սովորում է մէկ տարի:



Կոմիտասի սաների «Անուշ» գուսաներգութեան պաստառը

Ուսուցիչներ

Ինչպէս ցանկացած անհատի պարագայում, Բարսեղ Կանաչեանի մասնագիտական ուղու ձեւաւորման գործընթացում խիստ կարեւոր է եղել որոշակի ուսուցիչների հետ հանդիպումը: Կանաչեանը ուսման առաջին փուլում, ինչպէս նշուեց, երաժշտական գիտելիքներ ու հմտութիւններ է ձեռք բերել հայ կոմպոզիտոր, խմբավար եւ երգեհոնահար Նաթան Ամիրխանեանի (1872-

1949) ղեկավարութեամբ, որը, ծնունած լինելով Կոստանդնուպոլսում, փոքր հասակում ապրել է Թավրիզում, յետոյ՝ Թիֆլիսում, ապա երաժշտական կրթութիւնը կատարելագործել է Հելսինկիի կոնսերվատորիայում եւ Մյունխենի երաժշտական ակադեմիայում: Գործունէութիւն է ծաւալել Օդեսայում՝ լինելով օպերայի փոխդիրիժորը, Բաքուում՝ ղեկավարելով հայկական երգչախումբը, Սոֆիայում՝ ղեկավարելով օպերայի նուագախումբը, եւ Բոստոնում՝ ղեկավարելով 360 հոգուց բաղկացած երգչախումբը: Այսպիսի հետաքրքիր գործունէութիւն ծաւալող անհատի մօտ է սովորել Կանաչեանը:

Կանաչեանի՝ Փարիզի ուսուցիչն էր Փրանսիացի կոմպոզիտոր, երաժշտութեան տեսաբան, մանկավարժ՝ Ռընէ Լընորմանը (1848-1932), որը հեղինակ է կամերային-գործիքային ստեղծագործութիւնների եւ հարմոնիայի ուսումնական ձեռնարկի: Լընորմանի միջոցով է Կանաչեանը ձեռք բերել տեսական գիտելիքներ ու հմտութիւններ երաժշտութեան բնագաւառում:

Սակայն կոմպոզիտորի համար առանձնակի կարեւոր է եղել Կոմիտաս Վարդապետի (1869-1935) հետ հանդիպումը, նրա երգչախմբին անդամակցումը, նրան աշակերտելը, ապա նաեւ նրա խորհուրդներով մասնագիտական գործունէութեան նախանշումը: Կոմիտասեան ազդեցութիւնը շահեկանօրէն է դրսեւորուել Կանաչեանի երաժշտական գործունէութեան վրայ, որպէս թէ՛ կոմպոզիտոր եւ թէ՛ կատարող:

Այսպէս, 1922 թ.-ից սկսած Բարսեղ Կանաչեանը հանդէս է գալիս հայկական տարբեր գաղթօջախներում՝ ներկայանալով համերգներով եւ ծաւալելով մանկավարժական գործունէութիւն: 1928-ից դասաւանդում է Նիկոսիայի (Կիպրոս) Մելքոնեան վարժարանում, իսկ 1933-ից՝ Բեյրութի (Լիբանան) Նշան Փալանճեան ճեմարանում: Ակնյայտօրէն կոմպոզիտորի՝ այս ոլորտում ունեցած աշխատանքը զուգահեռելի է ուսուցչի համանման գործունէութեան հետ: Կոմիտասն էլ էր շրջում հայաբնակ տարբեր վայրերում, դասաւանդում, երգչախմբեր կազմում, համերգներ կազմակերպում, յօրինում խմբերգեր՝ տուեալ կազմին համապատասխան: Արդիւնքում՝ Կոմիտասի ժառանգութեան մէջ հանդիպում ենք միեւնոյն երգի զանազան խմբերգային կամ մենակատարային (դաշնամուրային նուագակցութեամբ) մշակումներ, անգամ նոյն երգերի վրայ հիմնուող դաշնամուրային ստեղծագործութիւններ: Յատկանշական կերպով Բարսեղ Կանաչեանի ժառանգութեան մէջ էլ ենք հանդիպում նոյն իրողութեանը՝ միեւնոյն երգի զանազան մշակումների, ինչպէս դա տեղի է ունենում նշանաւոր «Օրոր» երգի պարագայում, որի թէ՛ մեներգային, թէ՛ խմբերգային տարբերակներ է հեղինակել Կանաչեանը: Նոյն երեւոյթն է դրսեւորուում «Ծով աչեր», «Ծիծեռնակ», «Ծընկըլը, մընկըլը», «Կորանի» եւ այլ երգերի պարագայում:

Յատկանշական է Գամառ Քաթիպայի հեղինակած բանաստեղծական տեքստով «Օրոր» երգի իրողութիւնը: Կոմիտաս Վարդապետի ժառանգու-

Թեան մէջ հանդիպում ենք նոյն բանաստեղծական տեքստով ժողովրդական երգի, որի մշակումը նոյնպէս նա իրականացրել է: Դիմելով նոյն տեքստին՝ Կանաչեանը յօրինել է իր ստեղծագործութիւնը՝ ինքնուրույն (այսինքն՝ ոչ ժողովրդական) մեղեդիով, ի տարբերութիւն Կոմիտասի երգի տարբերակի:

Մէկ այլ ուշագրաւ փաստ է այն հանգամանքը, որ Կոմիտասի «Գուսան» երգչախմբի նմանութեամբ, Կանաչեանը Լիբանանում հիմնադրել է նոյնանուն երգչախումբ, որի կենսագրութիւնն ընդգրկում է 1933-1961 թթ.: Ինչպէս Կոմիտասի «Գուսան» երգչախումբն է մեծ դեր խաղացել Կոստանդնուպոլսի երաժշտական կեանքում, այնպէս էլ Կանաչեանի «Գուսանն» է խիստ կարեւոր նշանակութիւն ունեցել Լիբանանի երաժշտական կեանքում՝ առաւել եւս քաղաքական-սոցիալական բարդ իրավիճակում, երբ թէ՛ երգչախմբի մասնակիցները, թէ՛ պարզապէս ունկնդիրները կարիք ունէին հոգեւոր սնունդի: Աւելին, Կոմիտասի երգչախումբը բաղկացած էր 300 անդամներից, եւ նոյնաքանակ երգչախմբով Կանաչեանն է ելոյթներ ունեցել:

Կոմիտաս-Կանաչեան աղերսները քննարկելիս յատկապէս գրաւիչ է որպէս ստեղծագործող, նրանց գործունէութեան համեմատութիւնը: Պարզուում է, որ թէեւ խիստ տարբեր անհատներ են, եւ Կանաչեանի ստեղծագործական գրելաոճը ուղղակիօրէն չի շարունակում Կոմիտասին, բայց գոյութիւն ունեցող զուգահեռները առանձնակի հետաքրքիր են:

Այսպէս, Կոմիտասի անունը համաշխարհային երաժշտութեան պատմութեան մասշտաբներով կարեւորում է որպէս բանահաւաք: Նա առաջինն էր (անգամ նախորդել է հունգարացի երաժիշտ, բանահաւաք, կոմպոզիտոր, հանրայայտ Բելա Բարտոկին), որ գիտական մակարդակով կարեւորեց ժողովրդական եւ առհասարակ աւանդական երաժշտութիւնը եւ բուն, իրական ժողովրդական երաժշտութիւն յայտնաբերելու համար թիրախաւորեց խուլ գիւղերը, որտեղ բնակիչներն արտաքին շփումներ չունեն այլ գիւղերի կամ այլ ազգերի ներկայացուցիչների հետ: Եթէ, օրինակ, քաղաքներում ապրել են զանազան ազգերի ներկայացուցիչներ, որոնք ունեցել են ընդհանուր կենցաղ եւ հետեւաբար նաեւ ընդհանուր մշակոյթ, ապա գիւղերում ապրել են մեկուսացուած եւ այդպիսով պահպանել են մաքուր մշակոյթը: Այս իրողութեան գիտակցումը Կոմիտասին դարձրեց ոլորտի բացառիկ ներկայացուցիչ: Բնական է, որ ժողովրդական երաժշտութեան հաւաքման վերաբերեալ իր մօտեցումները նոյնպէս նա պիտի փոխանցէր իր աշակերտներին: Եւ ահա Բարսեղ Կանաչեանի ժառանգութեան մէջ հանդիպում ենք ժողովրդական երգերի գրառումներ: Ի հարկէ, ուսուցչի եւ աշակերտի՝ այս ոլորտի գործունէութեան մէջ ծաւալները բոլորովին անհամեմատելի են, որովհետեւ եթէ Կոմիտասը նպատակայնօրէն էր հաւաքում ժողովրդական երաժշտութիւն, ապա Կանաչեանը դա անում էր իր ստեղծագործութիւններում ընդգրկելու համար: Բայց միեւնոյն ժամանակ յատկանշական է, որ Կանաչ-

եանը ուսուցչի օրինակով առանձնացրել է ժողովրդական երաժշտութիւնը, որպէս իր որոշ ստեղծագործութիւնների համար հիմք:

Արդիւնքում, Կանաչեանը հեղինակել է ժողովրդական երգերի վրայ հիմնուող մի շարք գործեր: Նրա ստեղծագործական մօտեցման գլխաւոր իւրաքանչեւ յատկութիւնը սահուն անցումն է ժողովրդական երգերից դէպի իր սեփական գործերը: Այսպէս, Կանաչեանը մի շարք խմբերգերում նախ շարադրում է ժողովրդական թեման կամ թեմաները, ապա նոր անցնում իր ստեղծագործութեանը: Վերջինս էլ յաճախ բաղկացած է լինում երկու մասից՝ ժողովրդական երգի մշակում, ապա նրանից անկախ, բայց միեւնոյն ժամանակ նրա ոճով երաժշտաբանաստեղծական շարադրանք: Այս սկզբունքով են ձեւաւորուել «Դալիլո», «Հոյ նար», «Վարդերի հետ» եւ այլ խմբերգեր: Ինչ վերաբերում է նրա ինքնուրոյն՝ այսինքն ժողովրդական երգերից անկախ ստեղծագործութիւններին, ապա այստեղ էլ նա դրսեւորում է ստեղծագործական վարպետութիւն բանաստեղծական տեքստի եւ երաժշտական բաղադրիչի համաձուլման, ներդաշնակման, ֆակտուրայի եւ այլ առումներով:

Կանաչեանի ժառանգութեան մէջ յատուկ տեղ ունեն քայլերգային ոճի երգերը, այդ թւում «Ռազմերգ», «Քայլերգ կամաւորներու», գուցէ այստեղ կարող ենք նշել նաեւ Հայաստանի Հանրապետութեան հիմնը՝ «Մեր հայրենիքը»: Կոմիտասի ժառանգութեան մէջ էլ ենք հանդիպում նոյն ժանրի գործեր:

Ինչպէս եւ Կոմիտասի պարագայում, Կանաչեանի ստեղծագործութիւններում ժանրային ընտրութիւնը մեծ չէ. նա գրել է հիմնականում երգեր դաշնամուրային նուագակցութեամբ, խմբերգեր, դաշնամուրային պիեսներ եւ կատարել է մէկ օպերային երկի փորձ՝ Լեւոն Շանթի «Հին աստուածներ» դրամայի վրայ հիմնուող «Աբեղայ» օպերան: Հայ երաժշտագիտութեան մէջ ընդունուած է այն կարծիքը, որ 19-րդ դարավերջին եւ 20-րդ դարի սկզբին հայ կոմպոզիտորները գրում էին հիմնականում վոկալ եւ խմբերգային ստեղծագործութիւններ՝ կատարումը ապահովելու կամ այլ կերպ ասած՝ կատարողական պահանջարկը բաւարարելու համար: Այսինքն՝ այս կարծիքը ենթադրում է, որ գործիքային երկեր չէին գրում, քանի որ կատարելու խնդիր պիտի գոյանար, նուագախմբերի մասնակցութեան կարիք պիտի լինէր, ինչը հասարակ հարց չէր: Սակայն Բարսեղ Կանաչեանի պարագայում տեսնում ենք, որ իրողութիւնն այլ էր: Դեռեւս դարասկզբին նա Կոստանդնուպոլսում հիմնադրել եւ ղեկավարում էր «Քնար» նուագախումբը: Սա նշանակում է, որ իր տրամադրութեան տակ ունէր նուագախումբ, որի համար կարող էր գրել գործիքային երկեր, սակայն նա այդպէս չի արել, այլ ընտրել է գլխաւորապէս վոկալ եւ խմբերգային ժանրերը, ուստի բնական է եզրակացնել, որ ժանրային այսպիսի ընտրութիւնը պայմանաւորուած էր ստեղծագործական նախընտրութեամբ:

Ի հարկէ, խիստ գրաւիչ կը լինէր տեսնել «Աբեղայ» օպերան բեմահարթակում: Յոլանք՝ մի օր այսպիսի առիթ կը լինի: Իսկ առայժմ այս ստեղծագործութեան ձեռագիրը պահուում է պահոցում: Այս ուղղութեամբ եւս մէկ հարց է առաջանում՝ կապուած կոմիտասեան առնչութիւնների հետ. արդեօ՞ք «Աբեղայ» օպերայի նախագիծը նոյնպէս կանաչեանը չէր քննարկել կոմիտասի հետ: Յիշենք, որ կոմիտասը մի քանի օպերային նախագծեր ունէր, որոնք, ցաւօք, չի հասցրել աւարտել: Ընդ որում՝ դրանք բոլորը ներկայացնում էին զանազան օպերային ժանրեր. քնարա-դրամատիկական «Անուշը», էպիկական «Սասնայ ծռերը», պատմական «Վարդանանցը», կոմիկական «Քաղաքավարութեան վնասները»: Կանաչեանի ընտրած օպերային սիւժեն էլ մէկ այլ ժանրային ոլորտ է փոխադրում՝ հայ երաժշտութեան օպերային ժանրում եւս մէկ թեմատիկա առաջ քաշելով: Այնուամենայնիւ, որեւէ տեղեկութիւն չունենք, թէ արդեօք սա նպատակային ընտրութիւն է եղել:

Ամփոփելով պէտք է նկատել հետեւեալը. անարդար է այն հանգամանքը, որ Բարսեղ Կանաչեանի անունը երաժշտասէր հանրութեանը գլխաւորապէս յայտնի է Հայոց ազգային հիմնի եւ «Օրոր»-ի առնչութեամբ: Իրականում նրա ամբողջ կոմպոզիտորական ժառանգութիւնը պէտք է ակտիւ բեմական կեանք ունենա՝ այդպիսով ցոյց տալով հայ երաժշտարուեստի հարստութեան եւս մէկ հանգրուան:

ՏԱԹԵԻԻԿ ՇԱԽԿՈՒԼԵԱՆ  
Կոմիտասի քանգարան-ինստիտուտի  
գիտական բաժնի ղեկավար



**ՊԱՏՄԱ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ**

**90-ԱՄԵԱՅ ՀՈՒՆՁՔԸ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ  
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԴՊՐԵՎԱՆՔԻՆ**

**S. S. ԽՈՐԵՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԲԱՐՈՅԵԱՆ**

Ծնած է 24 Նոյեմբեր 1914-ին, Նիկոսիա (Կիպրոս): Աւագանի անունն է Մեսրոպ: Նախնական կրթութիւնը ստացած է Նիկոսիոյ Ազգ. Մելիքեան Վարժարանին մէջ: 3 Հոկտեմբեր 1931-ին մուտք գործած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նորաբաց Դպրեվանքէն ներս, յանձնարարութեամբ թեմի առաջնորդ Պետրոս Արք. Սարաճեանի (ապա Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ):

Դպրեվանքի ժառանգաւորաց շրջանը աւարտելէ ետք, Սարկաւազ ձեռնադրուած է 19 Մայիս 1935-ին, ձեռամբ դպրեվանքի վերատեսուչ Շահէ Արք. Գասպարեանի: Իսկ երկու տարի ետք, 16 Մայիս 1937-ին՝ Կուսակրօն Եկեղեցական ձեռնադրուած է, ձեռամբ Կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ Պետրոս Արք. Սարաճեանի, եւ վերակոչուած՝ **Տ. ԽՈՐԷՆ ԱԲԵՂԱՅ**:

Տարի մը ետք, 8 Հոկտ. 1938-ին Պետրոս Սրբազան իր հոգեծին զաւակին շնորհած է Վարդապետական Գաւազանի իշխանութիւն:

Նախքան վարչական պաշտօններ ստանձնելը, Խորէն Վարդապետ Կաթողիկոսարանէն ներս հետեւեալ պաշտօնները ստանձնած է. դիւանապետութիւն, գաւազանակրութիւն, դպրեվանքի փոխ տեսչութիւն եւ անդամ եղած է Տնօրէն ժողովոյ:

14 Յուլիս 1941-ին Կաթողիկոսական Տեղապահ Եղիշէ Արք. Կարոյեան իրեն շնորհած է Վարդապետական Լանջախաչ եւ Մանուշակագոյն Ծաղկեայ Փիլոն կրելու իրաւունք, առ ի գնահատութիւն իր բարւոք ծառայութեան:

2 Փետրուար 1942-ին Բերիոյ Թեմի Խառն ժողովին կողմէ ընտրուած է Ճէզիրէի Հայոց Առաջնորդական Փոխանորդ, պաշտօն՝ որ վարած է մինչեւ 1947-ի Հոկտեմբերը, կազմակերպած է թեմը եւ մեծ ձեռներէցութիւն ցուցաբերած՝ թեմական իր գործունէութեան մէջ, մանաւանդ այնպիսի պայմաններու տակ, երբ թեմը նոր կը կազմակերպուէր, եւ երկիրը ծանր պայքարի մէջ էր իր անկախութիւնը կերտելու համար:

Ճէզիրէի Առաջնորդական Փոխանորդի իր պաշտօնավարութեան ըն-

Թացքին՝ Գարեգին Ա. Կաթողիկոս, Բերիոյ Թեմի Խառն Ժողովոյ խնդրանքին վրայ, Խորէն Վարդապետին շնորհած է Ծայրագոյն Վարդապետութեան իշխանութիւն, Անթիլիասի Մայր Տաճարին մէջ, 19 Մայիս 1946-ին:

Երբ 16 Փետրուար 1947-ին կոչուած է Կաթողիկոսարանի Մայր Տաճարի լուսարարապետութեան եւ Դրան Եպիսկոպոսի պաշտօնին, եպիսկոպոսական ձեռնադրութիւն եւ օծում ստացած է, դարձեալ ձեռամբ Գարեգին Ա. Կաթողիկոսի, օծակից ունենալով Տ. Փառէն, Տ. Չարեհ, Տ. Դերենիկ եւ Տ. Ղեւոնդ Ծայրագոյն Վարդապետները:

Չորս տարի վարելէ ետք Կաթողիկոսարանի գոյգ կարեւորագոյն պաշտօնները, 25 Դեկտեմբեր 1951-ին, Լիբանանի Թեմի Գաւառական Ժողովին կողմէ միաձայնութեամբ ընտրուած է Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ:

Երիտասարդ, խանդավառ եւ ձեռներէջ առաջնորդին գործունէութիւնը ծաւալած է երեք ուղղութիւններով.

Նախ կազմակերպուած են առաջնորդարանի ներքին վարչական կառույցները: Բոլոր ժողովներն ու խորհուրդները կանոնաւորապէս սկսած են գործել հերթական նիստերով եւ արդիւնաբեր գործունէութեամբ: Թեմի պիւստձէն պատկառելի գումարի մը հասած է եւ լիովին ապահովուած: Առաջնորդարանի եւ թեմական ու թաղական մարմիններու կապը աւելի սերտացած են: Բարեսիրական հաստատութեանց եւ միութեանց հետ կապն ու գործունէութիւնը ամուր հիմերու վրայ դրուած: Այս բոլորէն անկախ, բարերարութեամբ եւ հանգանակութեամբ գնուած են առաջնորդարանի ներկայ շէնքը եւ անոր յարակից՝ պարսկական հիւպատոսարանի կալուածը: Լիբանանի Թեմի շինարար առաջնորդը յաջողած է ապահովել բարերարութիւնը Ազգ. Առաջնորդարանի նոր շէնքին, որ պիտի կառուցուէր Ս. Նշանի հողատարածքին հարաւային կողմը, եռայարկ եւ հայ ժողովուրդին պատիւ բերող շինութեամբ մը:

Սրբազանի գործունէութեան սրտայնդիչ աշխատանքներէն մին եղած է եկեղեցաշինութիւնը: Լիբանանի Թեմին բոլոր եկեղեցիները վերանորոգուած եւ բարեզարդուած են: Ի հիմանէ նորոգուած են բազմաթիւ եկեղեցիներ, հետզհետէ կառուցուած են Էշրէֆիէի Ս. Յակոբ, Թրիփոլիի Ս. Հոգեգալստեան, Ճիւնիի Ս. Յարութիւն, Այնճարի Ս. Պօղոս, Թիրոյի Սրբոց Վարդանանց եւ Անդր-Նա-հարի Ազգ. Գերեզմանատան Եկեղեցիները:

Առաջնորդ Խորէն Սրբազանի ոչ նուազ արդիւնալից երեսը անկասկած կարելի է տեսնել կրթական ու դաստիարակչական մարզերուն մէջ: Անոնցմէ ներս իր ձեռք բերած յաջողութիւններուն զսպանակիչ ուժը եղած են իր անսահման կորովն ու ապագայ հայ սերունդին առողջ եւ հաստատուն դաստիարակութիւն մը տալու ձգտումը: Նոր ու արդի մանկավարժութեան պայմանները լրացնող նոր շէնքերու շինութեամբ, հայ կրթական հիմնարկութեանց հետ դաշն գործակցութեամբ, տոհմիկ եւ կեանքի պայքարին պահանջած կրթութեան տրուած զարկով, ուսուցիչներու տնտեսական կացութեան բարւոքման ջանքերով, դպրոցներու ներքին գործունէութեան վրայ կատա-

րած անմիջական հսկողութեամբ, անվարան կրնանք յայտարարել, որ ան լիովին յաջողած է իր ծրագրերներուն եւ առաջադրութեանց մէջ:

Ուսումնական կեանքի բարելավման եւ հաստատուն պահպանման տեսակէտէն, սակայն, անփոխարինելի պիտի մնայ Սրբազանին մատուցած ծառայութիւնը Լիբանանի Թեմին՝ երկու գոլէճներու ապահովումով:

Արդարեւ, շնորհիւ իր բազմաթիւ տեսակցութեանց եւ համոզկեր առաջարկութեանց, Լիբանանի Թեմի անմոռանալի առաջնորդը իրագործման հունի մէջ դրած է երկու բարձրագոյն վարժարաններու շինութիւնը, մին՝ Պէյրութի մէջ, Ս. Նշանի կողքին, պետական երեսփոխան պրն. Սուրէն Խանամիրեանի իշխանական նուիրատուութեամբ, միւսը Պուրճ Համուտի մէջ, Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մօտիկ ազգապատկան կալուածին վրայ, Հայ Կրթական Հիմնարկութեան բարերարուհի տիկ. Սոֆիա Յակոբեանի մեծագումար նուիրատուութեամբ:

Լիբանանի բարեխնամ կառավարութիւնն ալ, ատենին գնահատելով հայոց առաջնորդին կորովի աշխատանքն ու հայ համայնքին եւ ընդհանրապէս լիբանանեան հայրենիքին վերելքին բերած իր նպաստը, 1955 թուի Հոկտեմբերին զինք պարգեւատրած է Մայրիներու Առաջին Կարգի Հրամանատարի շքանշանով:

\*

\* \*

Գարեգին Ա. Կաթողիկոսի վախճանումէն (1952) ետք, երեք տարի շատ դժուար եղած է նոր Կաթողիկոսի մը ընտրութեան կազմակերպումը: Քանիցս ձգձգուած է. սուգի քօղը թանձրօրէն իջած է Ս. Աթոռին վրայ, յամեցած է հոն եւ գուցէ տակաւին մնար այնպէս ընդերկար, եթէ 1955 Հոկտեմբեր 23-ին գումարուած Միաբանական Ընդհ. Ժողովը հրաժարեալ իսպառ Արք. Աջապահեանի տեղ Կաթողիկոսական Տեղապահ ընտրած չըլլար ինքն Արք. Բարոյեանը, որ անսայթաք կերպով զսպանակած է ընտրական բոլոր աշխատանքները եւ կարճագոյն ժամանակի մը մէջ (20 Փետրուար 1956) յաջողած է կատարել Կաթողիկոսական ընտրութիւնը՝ յանձին Բերիոյ Թեմի բազմարդիւն առաջնորդ Զարեհ Եպս. Փայասլեանի, որուն աջ բազուկը հանդիսացած է եօթը տարի շարունակ:

Նորընտիր հայրապետին լիակատար վստահութեան արժանացած ինքն Սրբազան, որ Արքութեան պատիւ եւ տիրոջ ստացած էր 1956 Հոկտեմբերին Զարեհ Կաթողիկոսէն, 1957 Հոկտեմբերին կը մեկնէր Միացեալ Նահանգներ իբրեւ Լիազօր Պատուիրակ Ն. Ս. Օծութեան:



\*  
\* \*

Հայրապետական Լիազոր Պատուիրակը ութը ամիս շարունակ շրջած է Միացեալ Նահանգներու բոլոր այն կարեւոր կեդրոններն ու շրջանները, ուր անհրաժեշտ նկատուած է իր ներկայութիւնը՝ թեմական-վարչական կազմակերպութեան գծով: Ան պատարագած է, քարոզած եւ կարդացած է Նորին Վեհափառութեան Սրբատար Կոնդակը, բանախօսութիւններ տուած, ներկայացուցած Կիլիկեան Աթոռին եւ դպրեմանքին դերն ու կոչումը Սփիւռքի հայութեան կեանքին մէջ: Այս բոլորէն անկախ Սրբազան Պատուիրակին առաքելութիւնը փառաւոր եղած է նաեւ նիւթական իմաստով: Հանգանակութիւնը, որուն ձեռնարկած է Պատուիրակ Սրբազանը, մօտ կէս միլիոն տուար արդիւնք մը բերած է, որով նիւթապէս ինքնաբաւ դարձած է Կաթողիկոսարանը:

Միացեալ Նահանգներու եւ Գանատայի մէջ իր կեցութեան ընթացքին, Պատուիրակ Սրբազանը առիթը ունեցած է տեսակցելու Ամերիկայի Միացեալ Նահանգներու փոխ նախագահ Պ. Ռ. Նիքսընի հետ, այլ բարձրաստիճան պետական անձնաւորութեանց եւ քաղաքապետերու հետ, որոնք խոր հետաքրքրութիւն ցոյց տուած են դէպի Հայ եկեղեցին եւ մեծապէս գնահատած՝ Կիլիկեան Աթոռը, որ իր հովանին տարածած է անգլուխ եւ անհովիւ եկեղեցիներու վրայ՝ անոնց սրտագին կոչին ընդառաջելով: Կաթողիկոսական Նուիրակի այս օրհնաբեր այցելութիւնը առիթ մը եղած է նաեւ վերակենդանութեան՝ ամերիկահայ գաղութին համար, վերաքննութեան՝ հայ ժողովուրդին ապագայով մտահոգ ղեկավարութեան համար, որովհետեւ ամերիկահայ երիտասարդութիւնը ցոյց տուած է, թէ կը մնայ հայու իր ոգիով եւ զգացումներով, եւ թէ իր սրտի բաժակէն չէ նուազած հաւատքն ու ազգասիրութիւնը:

Կաթողիկոսական Նուիրակը իր առաքելութեան մէջ լիովին յաջողած, կաթողիկոսարան վերադարձած է 16 Յունիս 1958-ին: Նոյն պաշտօնով ան յաջորդաբար այցելած է Յունաստանի, Թեհրանի, Իրանա-Հնդկաստանի եւ Ատրպատականի նոր ընդունուած թեմերը, վերարժարժելով այդ թեմերու ժողովուրդներու հոգիին մէջ սէրն ու փարումը Հայ եկեղեցւոյ, միաժամանակ վերակենդանացնելով եկեղեցական եւ ազգային հասարակական մարմինները:

\*  
\* \*

Ձարեհ Ա. Կաթողիկոսի անակնկալ եւ վաղահաս վախճանումէն ետք, երբ Կիլիկիոյ Ս. Աթոռը զրկուած էր իր առաքելատիպ գահակալէն, համայն հայ ժողովուրդի ակնարկը կեդրոնացած է Լիբանանի Առաջնորդին վրայ: «Վայր-

կեանի մարդը» եղած է ան, հայ ժողովուրդի բախտորոշ ներկային ու ապագային համար այնքան անհրաժեշտ եղող խորապէս ու վճռական ղեկավարն ու անվեհեր առաջնորդը: Այս վստահութեամբ ալ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանութիւնը, 25 Փետրուար 1963-ին իր լիակատար նիստին մէջ, միաձայնութեամբ զինք վերստին ընտրած է Կաթողիկոսական Տեղապահ:

Կաթողիկոսական ընտրութեան Պատգամաւորական Ժողովը, գումարուած 5 Մայիս 1963-ին, աննախընթաց էր, այն պատճառաւ որ անոր կը մասնակցէին, առաջին անգամ ըլլալով, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միացած Միացեալ Նահանգներու, Թեհրանի, Ատրպատականի, Իրանա-Հընդկաստանի եւ Յունաստանի թեմերուն պատգամաւորները:

Հայ ժողովուրդին կամքը արտայայտող պատկառելի այս ժողովը եւս իր ձայները կեդրոնացուցած է Կաթողիկոսական տեղապահ Խորէն Արք. Բարոյեանի վրայ, քաջ գիտնալով որ ան պիտի յաջողէր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը պահել վերջին եօթը տարուան ձեռք բերուած համագաղութային բարձր պատուանդանին վրայ, առաւել եւս թափ տալով վերանորոգչական այն սրբազան շարժումին, որուն լայն չափով մասնակից եղած էր արդէն, իր աւագ եղբօր՝ Զարեհ Կաթողիկոսի հետ:

Ահա, ուրուագծային ձեւով, կեանքի ընթացքը Ս. Աթոռոյս նորընտիր գահակալին, որ իր ուժերու լրումին մէջ, ամուր ձեռքերով կը ստանձնէր ղեկը սփիւռքահայութեան կեանքի նաւուն:

Պատմական եւ պանծալի Մեծի Տանն Կիլիկիոյ այս Աթոռը արժանընտիր գահակալով նոր հանգրուանէ մը ճամբայ կ'ելլէր դարձեալ, նոր յոյսերով եւ նոր առաջադրութիւններով:

Ընտրեալ հայրապետի Օծման արարողութիւնը տեղի ունեցած է Մայիս 1963-ին:

Արեւածագէն առաջ հաւատացեալ հայ ժողովուրդը յորդահոս գետի մը նման հոսած է դէպի Անթիլիաս:

Հայ Եկեղեցւոյ հաւատարիմ, իր աւանդութեանց նախանձախնդիր հայ ժողովուրդն էր, որ ծովածաւալ բազմութեամբ յորդած էր Կաթողիկոսարանի շրջափակին մէջ եւ շրջակայ ճանապարհներուն վրայ: Հեռաւոր Ամբրիկայէն, Յունաստանէն, Կիպրոսէն, Սուրիայէն, Պարսկաստանէն եւ մանաւանդ Լիբանանէն եկած հայութիւնն էր, որ համախմբուած էր իր հոգեւոր հայրենիքին՝ Հայ Եկեղեցւոյ ոգեղէն ոլորտին մէջ:

Օծման այս փառահեղ հանդիսութեան ներկայ եղած է Լիբանանի վարչապետ Ռաշիտ Քարամէ, որ ներկայացուցած է Հանրապետութեան նախագահ Ն.Վ. Զօր. Ֆուատ Շեհապը: Ներկայ եղած են նախարարներ, երեսփոխաններ, գիւանազիտական անձնաւորութիւններ եւ հոգեւոր պետեր: Երուսաղէմի Առաքելական Ս. Աթոռին կողմէ լուսարարապետ Հայրիկ Արք. Ասլանեան փոխանցած է Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի շնորհաւորութեանց մաղթանքները:

Օծման հոգեպարար արարողութենէն ետք, երբ թափօրը վեհարան ուղղուած է, միաբանութեան երիցագոյն անդամ Ղեւոնդ Արք. Չէպէեան ջերմ խօսքերով հայրապետական պատմական ասան յանձնած է Նորին Սրբութեան, ժողովրդային բուռն ծափահարութիւններով:

Լիբանանի շինարար առաջնորդը բնականաբար այս անգամ իր աշխատանքի կիզակէտը պիտի դարձնէր Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռին պայծառակերպութիւնն ու կազմակերպութիւնը:

Բայց նախքան այդ, կարեւորութեամբ պէտք է անդրադառնալ այն մեծ իրադարձութեան, որ տեղի ունեցած է 26 Հոկտ. 1963-ին:

Պատմական այդ իրադարձութիւնը երկու վեհափառ Հայրապետներու ողջագուրումն էր Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Պատրիարքարանի յարկին ներքեւ:

1963 Հոկտեմբերին, Վազգէն Կաթողիկոս Ամենայն Հայոց, ուխտաւորաբար Երուսաղէմ եկած է եւ Երուսաղէմէն հրաւէր տուած Խորէն Ա. Կաթողիկոսին Մեծի Տանն Կիլիկիոյ, որ Ս. Տեղեաց մէջ երկու Կաթողիկոսներ միասին աղօթեն «Վասն հաստատութեան եւ շինութեան Հայ եկեղեցւոյ»:

Սիրոյ այս ջերմ հրաւէրին ընդառաջելով 26 Հոկտ. 1963-ին, 12 աշխարհական եւ 5 եկեղեցական անձնաւորութիւններէ բաղկացած շքախումբի մը ընկերակցութեամբ, Խորէն Ա. Կաթողիկոս Երուսաղէմ մեկնած է, ողջագուրուելու իր աւագ եղբօր՝ Վազգէն Կաթողիկոսի հետ եւ մանաւանդ փարատելու արուեստական մութ եւ անիմաստ ամպերը Հայ եկեղեցւոյ երկնակամարին վրայէն:

Յնձութեան, եղբայրութեան ամրապնդումի եռօրեայ ջերմ պահեր ստեղծուած են Երուսաղէմի մէջ: Այս քաղցր հանդիպումը եթէ չփարատեց բոլոր տարակարծութիւնները, առնուազն տուաւ փաստը, որ Հայ եկեղեցին կրնայ ըլլալ մէկ եւ Կաթողիկոսական գոյգ Աթոռները կրնան ծառայել եւ գործել որպէս մէկ միութիւն՝ այսօր եւ վաղը:

Այս ողջագուրումնէն ետք, Խորէն Ա. Կաթողիկոս սկսած է իր բարեկարգչական եւ շինարարական աշխատանքներուն:

1.- Առաջին հերթին Ապրիլեան Նահատակաց Արեւելեան կողմի հողատարածքը գնելով կառուցել տուած է կաթողիկոսութեան եւ միաբանութեան յատուկ դամբարանը՝ ժողովրդային նուիրատուութեամբ, եւ զայն կոչած Զարեհեան Դամբարան, ի յիշատակ վաղամեռիկ Զարեհ Կաթողիկոսի:

2.- Ամբողջական առումով վերանորոգել եւ բարեզարդել տուած է Ս. Աթոռիս միաբաններուն յատուկ թաղամասը եւ անոնց իբրեւ լրացուցիչ՝ ճիշդ Կաթողիկոսարանի մայր դարպասին վրայ կառուցել տուած է նոր շէնք մը՝ յատուկ Կաթողիկոսարանիս մէջ բնակող եւ պաշտօնավարող եպիսկոպոսական դասուն: Շէնքը ծանօթ է Ս. Նարեկայ Վանք անունով՝ նուիրատու բարերարին իսկ բաղձանքով:

3.- Նոր մարմարներով եւ նոր ջահերով օժտած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարը, զայն ենթարկել տալէ ետք ամբողջական վերանորոգումի՝ արտաքին եւ ներքին երեսներով: Այդ առթիւ նաեւ շինուած է վերնատունը:

4.- Գնուած է դպրեվանքի առաջին շէնքին Արեւելեան հողաշերտը, եւ այդ տարածքին վրայ կառուցուած են արդիական սարքաւորումով խոհանոց, թէ՛ ուսանողութեան եւ թէ՛ միաբանութեան սեղանատունները:

5.- Մայրավանքէն ներս Խորէն Կաթողիկոսի շինարարական աշխատանքներուն գլխաւոր իրագործումը հանդիսացած է Մայր Տաճարին դիմաց նորակառոյց վեհարանը իր բոլոր յարմարութիւններով: Այս մեծ կառոյցը իրականացած է շնորհիւ տէր եւ տիկ. Գէորգ Չաթալպաշեանի մեծագումար նուիրատուութեան:

6.- Նորակառոյց վեհարանի ներքնամասին կէսը յատկացուած է արդիական տպարանի մը կառուցման, իր բոլոր յատկութիւններով եւ նոր մեքենաներով օժտուած եւ արդիականացած տպարանի մը՝ գոհացում տալու համար հետզհետէ ստուարացող տպագրական կարիքներուն: Իսկ ներքնայարկին երկրորդ կիսոյն վրայ սարքաւորուած է լուսցարանն ու հանդերձարանը:

7.- Նորակառոյց տպարանին կողքին, միաբանական թաղի վարի յարկաբաժինը, որ երկար տարիներ ծառայած էր որպէս Մեսրոպեան մանկապարտէզ եւ նախակրթարան, Խորէն Կաթողիկոս հիմնովին վերանորոգել տալով զայն օժտած է արդի մանկապարտէզի եւ նախակրթարանի մը կարիքներուն գոհացում տուող յարմարութիւններով եւ զայն կոչած է Ազգ. Մարտիկեան Վարժարան՝ Ճորճ Մարտիկեանի բերած նպաստին որպէս երախտիք:

8.- Գեղեցկօրէն սալայատակած է կաթողիկոսարանի շրջափակը:

9.- Իսկ Մայրավանքէն դուրս վիթխարի ծրագիր մը եղած է կառուցումը Լէյլաւանի ժողովրդային բնակարաններուն, որոնց մէջ առաջին հերթին բնակութիւն հաստատած են քէմբէրէն տեղափոխուող 214 տնազուրկ եւ ոչառողջապահական պայմաններու տակ ապրող ընտանիքներ: Բնակարաններուն վրայ յետագային աւելցած են 70 նոր բնակարաններ եւս: Համալիրը օժտուած է մատուռով, սրահով եւ դպրոցով: Եւ արդարօրէն, Գարեգին Բ. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, առ ի երախտագիտութիւն, զայն կոչած է «Խորէնաշէն»:

Խորէն Վեհափառի տարիներու երազը եղած է մեր ծերունիներուն պատըսպարան մը կառուցել: Դժբախտաբար այդ երազը չէ իրականացած՝ մեզմէ առյաւէտ բաժնուելուն պատճառաւ, սակայն վստահաբար օր մը իր հոգեւոր աչքերով պիտի տեսնէ իր այդ երազին իրականացումը, որուն հիմնարկէքը իր ձեռքով կատարած էր 1970 Մայիս 16-ին:

Կազմակերպչական եւ մանաւանդ շինարարական այս ընդարձակ գործունէութեան կողքին նուազ արդիւնաւոր չէ եղած նաեւ կրթական եւ մշակութային մարզերէն ներս Խորէն Վեհափառին աշխատանքը: Այս բնագաւառէն

ներս իր գլխավոր յաջողութիւնը հանդիսացած է մրցանակներու եւ ֆոնտերու հաստատումը:

Կրթական մարզէն ներս կարեւոր իրագործում մը հանդիսացած է Գրիգոր Կուրճի համալսարանական կրթաթոշակի ֆոնտի հաստատումը՝ բարերարին իսկ անունով կնքուած: Ֆոնտը հիմնուած է 1975-ին Գրիգոր Կուրճի հաստատած 150.000 տոլարի անձեռնմխելի հիմնադրամով, որուն տոկոսը տարուէ տարի պիտի յատկացուէր ուսանողներու:

Կրթական այս ֆոնտին կողքին տարիներու ընթացքին Խորէն Կաթողիկոս հաստատած է գրական մրցանակներ եւ հրատարակչական ու վերահրատարակչական զանազան հիմնադրամներ, ինչպէս.

- Հայկ Սէրէնկիւլեան Գրական Մրցանակ, 1964-ին:
- Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակ, 1966-ին:
- Ասթարճեան Գրական Մրցանակ, 1972-ին:
- Խորէն Գաբրիէան Հրատարակութեանց Հիմնադրամ, 1972-ին:
- Տաճատ Արք. Ուրֆալեան Հրատարակութեանց Հիմնադրամ, 1979-ին:

Խորէն Կաթողիկոս բարեկարգչական եւ շինարարական աշխատանքները որոշ ընթացքի մը մէջ դնելէ ետք, ձեռնարկած է հովուապետական եւ պաշտօնական այցելութիւններու շարքի մը, նպատակ ունենալով գրգիռ տալ Կիլիկեան թեմերու զաւակներուն հաւատքին, մասնաւորաբար եւ ընդհանրապէս ծանօթացնելու Կիլիկեան Ս. Աթոռն ու իր առաքելութիւնը Արեւմտեան աշխարհին:

Ան իր անդրանիկ այցելութիւնը տուած է Սուրբիոյ Վ. Ն. Հաֆէզ էլ Ասատին, 10 Հոկտեմբեր 1963-ին, Դամասկոսի իր նախագահական ապարանքին մէջ, ուր սիրալիւր ընդունելութեան արժանացած է: Իսկ Կիլիկիոյ Պատմական Բերիոյ Թեմին իր հովուապետական այցելութիւնը շնորհած է 3 Դեկտեմբեր 1972-ին, մեծ խանդավառութիւն ստեղծելով ողջ թեմի տարածքին, Լաթաքիոյ ծովեզերեայ շրջանէն մինչեւ հիւսիսային Սուրբիոյ Ճէզիրէի շրջանը:

Ան հանդիպումներ ունեցած է համայնքապետերու, Հայէպի նահանգապետին եւ այլ բարձրաստիճան անձնաւորութիւններու հետ եւ հոգեկան մեծ գոհունակութեամբ 11 Դեկտեմբերին վերադարձած է մայրավանք:

12 Յունուար 1965-ին Խորէն Ա. Կաթողիկոս շքախումբով մը մեկնած է Ատիս Ապապա (Եթովպիա), ներկայ ըլլալու Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Համաժողովի բացման, որուն հրաւիրուած էին բոլոր քոյր եկեղեցիներու Հոգեւոր պետերը:

Այս առիթով Խորէն Ա. Կիլիկեան Մեծ Խաչի շքանշանով պարգեւատրած է հիւրընկալ Կայսրը՝ Գ. Վ. Հայլէ Սելասիէ:

Իսկ դէպի Եւրոպա ուղեւորութիւնը 1967-ին՝ ընդգրկած է հետեւեալ երկիրներն ու կեդրոնները.

- Կիպրոս՝ 28 Ապրիլին:
- Յունաստան՝ 1 Մայիսին:

- Հոռոմ՝ 8 Մայիսին:
- Փորթուկալ՝ 21 Մայիսին:
- Անգլիա՝ 22 Մայիսին:
- Զուրիցերիա՝ 23 Մայիսին:
- Վենետիկ եւ Վիեննա՝ 25 Մայիսին:

Վերոյիշեալ այցելութեանց ընթացքին Վեհը հանդիպումներ ունեցած է Կիպրոսի նախագահ Մակարիոս Արքեպիսկոպոսին, Յունաստանի Կոստանդին թագաւորին, Պօղոս Զ. Պապին, Կիւլպէնկեան Հիմնարկութեան նախագահին՝ տոքթ. Բերտիկանի եւ պրն. Գէորգ Եսայեանի հետ: Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի կեդրոնին մէջ՝ տոքթ. Վիսրը՛թ Հուֆթի, տոքթ. Եուճին Պլէյքի եւ Վենետիկեան ու Վիեննայական Միթիթարեան հայրերուն հետ:

Վեհափառ Հայրապետի հովուապետական երկրորդ այցելութիւնը ընդգրկած է Հիւսիսային Ամերիկայի եւ Գանատայի տարածքը 8 Ապրիլ – 6 Օգոստոս 1969 ժամանակաշրջանին: Այս այցելութեան ընթացքին ան հանդիպումներ ունեցած է Միացեալ Ազգերու Ընդհ. Քարտուղար Ու Թանի, Նիր Իսթ Ֆաունտէյշընի կեդրոնատեղիին մէջ՝ պրն. Ք. Տաճի, Միացեալ Նահանգներու փոխ նախագահ պրն. Նիքսընի, նահանգապետերու եւ քաղաքապետերու հետ: Քարոզած է, պատգամած, արթնութեան կոչ ուղղած ժողովուրդին՝ անքակտելիօրէն կապուած մնալու Հայ եկեղեցւոյ եւ արժեւորելու իր հայութեան պատկանելիութիւնը:

Վեհափառ Հայրապետին հովուապետական եւ պաշտօնական չորրորդ այցելութիւնը 1973-ին շնորհուած է Իրանի երեք թեմերուն 27 Ապրիլէն 27 Մայիս: Միամսեայ այս այցելութիւնը մեծ խանդավառութիւն ստեղծած է ողջ Իրանի տարածքին՝ հայ ժողովուրդի կեանքէն ներս: Ան իր այս այցելութեան ընթացքին հանդիպումներ ունեցած է կրօնական թէ քաղաքական անձնաւորութիւններու հետ, այցելած է Իրանի Ն. Կ. Մ. Արիհամեհը Մուհամմէտ Ռըզա Շահ Փահլաւիի, որուն ընծայած է Կիլիկեան Մեծ Խաչի շքանշանը:

Վեհափառ Խորէն Ա. իր շքախումբով Ս. Աթոռ վերադարձած է 27 Մայիս 1973-ին:

24-27 Փետրուար 1974-ին Վեհափառը չորսօրեայ այցելութեամբ Քուէյթ մեկնած է, բացումը կատարելու վարժարանի նորակառոյց շէնքին եւ 27 Փետրուարին պաշտօնապէս այցելած է գահաժառանգ իշխան եւ վարչապետ Ն.Վ. Շէյխ Ժապէր Ահմատին եւ Պաշտպանութեան նախարար Ն.Վ. Շէյխ Սատ Ալ Ապտալլային:

Հսկայ վաստակ մը, որ այսօր գրաւականը դարձած է Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռին ծաղկման, հզօրացման եւ բարգաւաճման:

Արդարօրէն, կարելի է այստեղ կրկնել յաւիտենական այն ճշմարտութիւնը, թէ «Մարդ է որ գործէ զերկիր»: Խորէն Ա. Կաթողիկոս գործած ու անցած է պատմութեան ոլորտին մէջ: Գնահատուած եւ արժանացած է

չքանչաններու, որոնք զարգարած են եկեղեցականի ծառայութեամբ աու-  
լցուն իր կուրծքը:

Ան իր գահակալութեան շրջանին հետեւեալ չքանչանները ստացած է.

– 28 Հոկտեմբեր 1954-ին՝ Լիբանանեան Մայրիներու Առաջին Կարգի  
Հրամանատարի չքանչանը:

– 28 Հոկտեմբեր 1963-ին՝ Յորդանանեան Աստղի Ա. Կարգի չքանչանը:

– 17 Մայիս 1964-ին՝ Լիբանանեան Մայրիներու Ազգային Բարձրագոյն  
Կարգի Մեծ Ժապաւէնը:

– 21 Յունուար 1965-ին՝ Եթովպիական Սապայի Թագուհի Բարձրագոյն  
Կարգի չքանչանը:

– 3 Մայիս 1967-ին՝ Յունական Ս. Գէորգի Մեծ Խաչի Ա. Կարգի չքա-  
նչանը:

– 14 Մայիս 1967-ին՝ Անգլիական Եկեղեցոյ Ս. Օգոստինոսի Խաչ չքա-  
նչանը:

– 26 Օգոստոս 1973-ին՝ Ս. Ղազարի Ասպետի Կարգի Խաչանիչ չքանչանը:

– 23 Փետրուար 1974-ին՝ Իրանեան Հիւմայիլի Բարձրագոյն Կարգի չքա-  
նչանը:

– 12 Փետրուար 1977-ին՝ Ֆրանսական Պատուոյ Լէգէոնի Հրամանատարի  
չքանչանը:

Խորէն Ա. Կաթողիկոս ոչ միայն չքանչաններ ստացած է, այլեւ գնահա-  
տելու համար ազգային բարերարները, եկեղեցական, մշակութային եւ կըր-  
թական անդաստաններէն ներս ծառայող նուիրեալները, մասնաւոր չքանչ-  
աններ հաստատած է.

Ա.– Ս. Ներսէս Շնորհալի Մեծ Խաչ, ձոյլ ոսկեայ, վերապահուած եկե-  
ղեցոյ հոգեւոր պետերուն:

Բ.– Կիլիկեան Մեծ Խաչ չքանչան, վերապահուած նախագահներու եւ  
պետական բարձր պաշտօնատարներու:

Գ.– Կիլիկեան Իշխան չքանչան, վերապահուած ազգային բարերարներու  
եւ ազգային ղեկավարներու:

Դ.– Կիլիկեան Ասպետ չքանչան, վերապահուած վաստակաշատ ծառայու-  
թեամբ իրենց կեանքը արժեւորած նուիրեալներու:

Ե.– Մեսրոպ Մաշտոց չքանչան, վերապահուած մշակոյթի եւ սերունդի  
մը դաստիարակութեան նուիրուած ուսուցիչներու:

Երանաշնորհ Հայրապետը իր վերջին տարիներուն հոգեկան գոհունա-  
կութիւն մը ունէր, յատկապէս աթոռակից կաթողիկոսի ընտրութենէն ետք,  
յանձին Գարեգին Բ. Հայրապետի, երբ ապահոված էր Ս. Աթոռի գործու-  
նէութեան տեւականութիւնը եւ թեմերու հայապահպանման սրբազան առա-  
քելութեան արդիւնաւոր շարունակութիւնը: Կատարած էր իր կեանքի ըն-

թացքը, հաւատքի եւ հոգեւոր նուիրական առաքելութեան մէջ դրած՝ կաթողիկոսարանը, իրեն կը մնար փառքի պսակը:

Եւ հաշուետուութեան օրը չուշացաւ:

Նոր աւարտած էր Ազգ. Ընդհ. Երեսփոխանական Ժողովներուն օրակարգը, բոլոր երեսփոխանները վերադարձած էին իրենց թեմերը, եւ ահաւասիկ անսպասելին, 9 Փետրուար 1983-ին, յետմիջօրէի ժամը 1-ին, վեհարանի իր առանձնասենեակին մէջ սրտի կաթուածի մը հետեւանքով վախճանած է, երբ ճիշդ քովը իր գրասենեակին մէջ, գլխաւորութեամբ Գարեգին Բ. Աթոռակից Կաթողիկոսին, Ազգ. Կեդրոնական Վարչութեան հին եւ նորընտիր Քաղաքական Ժողովներու անդամները զինք կը սպասէին, միասնաբար ճաշի նստելու վեհարանի սեղանատան մէջ:

Բազմավաստակ վեհանձնութեամբ պիրկ, Կիլիկեան Ս. Աթոռի նուիրական առաքելութիւնը գօտեպնդող Խորէն Կաթողիկոս անմահութեան ճանապարհորդն էր. ան ապրած էր Հայ Եկեղեցւոյ եւ Հայ Ժողովուրդին ծառայելու ուխտով եւ վախճանած՝ այդ Ս. Ուխտի ճամբուն վրայ:

Երանաչնորհ Հայրապետին Թաղմանական ու Վերջին Օծման արարողութիւնները տեղի ունեցած են 15 Փետրուար 1983-ին, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան սգաւոր մայրավանքին մէջ, պետական, քաղաքական, դիւանագիտական, հոգեւոր պետերու, կրօնական անձնաւորութեանց ներկայութեամբ եւ հանդիսապետութեամբ Գարեգին Բ. Կաթողիկոսի Մեծի Տանն Կիլիկիոյ եւ մասնակցութեամբ Ս. Աթոռոյս, էջմիածնի եւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան ներկայացուցիչ միաբան հայերու եւ ծովածաւալ սգաւոր հաւատացեալներու ներկայութեան:

Յետ Վերջին Օծման արարողութեան՝ Ս. Պատարագի աւարտին, միաբան հայրեր Երանաչնորհ Հայրապետին դագաղը շարականի երգեցողութեամբ, ուսամբարձ փոխադրած են Զարեհեան Դամբարան, եւ մարմինը այնտեղ ամփոփուած է՝ սրտակից Զարեհ Ա. Կաթողիկոսի շիրիմի կողքին:

ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ



**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**  
**ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ**  
**(Պատմական Ակնարկ)**

*Ակամայ ընդմիջումէ ետք, յօդուածաշարքի ներկայ թիւին սկիզբը, նախ կը հրապարակեմ Դպրեվանքի արխիւներէն վերջերս յայտնաբերուած նամակ մը, որ կը լուսաբանէ Մկրեան քահանայի գրադարանի գնման գործընթացին դժուարութիւնները... եւ բնականօրէն շարունակութիւնը կը ներկայացնեմ նորոգուած թուակարգով: Յոյսով եմ, որ Մատենադարանի Պատմութեան հատորի պատրաստութեան եւ լոյս ընծայումի ընթացքին այս ու այլ նամակներ կը վերագտնեն իրենց ժամանակագրական իսկական տեղերը:*

(14).– Առաջինը՝ Քերոբէ Փափագեանէն Շահէ Սրբազանին ուղղուած նամակ մըն է<sup>1</sup>, տեղադրելի թիւ 13էն ետք, որպէս թիւ 14<sup>2</sup>:

«Կ. Պոլիս 25 – 9 –1932

**Սիրելի Շահէ Սրբազան**

*Սպառուած համբերութենէ մը վերջ գրուած Սեպ(տեմբեր) 13 թ. Նամակը<sup>3</sup> առի, եւ իրաւացի գտայ զՁեզ, որ անտեղեակ իրողութենէն<sup>4</sup>, պատասխանիս յապաղումը կը կարծէք ըլլալ՝ հետեւանքը բազմազբաղ վիճակիս: Ո՛չ, կը սխալիք: Զբաղումիս կարեւորներէն նկատեցի այս գիրքերու խնդիրը, որ՝ եթէ այսօր ալ լրացած չէ, պատճառը այն է, որ հնար չէր կարգաւորել, քանզի՝ Ա(բիկ) Տէր Մինասեան ըստուած խայտառակը, որուն ինչ թիփի արարած մ՝ ըլլալը թերեւս չէք գիտեր, ուզեց եւ տակաւին կը պնդէ, որպէսզի բացակայ ժառանգորդաց (հ(ա)նգ(ու)ց(եալ) Ա(րտաշէս) Մկրեանի այրիին եւ զաւակներուն<sup>5</sup>) բաժինին (333 լիրա) գոնէ կէսը իրեն տանք եւ ինք ստանայ 500 ոսկի (իր երկու քոյրերուն հետ), եւ այս պահանջումը կ'ընէ առարկելով թէ ա) Արտաշէսը շատ վնաս տուած է իրեն եւ բ) Անոնք փախստական ըլլալուն,*

<sup>1</sup> Փոքր քառակուսի գիծերով՝ երկծալ թուղթ, օգտագործուած չորս էջերը, սեւ մելանով: Նիթին չաղերսուած մասերը գեղչուած են:

<sup>2</sup> Տե՛ս եւ համեմատէ ՀԱՍԿ, 2021, Ղ. տարի, Նոյեմբեր-Դեկտեմբեր, թիւ 11-12, էջ 558-561:

<sup>3</sup> Առ այսօր կարելի չէղաւ գտնել (եթէ պահուած է) ակնարկուած նամակին պատճէնը:

<sup>4</sup> Վերընթերցումիս աւելցուած են վերջին երկու բառերը: Նոյնպէս՝ այլուր, սակայն կարիքը չեմ զգար ամէն անգամ արձանագրել:

<sup>5</sup> Տե՛ս թիւ 17 նամակը:

բաժիննին լքեալ գոյք է:

Ս(րբազան) Պատրիարքը, մասնաւորապէս Ա(րտաշէս) Մկրեանի կողմէն նախապէս այս գրքերու մասին իրեն քանիցս գրուած ըլլալը նկատի ունենալով, եւ իբր հոգեւոր հայր մը նաեւ բացականերուն, իրաւամբ երբէք չուզեց հաւանիլ այդ անիրաւ պահանջումին, եւ նոյն իսկ Աբիկին ըսուեցաւ մեր կողմէն թէ, իր բացակայ քրոջ (որ Բարիզ է) բաժինն ալ իրեն պիտի չ'կրնանք տալ ու 111 ոսկին պիտի պահենք պատրիարքարանի մէջ եւ(այլն):

Կարճ խօսելով, յորդոր եւ խրատներէ վերջ, եւ դիտելով որ «Դպրեվանքը առանց Մատենադարանի չ'կրնար ըլլալ», ու այս քանակութեամբ գիրք եւ(այլն) պարունակող հաւաքածոյ մը հաւանաբար չ'կարենաք գտնել, գործնական դատեցինք, որ ես, իբր թէ իմ կողմէս, այսինքն առանց Պատրիարք Ս(րբազան)ի հաճութեան, առաջարկեմ Աբիկին (333+67=) 400 ոսկի, «տարբերութիւնը, ընենք մեր մէջ, կա'մ Ա(րտաշէս) Մկրեանի ժառանգորդաց 333էն կը գեղչենք, եւ կամ կը թելադրենք որ Դպրեվանքը (1000էն վերջ) 67 ոսկի ալ տայ»: Աբիկին ներփակ երկտողէն<sup>6</sup> կը տեսնէք, որ այս բարեացակամ առաջարկն ալ մերժեց, եւ քովս եղող ցանկը ուզեց ու առաւ: Ըստ իրեն եւ կը կրկնեմ հոս ի գիտութիւն Ձեր, թէ գրքերը պիտի չ'տրուին իրեն, վասնզի յօժարէր իսկ մեզի հետ վերջնապէս համաձայնելու, Քաղ(աքական) Ժողովին որոշումը պիտի առնուէր, որ 23 տարիներէ ի վեր Ազգիս աւանդապահութեան տակ գտնուող այդ գրքերը յանձնուին ժառանգորդաց կամ ո'եւէ մէկուն: Քաղ(աքական) Ժողովոյ երկու անդամներ, որոնք compétent<sup>7</sup> են, Ս(րբազան) Պատրիարքին եւ իմ տուած բացատրութեանց վրայ յայտնեցին թէ «Եթէ Աբիկ վէրասէթ հիւճճէթի<sup>8</sup> ալ առնէ, կարենալ պնդելով իսկ Ա(րտաշէս) Մկրեանի ժառանգորդաց գոյութիւնը, 23 տարիէ ի վեր Ազգիս ձեռքը գտնուած գրքերը չ'տալու օրինական ձեւեր եւ հիմքեր կան, եւ եթէ բացակայ ժառանգորդներու գոյութիւնը հասկցուի, եւ յայնժամ անոնց բաժինը կառավարութիւնը առնէ անգամ, հնար է գտնել անշուշտ աւելի աժան գնով եւ(այլն)»: Եւ ոչ ոք, այս գործէն որեւէ կերպով տեղեկութիւն ունեցողներ, պատշաճ չեն դատեր որ Աբիկին պահանջումը ընդունուի:

Արդ, այս մանրամասնութիւնը, զոր հոս դրի՝ Ս(րբազան) Պատրիարքին ալ գիտութեամբը եւ ցոյց տուած պէտքին համաձայն, կը հաստատէ թէ գործքն՝ այսքան յապաղումէ վերջն ալ, չ'կարենալ կարգադրուիլը եւ հետեւաբար Դպրեվանքին «առանց Մատենադարանի մնալը» մեր կամքէն անկախ պատճառէ մ'առաջ եկաւ եւ մեզի ալ ցաւ կը պատճառէ: Սա ալ ըսեմ, որ

<sup>6</sup> Չունինք ակնարկուած «երկտող»ը:

<sup>7</sup> Ձեռնհաս կամ բանիմաց:

<sup>8</sup> Ժառանգութեան մուրհակ (փաստ կամ ապացոյց). Տե՛ս Եաղուպեան Ա. Յ., Հայաստան թրքերէնէ-հայերէն բառարան, Նիւ Եորք, 1919:

Թշուառականը այս պահանջումը ըրաւ ամէն մանրամասնութիւն լրացնելէ վերջ, որոնք ժամանակ սպառեցին, եւ միմիայն Բերայի Թաղականութենէն ժառանգ(որդաց) վաւերագիր մը ձեռք բերելու համար 1½ ամիս ժամանակ վատնեցինք: Նոյն իսկ կանխավճար մ'ընելու համար \$100նոց չէքը Թրքականի վերածեցի, 211½ լիրա, ուրախ եմ սակայն, որ փարա մը չենք տուած իրեն: Ամբողջ դրամը կը մնայ քովս:

Վերջացնելով այս երկարած նամակը, կ'ուզենք ստանալ Ձեր վճռական կամքը, թէ պէտք է դրամը վերադարձնենք Ձեզի թէ 1000էն վերջ (եւ քանի 67 ոսկիրով ալ չ'գոհանար), նաեւ իր յանիրաւի ուզածը ամբողջապէս (67 ոսկի) տանք այս Թշուառականին: Եթէ Դպրեվանքին Մատենադարան մը հայ-թայթելու համար գոհացնել ուզենք այս անխիղճ պահանջումը, եւ ի նկատի ունենալով զանազան պարագաներ յօժարինք համաձայնիլ Աբիկին հետ, աւելի վճարուելիքը որո՞ւ կողմէն պիտի ըլլայ, Ա(րտաշէս) Մկրեանի ժառանգորդաց թէ Դպրեվանքի կողմէն: Ս(րբազան) Պատրիարքը չուզեր համակերպիլ այդ ժառանգորդաց ամենադոյզն կերպով զոհողութիւն ընելուն: Իսկ ես, անձնապէս, խղճի դէմ նկատելով հանդերձ այդ պարագան, նկատի ունիմ լքեալ գոյքի խնդիրը եւ տրամաբանական կը գտնեմ որ անոնք 333ի տեղ 200 կամ 250 առնելով, 130ի կամ 83ի զոհողութիւն մ'ընեն, եւ թէ յարմար դատէք, Ձեր կողմէն ալ մաս մը դրամական զոհողութիւն ստանձնուի եւ միւս կողմէ Ա(րտաշէս) Մկրեանի ժառանգորդներուն՝ իրողութիւնը պարզելով՝ անպատեհութեանց առջեւ առնելու համար իրենց իրաւունքին մէկ մասէն հրաժարելու յօժարութիւնը դուք ձեռք բերէք:

Այսպէսով ըստ ամենայնի իրազէկ եղաք յապաղման պատճառներուն, ուստի կ'սպասենք Ձեր կարծիքին եւ որոշման: Խորապէս կը ցաւիմ որ այս գրքերուն խնդիրը պարզ եւ սովորական գնում մը չ'ըլլալուն, այսքան դժուարացաւ եւ յապաղումի ենթարկուեցաւ:

Կարօտի համբոյրներ Ձեր Աջին եւ աչքերուն,

Ք(երոբէ) Փափագեան»

17.– Յաջորդ գրութիւնը Բերկրուհի Տ(էր) Մկրեանին<sup>9</sup> նամակն է ուղղուած Շահէ Սրբազանին<sup>10</sup>: Այս նամակը թուագրեցի թիւ 17, նկատի ունենալով նախորդ յօդուածին թիւ 14ը որպէս թիւ 15, յաջորդը՝ թիւ 15ը որպէս թիւ 16:

<sup>9</sup> Յովհաննէս Ա. Քինյ. Մկրեանի զաւակին՝ Արտաշէսի կինն է: Նամակը (եւ յաջորդները) ինքնին կը պարզէ ինքնութիւնն ու ծագած խնդիրը:

<sup>10</sup> Նամակը՝ անգիծ երկծալ թուղթի վրայ, օգտագործուած միայն երեք էջ:

«29 Հոկ(տեմբեր) 1932 Միլանո  
Ստաց(այ) Նոյ(եմբեր) 4<sup>11</sup>

**Գերապատիւ**

**Շահէ Ծ. Վարդապետ Գասպարեան**

**Գերապատիւ Հայր.**

«Նոր Լուրի»<sup>12</sup> 23 Հոկ(տեմբեր) թիւէն կ'իմանամ թէ հանգուցեալ Տէր Մկրեան հօր գրքերը Անթիլ(ի)ասի Վանքը գնած է. եւ ժառանգորդներու քննութիւնը յանձնուած է Տիար Վ. Ազկիւլի<sup>13</sup>:

Վերոյիշեալ գրքերու գլխաւոր ժառանգորդը ողբացեալ ամուսինս Տիար Արտաշէս Մկրեանն<sup>14</sup> էր, եւ իր մահովը ներկայիս իր երեք զաւակներն են գլխաւոր ժառանգորդները. Սարգիս, Սիրվարդ<sup>15</sup>, եւ Գալուստ Մկրեան:

1931 Փետ(րուար) 25ին Ամերիկայէ Տիար Վ. Քիւրքճեանէ<sup>16</sup> նամակ մը ստացած եմ, որով ինձ կ'իմացնէր Անթիլիասի Վանքին այս գիրքերը գնելու տրամադրութիւնը. միեւնոյն նամակաւ Ձեր Գերապատուութեան հասցէն տուած էր ինձ: Այն ատեն հաղորդեցի Ձեր հասցէն Պոլիս Աբիկ Տէր Մինասեանի<sup>17</sup> որպէսզի բանակցի Ձեզի հետ միշտ զմեզ տեղեակ պահելով ինչորոյն: Բաւական ժամանակ նամակներ փոխանակեցինք այս մասին, բայց գրեթէ տարի մըն է լուած է, եւ զարմանքով թերթէն կը տեղեկանամ գրքերու ծախուելը առանց մեր գիտութեան:

Ապագայ բարդութիւններու տեղի չ'տրուելու համար կը խնդրեմ Ձեր Գերապատուութենէն որ հաճիք Տիար Վ. Ազկիւլի հասցէն ղրկել մեզի որպէսզի որդիս՝ Գալուստ Մկրեան գրէ պէտք եղածը Տիար Ազկիւլի. ո՛րեւէ

<sup>11</sup> Շահէ սրբազան ստացման թուականը կ'արձանագրէ կարմիր մատիտով:

<sup>12</sup> «Նոր Լուր», օրաթերթ, Կիրակի 23 Հոկտեմբեր 1932, Է. Տարի, թիւ 3005, էջ 3, Ազգ. Լուրեր բաժնին մէջ կը կարդանք. «Հոգեւոյս Տ. Մկրեան Հօր գրքերը գնած է Անթիլեասի վանքը, բայց փոխարժէքին վճարման մասին, ժառանգորդներու կողմէ Վարչութեան եղած դիմումին քննութիւնը յանձնուած է Տիար Վ. Ազկիւլի»:

<sup>13</sup> Վ. Ազկիւլի, հաւանաբար թուրք փաստաբանն է, թէեւ առայժմ ինքնութիւնը մեզի անծանօթ կը մնայ:

<sup>14</sup> Տե՛ս ՀԱՍԿ, 2021, Ղ. Տարի, Մայիս-Յունիս, թիւ 5-6, էջ 256 (թիւ 1 նամակը՝ էջ 256-257):

<sup>15</sup> Հետաքրքրական է տեսնել «Նոր Լուր»ի 1932 Նոյեմբեր 20ին՝ Կիրակի, էջ 1ին յօդուած մը՝ «Նամակ Միլանօէն» Սիրվարդ Մկրեան ստորագրութեամբ:

<sup>16</sup> Տե՛ս ՀԱՍԿ, 2021, Ղ. Տարի, Մայիս-Յունիս, թիւ 5-6, էջ 256 (ծանօթ. 6):

<sup>17</sup> Մոյն յօդուածին նախորդ թիւերուն մէջ յատուկ անդադարձ չունեցանք այս անձին մասին, սպասելով յաւելեալ տեղեկութեանց: Կաթողիկոսարանի Արխիւատան մէջ ունինք իր մէկ նամակը՝ 20 Դեկտեմբեր 1933 եւ կցեալ լուսանկարը, ուր ինքզինք կը ներկայացնէ. «ստորագրեալս թո՞՞ Տ. Յովհ(աննէս) Ա. Քին. Մկրեանի եւ եղբորորդի Տ. Վահան Վրդ. Տէր Մինասեանի», որուն աւարտին կ'աւելցնէ. «ուրախ եմ որ Հանգ(ուցեալ) մեծ հօրս Մատենադարանը եւս ունեցաւ իր արժանաւոր տեղը» (Հաւաքածոյ 16, Յուլի 1, Թղթածրար 14, թերթ 30-31):

*փոխարժեքի վճարում պէտք չէ ընել մ(ինչ)եւ որ ժառանգորդներս հասկացողութեան մը գանք. ցարդ այս մասին միւս ժառանգորդներուն կողմէ մեզի բան մը չի գրուիր կրնայ նպատակաւոր ըլլալ, եւ ապագային անտեղութեանց պատճառ դառնալ:*

*Խորին յարգանք մնամ  
Բերկրուհի Տ(էր) Մկրեան*

Հասցէս.- Mme. P. Megherian  
Via Washington, 1  
Milano, Italia»

18.– *Յաջորդ նամակը՝ Theodore A. Elmer<sup>18</sup>-էն Քերոբէ Փափազեանին է<sup>19</sup>:*

«Beirut - November 5<sup>th</sup>, 1932

Mr. Kerope Papazian,  
Ermis Tabrikasi<sup>20</sup> (sic),  
No. 126 Findikli,  
Istanbul,  
Turquie.

Dear Mr. Papazian:

By request of His Grace, Shahe Kasparian, Dean of the Armenian Seminary at Antilyas (sic), I am sending you herewith a check to your order drawn by Alex. P. Haddad on the Chase National Bank<sup>21</sup> of the City of New York for the amount of two hundred ninety six dollars seventy eight centes (sic) (\$296.78) Bishop Kasparian is sending this money in part payment for books purchased for the Antilyas (sic) Seminary Library.

Sincerely,  
THEODORE A. ELMER  
Business Manager,  
Near East Foundation.  
TAE/VM.  
Incl. check.»

<sup>18</sup> Elmer, Theodore A. 1871-1964 an employee of the American Board of Commissioners for Foreign Missions. Տե՛ս Եղիայեան, Բ., Ժամանակակից, էջ 348:

<sup>19</sup> Անգլերէն նամակը գրուած է անգիծ թափանցիկ թուղթի մէկ երեսին վրայ: Տողատակին Շահէ սրբազանի արձանագրութիւնն է՝ կարմիր մատիտով:

<sup>20</sup> Fabrikasi պէտք է ըլլայ:

<sup>21</sup> Chase National Bank-ը հիմնուած է 1877 թ. John Thompson-ի կողմէ, սակայն անուանումը ստացած է ՄՄՆ-ի Treasury Secretary եւ Chief Justice Salmon P. Chase-էն:

«Նոյ(եմբեր) 5 1932

Բարգէն Կաթ(ողիկոս)էն 250.00 Սիւր(իական) Լիրա ստացուած է եւ վրան աւելցուած Վ. Ա. 5<sup>22</sup> եկած 100 տոլար գումարն է \$296.78.- որ չէքով մը այսօր ղրկուած է Կ. Պ(ոլիս) Գեր(ոբէ) Փափագեան»<sup>23</sup>:

Այս առնչութեամբ կը տեղեկանանք Աթոռակից Կաթողիկոսի անտիպ Օրագրութենէն, Շաբաթ, 5 Նոյեմբեր 1932. «Այս առտու Ծերունի Սահակ Կաթողիկոսէն փոխ առի 250 թղթոսկի եւ Շահէ Եպիսկոպոսին տուի, ի նպաստ Մկրեան Մատենադարանի գնման, Կ. Պոլսէն: Մատենադարանին գինն է 1084 թիւրք ոսկի (= թուղթ): Քերովբէ Փափագեան կը վարէ սակարկութեան եւ գնման գործողութիւնները Մկրեանի ժառանգորդներուն հետ, Ազգային Պատրիարքարանի գիտութեամբ: Այս Մատենադարանը գնելու համար Ամերիկայէն «Վարդանանց Ասպետներ»ը նուիրեց 500+100=600 տոլար, մնացածը մենք կը հոգանք Կաթողիկոսարանի սնտուկէն»:

19.- Յաջորդ գրութիւնը Շահէ Սրբազանին նամակն է ուղղուած Քերովբէ Փափագեանին<sup>24</sup>:

«Անթիլիաս, 6 Նոյ(եմբեր) 1932

Սիրելի Պրն. Քերովբէ Փափագեան, Կ. Պոլիս.

Հոկտ(եմբեր) 23 թ. նամակդ<sup>25</sup> ճիշդ շաբաթ մը առաջ հասաւ եւ մեծ ցընծութիւն պատճառեց մեզի ամէնուս:

Այսպէս թէ այնպէս Մատենադարանին խնդրոյն վերջապէս դրական լուծման յանգիլը՝ Քու սրտագին ու բոլորանուէր ճիգերուդ շնորհիւ՝ մեծապէս գոհ թողուց Ծերունի Հայրապետը (եւ) Վեհաշն(որհ) Աթոռակիցը, որոնց սիրալիր ողջոյնները կը հաղորդեմ քեզի իմ սիրոյս եւ շնորհակալեացս հետ միանգամայն:

Երէկ (Նոյ(եմբեր) 5 1932) Նիյր Իսթ Ֆաունտէյշընի վարիչ եւ իմ բարեկամ Մր.(Մըսթր) Թէոտոր Էլմըրի միջոցաւ յատուկ նամակով ներփակ չէք մը (296.78 տոլարի) ղրկուեցաւ քու անունովդ եւ հասցէիդ<sup>26</sup>: Կը յուսամ թէ

<sup>22</sup> Տե՛ս ՀԱՍԿ, 2021, Ղ. Տարի, Մարտ-Ապրիլ, թիւ 3-4, էջ 141, ծանօթ. 23:

<sup>23</sup> Շահէ Սրբազանի արձանագրութիւնն է:

<sup>24</sup> Նամակը Դպրեվանքի պաշտօնական միագիծ թուղթի վրայ, օգտագործած երկու երեսները:

<sup>25</sup> Առ այժմ ակնարկուած այս (23 Հոկտեմբերի) նամակը յայտնուած չէ:

<sup>26</sup> Տե՛ս նամակ թիւ 18-ը:

սոյն նամակէս առաջ արդէն իսկ ստացած պիտի ըլլաս:

Ալ որ եւ է տարակոյս չունիմ որ ինչպէս գրեր էիր վերջին նամակովդ, հնար եղածին չափ կը փութացնես գիրքերը, թէեւ գիտենք թէ բազմազբաղ վիճակիդ մէջ այս ալ երկար ատենէ ի վեր յաւելուածական մտահոգութիւն մը դարձաւ քեզի համար: Եւ ճիշդ այս պատճառով ալ չա՛տ աւելի գնահատելի ծառայութիւն մը Սիրածդ Կաթողիկոսարանին եւ Դպրեվանքին:

Բոլորովին աւելորդ կը համարիմ որեւէ բան գրել առաքման եւայլն խնդրոց մէջ ձեռք առնուելիք խնամքին ու զգուշութեան մասին, վասնզի կատարեալ վստահութիւն ունինք չա՛տ քիչերուն միայն սեփական՝ լայն փորձառութեանդ եւ շրջանկատ բնածին խոհականութեանդ վրայ:

Տարակոյս չկայ, եթէ դրամը պակսի փութով մեզ կ'իմացնէք քեզի հասցրնելու համար ինչ որ կը պահանջէ գործին ու փոխադրութեան ծախքերուն անթերի լրացումը:

Սերտ սիրով եւ կարօտի համբոյրներով  
Սիրելւոյդ մնամ քոյդ  
Շահէ Եպիսկ(ոպոս) Գասպարեան»:

ՇԱՀԱՆ ԱՐՔ. ՍԱՐԳԻՍԵԱՆ  
Մատենադարանապետ

(Շար. 6)



ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

## ԿԱՆՏԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ<sup>\*</sup>

ՆԱԽԱԲԱՆ<sup>1</sup>

### ԿԱՆՏ ԵՒ ԿՐՕՆԸ

*Արդէն նշեցինք, որ Կանտի դաստիարակութիւնը եղած է իր իստ պահանջողական եւ հաւատացեալ քրիստոնեայ ծնողներուն, մանաւանդ մօր կողմէ: Մօր հետ կատարած պտոյտներու ատեն, բնութեան գեղեցկութիւնը ցոյց տալով, մայրը մանուկ Կանտի մէջ կը սերմանէ ստեղծող արարիչ Աստուծոյ մը գոյութիւնը: Ութնամեայ նախակրթական ուսման շրջանին եւս քրիստոնէական կրօնամէտ դաստիարակութիւնը կը շարունակուի: Մանկութեան բոլոր տպաւորութիւնները, հետագային, Կանտի մօտ բոլորովին չկորսուեցան, այլ կրօնի հանդէպ որոշ համակրութիւն մը միշտ առկայ էր, սակայն ժամանակի ընթացքին ան կը տկարանար: Համալսարանական ուսման շրջանին արդէն, Կանտ, ինքզինք աւելի փիլիսոփայութեան մօտ կը զգար, քան աստուածաբանութեան:*

*Այս բոլորի կողքին, հարկ է հաստատել, որ Կանտ եկեղեցի յաճախած է, միայն իր մանկութեան շրջանին: Այնուհետեւ, Կանտ երբեք եկեղեցի չէ գացած, նոյնիսկ այն ատեն, երբ Գերմանական Պրուսիոյ Ֆ. Վիլհելմ Բ. (Friedrich Wilhelm II, 1744 – 1797) թագաւորի Քէօնիգսբերգ պաշտօնական այցելութեան առիթով համալսարանը այլ ձեռնարկներու կողքին կրօնական պաշտամունք մը կազմակերպած էր եկեղեցւոյ մէջ... Կանտ, որպէս այդ համալսարանի տնօրէն, կը բացակայէր:*

*Վերոյիշեալ նոյն թագաւորին հետ, Կանտ պիտի ունենար ընդհարումներ ու բանավէճեր, մանաւանդ իր կրօնի մասին 1793-ին եւ 1794-ին հրատարակած «Կրօնը՝ լոկ բանականութեան սահմաններուն մէջ» (գերմ. բնագիր՝ "Die Religion innerhalb der Grenzen der bloßen Vernunft", անգլ.՝ "Religion within the bounds of bare reason") երկէն ետք:*

<sup>\*</sup> Նիւթը, մեծ մասամբ քաղուած եւ յօդուածի վերածուած է հեղինակին նոր լոյս տեսած «ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ – փիլիսոփայական ակնարկ» գիրքէն (632 էջ), Անթիլիաս, 2021:

<sup>1</sup> Շարունակութիւն նախորդ թիւէն:



Կանտ, մայրաքաղաք Բեռլինէն կը մեղադրուի իր փիլիսոփայութեան միջոցով, սուրբ գրային հիմնական ուսմունքի «խեղաթիւրման ու ստորացման» յանցանքով, կը սպառնան զինք համալսարանի իր պաշտօնէն արձակել եւ խստիւ կ'արգիլեն նմանօրինակ նիւթերու նոր հրատարակութիւնները: Կանտ, ցնցուած էր Բեռլինի մեղադրանքէն ու սպառնալիքէն եւ շրջան մը նոյնիսկ կը մտածէր լքել թէ՛ իր համալսարանը եւ թէ ծննդավայրը: Այս շատ դժուարին իրավիճակը պիտի հանդարտէր բարեպաշտ Վիլհելմ Բ. թագաւորի վաղահաս մահէն (1797 թ.) ետք միայն:

Կանտ, շատ կանուխէն, հետաքրքրուած էր փիլիսոփայութեան եւ կրօնի յարաբերութեամբ... արդարեւ յարաբերութիւն մը, որով համակուած է մարդկութեան ողջ պատմութիւնը: Կանտ, սակայն, նախ իր փիլիսոփայութիւնը հիմնաւորելու համար պէտք է գրէր՝ իր երեք «քննադատութիւնները» (տե՛ս հետագայ ԵՐԿԵՐ բաժինը), այնուհետեւ ան պիտի ձեռնարկէր կրօնի խորաթափանց ուսումնասիրութիւններուն, կրօնը հիմնաւորէր իր իւրայատուկ ձեւով եւ ներկայացնէր կրօնի կիրարկման ու գործնական առանձնատեսութիւնները:

«Կրօնը՝ լոկ բանականութեան սահմաններուն մէջ» 240 էջնոց երկին մէջ, Կանտ կը մշակէ աշխարհիկ բարոյափիլիսոփայութիւն մը կամ փիլիսոփայական կրօնի ուսմունք մը, որ բանականութեան վրայ հիմնուած կրօն մը կը նախագծէ, այլ խօսքով Կանտ «բանականութեան կրօնը» կը ներկայացնէ:

Շատերու համար, Կանտի երեք «քննադատական» երկերէն ետք, այս երկը կը ներկայացնէ Կանտի չորրորդ «քննադատութիւնը» (միշտ քննել ու դատել իմաստով):

Գիրքի սկզբնաւորութեան իսկ, Կանտ նախ կը հաստատէ, որ պարտաւորութիւնը (գերմ.՝ Pflicht, անգլ.՝ Duty) ճանչնալու ու անոր հետեւելու համար, բարոյականութիւնը, բացի բարոյական օրէնքէն կարիքը չունի, ո՛չ մարդոցմէ վեր որեւէ էութեան մը, ոչ ալ որեւէ դրդապատճառի կամ շարժառիթի: Ապա, քանի մը պարբերութիւն ետք, Կանտ կը բացատրէ թէ յիշեալ ինքնավարութեան խաթարման սպառնալիքը ինչ է.- բարոյականութիւնը անխուսափելիօրէն մեզ կը տանի դէպի կրօն:

Կանտի համաձայն, ազատութեան, հոգիի անմահութեան եւ Աստուծոյ երեք կարեւոր գաղափարները անապացուցելի, բայց անհրաժեշտ նախադրութիւններ (Postulate) են, ինչպէս Կանտ կը պնդէ նաեւ իր «Քննադատութիւն՝ գործնական բանականութեան»<sup>1</sup> երկին մէջ:

<sup>1</sup> Կանտ «Քննադատութիւն՝ գործնական բանականութեան» (գերմ. բնագիր՝ "Kritik der praktischen Vernunft", KpV, անգլ.՝ „Critique of practical reason“) երկին մէջ, էջ A 8, A 223, A 238 եւ այլ բաժիններու մէջ քննարկած է նաեւ «ազատութեան», «հոգիի անմահութեան» եւ «Աստուծոյ» երեք գաղափարները, որպէս անապացուցելի (Unprovable), բայց անհրաժեշտ նախադրութիւններ (Postulate):

Դարձեալ Կանտի համաձայն, բարոյականութիւնը (Moral) բնօրինակն է, իսկ կրօնը բարոյական պարտաւորութիւնները կը բացատրէ որպէս աստուածային պատուիրաններ (գերմ.՝ Gebot, անգլ.՝ Commandment): Այլ խօսքով, կրօնը կը հետեւի արդէն գոյութիւն ունեցող բնական բարոյական օրէնքին (գերմ.՝ Sittengesetz, անգլ.՝ Moral Law):

Այստեղ, իրականութեան մէջ, քրիստոնէական վարդապետութիւնը ելակէտ կը ծառայէ, բարոյականութեան եւ կրօնի միջեւ շփման կէտեր գտնելու համար: Օրինակ՝ սկզբնական մեղքի (գերմ.՝ Erbsünde, անգլ.՝ Original Sin) վարդապետութիւնը կը շօշափէ ա՛յն հարցը, որ մարդոց մօտ, բնականաբար, դէպի «բարին» հակումի կողքին առկայ է նաեւ դէպի «չարը» հակումը: Այլ օրինակ մըն է Քրիստոսի տիպարը, որ «բարոյական կատարեալ մարդու» խորհրդանիշն է: Իսկ եկեղեցին, կը ներկայացնէ նոյնինքն «բարոյական համայնքը»:

Կանտ, ընդհանրապէս չէր հետաքրքրուած պարզաբանել ա՛յն հարցը, թէ ինչպէ՞ս իր անպայմանական հրամայականին մէջ գտնուող «բարոյական օրէնքը»<sup>2</sup> համատեղելի ըլլայ Աստուածաշունչի Աստուծոյ հետ:

Նկատի ունենալով, որ մեր այս յօդուածաշարքին գլխաւոր նպատակը Կանտի բարոյագիտութեան նորարարութիւնը ներկայացնելն է, ուստի այստեղ ԿԱՆՏ ԵՒ ԿՐՕՆԸ նիւթին մէջ աւելի չենք խորանար: ԿԱՆՏ ԵՒ ԿՐՕՆԸ նիւթը կրնայ առանձին յօդուածով մը ներկայանալ կամ կրնայ մաս կազմել ընդհանրապէս Կանտի մասին աւելի ընդարձակ մենագրութեան մը:

## ԿԱՆՏԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Կանտի բարոյագիտութիւնը, որ այս աշխատասիրութեան գլխաւոր նիւթն է, հետագային աւելի մանրամասն պիտի ներկայացուի՝ իր զանազան բաժիններով: Հիմնաւորումը, կիրառումը եւ քննադատութիւնը:

Բարոյագիտութեան պատմութեան մէջ անկիւնադարձային ու մեծ կարեւորութիւն կը ներկայացնէ Կանտի ձեւապաշտութիւնը (Formalism): Կանտի բարոյական սկզբունքը ձեւական է, որովհետեւ որոշ կացութեան մը չի վերաբերիր, այլ անկախ զանազան հանգամանքներէ միշտ կը գործէ եւ ուժի մէջ կը մնայ:

Կանտ, իր բարոյագիտութիւնը կը հիմնէ անպայմանական հրամայականին (Categorical Imperative) վրայ, որ կը ներկայանայ որպէս ընդհանուր եւ ընդհանրացման ատակ օրէնք՝ զանազան բանաձեւերով:

Կանտի խստապահանջ ու հրամայական բարոյագիտութիւնը հիմնովին պարտագիտական (deontological) է. այսինքն՝ ոչ թէ մարդու հակումները, կա-

<sup>2</sup> «Բարոյական օրէնքը» (գերմ.՝ Sittengesetz, անգլ.՝ Moral Law) եւ «անպայմանական հրամայականը» (գերմ.՝ Kategorischer Imperativ, անգլ.՝ Categorical Imperative) – որպէս կարեւոր նիւթեր պիտի մանրամասնուին աւելի ուշ, առանձնաբար:

ընթացները, մոլորմունքները ու հետաքրքրությունները կ'որոշեն անոր վարմունքը, այլ միայն ու միայն ինքնաբերական պարտաւորությունները:

Կանտի համար վարմունքի մը պարտաւորությունը որքան զօրաւոր ու խիստ ըլլայ, այնքան աւելի բարոյական կը դառնայ արարքը:

Կանտի բարոյական սկզբունքի նախապայմանը ենթակային գերիշխանութիւնն ու կամքի ինքնավարութիւնն է, հիմնուելով անոր ազատութեան վրայ: Իսկ ազատութիւնը, Կանտի համար, կարելի չարժառիթներէն որեւէ մէկը ընտրելը չէ, այլ նման շարժառիթներէն անկախ ըլլալն է... այսուհանդերձ բարոյական վարմունքի հիմքը կը կազմէ՝ զուտ բանականութենէն բխած շարժառիթը, որ պարտաւորիչ բնոյթ ունի:

Բարոյագիտութեան պատմութեան մէջ, Կանտ կը ներկայանայ որպէս խստապահանջ պարտաւորութեան ու «անպայմանական հրամայական»ի բարոյախօս փիլիսոփան, որ հակառակ է որեւէ զգացական բարոյագիտութեան:

## ԵՐԿԵՐ

Իմամանուէլ Կանտ եղած է արգասաբեր գրող մը: Կարգ մը գիրքեր, ինչպէս պիտի տեսնենք առաջին հրատարակութենէն ետք ունեցած են այլ բարեփոխուած հրատարակութիւններ:

Կանտի գրական աշխատանքը, ինչպէս իր փիլիսոփայութիւնը, կարելի է բաժնել երկու շրջաններու՝ նախաքննադատական եւ քննադատական: Ան հրատարակած է բազմաթիւ երկեր, որոնցմէ պիտի յիշուին միայն կարեւորները, ժամանակագրական կարգով.՝

### Նախաքննադատական շրջան (մինչեւ 1770)

1. «**Ընդհանուր բնական պատմութիւն եւ երկնքի տեսութիւն**», 1755  
գերմ. բնագիր՝ "Allgemeine Naturgeschichte und Theorie des Himmels"  
անգլ.՝ "Universal Natural History and Theory of the Heavens"  
(երկը հրատարակուած է՝ անանուն)
2. «**Աստուծոյ գոյութեան փաստարկումի միակ հնարաւոր ապացոյցը**», 1763  
գերմ. բնագիր՝ "Der einzig mögliche Beweisgrund zu einer Demonstration des Daseins Gottes"  
անգլ.՝ "The Only Possible Argument in Support of a Demonstration of the Existence of God"  
(բանապաշտական բնազանցութեան լաւագոյն օրինակներէն),
3. «**Զգացական եւ իմացական աշխարհներու ձեւի եւ սկզբունքներու մասին**», 1770  
լատ. բնագիր՝ "De mundi sensibilis atque intelligibilis forma et principiis"  
գերմ.՝ "Über die Form und die Prinzipien der sinnlichen und der Verstandeswelt"  
անգլ.՝ "On the Form and Principles of the Sensible and the Intelligible World"

(ատենախօսույթիւն – Dissertation –, փիլիսոփայութեան բաժանմունքի վերատեսուչ կարգուելուն աւիթով, որով Կանտ կը ստանար Professor տիտղոսը):

**Քննադատական շրջան (1770-էն ետք)**

4. «Քննադատութիւն՝ զուտ բանականութեան», 1781/1787  
 գերմ. բնագիր՝ "Kritik der reinen Vernunft" (կրճատ՝ KrV)  
 անգլ.՝ "Critique of pure reason"  
 (Գիրքը ունեցած է երկու հրատարակութիւն՝ "A" եւ "B"),
5. «Պրոլեգոմէններ – ապագայ ամէն մետաֆիզիկայի, որ կը կարողանայ ինքզինք ներկայացնել, որպէս գիտութիւն» 1783  
 գերմ. բնագիր՝ "Prolegomena zu einer jeden künftigen Metaphysik, die als Wissenschaft wird auftreten können", անգլ.՝ "Prolegomena to any future metaphysics"  
 (Prolegomena կը նշանակէ՝ նախնական դիտողութիւններ)
6. «Ի՞նչ է լուսաւորութիւնը», 1783  
 գերմ. բնագիր՝ "Was ist Aufklärung?", անգլ.՝ "What is Enlightenment?",  
 (կարճ գրութիւն մը, Essay)
7. «Հիմունք՝ բարոյականութեան բնագանցութեան», 1785/1786  
 գերմ. բնագիր՝ "Grundlegung zur Metaphysik der Sitten" (կրճատ՝ GMS)  
 անգլ.՝ "Groundwork of the metaphysics of morals"  
 (Գիրքը ունեցած է երկու հրատարակութիւն՝ "A" եւ "B")
8. «Քննադատութիւն՝ գործնական բանականութեան», 1788  
 գերմ. բնագիր՝ "Kritik der praktischen Vernunft" (կրճատ՝ KpV)  
 անգլ.՝ "Critique of practical reason"  
 (Բարոյագիտութեան մասին ամենակարեւոր գիրքը)
9. «Քննադատութիւն՝ դատողունակութեան», 1790/1793/1799  
 գերմ. բնագիր՝ "Kritik der Urteilskraft"  
 անգլ.՝ "Critique of judgment"  
 (Գիրքը ունեցած է երեք հրատարակութիւն՝ "A", "B" եւ "C")
10. «Կրօնը՝ լոկ բանականութեան սահմաններուն մէջ», 1793/1794  
 գերմ. բնագիր՝ "Die Religion innerhalb der Grenzen der bloßen Vernunft"  
 անգլ.՝ "Religion within the bounds of bare reason"  
 (Գիրքը ունեցած է երկու հրատարակութիւն՝ "A" եւ "B")
11. «Բարոյականութեան բնագանցութիւնը», 1797/1798  
 գերմ. բնագիր՝ "die Metaphysik der Sitten" (MdS)  
 անգլ.՝ "The Metaphysics of morals"  
 (Գիրքը ունեցած է երկու հրատարակութիւն՝ "A" եւ "B")

12. «*Մարդասիրուժենէ մղեալ ստախօսուժեան ենթադրեալ իրաւունքի մը մասին*», 1797  
 գերմ. բնագիր՝ "Über ein vermeintes Recht aus Menschenliebe zu lügen"  
 անգլ.՝ "On the supposed right to lie because of philanthropic concerns"  
 (կարճ գրուժիւն մը, Essay),
13. «*Մարդաբանութիւն – գործնական տեսակէտ*», 1798  
 գերմ. բնագիր՝ "Anthropologie - in pragmatischer Hinsicht"  
 անգլ.՝ "Anthropology – from a pragmatic point of view"  
 (Կանտի դասախօսութիւններու հաւաքածոյ մը):
- 1798–էն ետք, 74–ամեայ Կանտ, թէեւ անձնապէս երկեր չէ հրատարակած, սակայն իր ուսանողները կը հրատարակեն մեծ ուսուցչէն գրի առնուած կարգ մը դասախօսութիւններ, ինչպէս օրինակ.–
14. «*Իմմանուէլ Կանտի տրամաբանութիւնը*», 1800  
 գերմ. բնագիր՝ "Immanuel Kants Logik", անգլ.՝ "Logic"  
 (հաւաքած ու խմբագրած է՝ Եէաշը – Gottlob Benjamin Jäsche),
15. «*Իմմանուէլ Կանտի մանկավարժութիւնը*», 1803  
 գերմ. բնագիր՝ "Über die Pädagogik", անգլ.՝ "On pedagogy"  
 (հաւաքած ու խմբագրած է՝ Ռինկ – Friedrich Theodor Rink):
16. «*Իմմանուէլ Կանտի փիլիսոփայական կրօնագիտութիւնը*» 1817  
 գերմ. բնագիր՝ "Immanuel Kants Vorlesungen über die philosophische Religionslehre"  
 անգլ.՝ "Lectures on Philosophical Theology"  
 (հաւաքած ու խմբագրած է՝ Պէօլից - K.H.L. Pölitz, յետ մահու հրատարակութիւն):

Վերոյիշեալ ցանկին վրայ երեւցող «*Քննադատութիւն՝ զուտ բանականութեան*» երկը, կը նկատուի Կանտի ամենակարեւոր երկը եւ գլուխ-գործոցը: 1770 թուականին, երբ Կանտ վերջապէս կը հասնէր իր նպատակին, ու կը դառնար Ալբերտուս համալսարանի փիլիսոփայութեան բաժանմունքի վերատեսուչ (պրոֆեսոր տիտղոսով), անկէ ետք եւ ամբողջ 11 տարիներ Կանտ որեւէ գիրք չի հրատարակեր, այլ միայն կեդրոնացած կը մտածէ, խորափանց կը մշակէ, արագօրէն կը գրէ ու 1781–ին կը հրատարակէ իր «*Քննադատութիւն՝ զուտ բանականութեան*» երկը: Առաջին շրջանին, այս գիրքի հանդէպ եղած հետաքրքրութիւնները քաջալերելի չէին, իսկ անդրադարձութիւնները՝ Կանտի համար շատ տագնապալի: Կանտ որոշեց, շատերու համար անհասկնալի այս երկը, աւելի պարզաբանել ու ամփոփել: Այս նպատակով Կանտ երկու տարի ետք կը հրատարակէ «*Պրոլեգոմէններ – ապագայ ամէն մետաֆիզիկայի, որ կը կարողանայ ինքզինք ներկայացնել, որպէս*

**գրատուժիւն»** 150 էջնոց գրքոյկը, որ պէտք է նախնական դիտողութիւններով աւելի հասկնալի դարձնէր առաջին երկը: Ասիկա, սակայն, ոչ միայն չօժանդակեց նիւթի հասկացողութեան, այլ աւելի խրթին ու անհասկնալի դարձուց զայն: 1787-ին վերջապէս լոյս կը տեսնէ Կանտի «Քննադատութիւն՝ զուտ բանականութեան» երկի վերանայուած ու ընդարձակուած երկրորդ հրատարակութիւնը, որմէ ետք Կանտ կը դառնայ շատ աւելի ճանաչուած ու հռչակաւոր փիլիսոփայ մը, թէ՛ Գերմանիոյ տարածքին եւ թէ՛ արտասահմանի մէջ:

Այսօր, ընդհանրապէս, Կանտի գլուխ-գործոցը կը հրատարակուի մէկ հատորով, որ կ'ընդգրկէ թէ՛ 1781-ի "A" եւ թէ՛ 1787-ի "B" տարբերակները, սակայն ոչ թէ յաջորդաբար՝ առանձին-առանձին բաժիններով, այլ մէջընդմէջ՝ բովանդակութեան հիմքի վրայ:

Եթէ «Քննադատութիւն՝ զուտ բանականութեան» երկը կը հանդիսանայ Կանտի գլուխ-գործոցը, շատերուն համար, սակայն, իր երկերուն մէջ ամենախնդրայարոյցը «Կրօնը՝ լոկ բանականութեան սահմաններուն մէջ» երկն է, որուն մասին անդրադարձանք «ԿԱՆՏ ԵՒ ԿՐՕՆԸ» բաժնին մէջ:

Ցանկին վրայ երեւցող վերջին գիրքը, «Մարդաբանութիւն – գործնական տեսակէտ», նաեւ Կանտի 1798-ին անձնապէս հրատարակած վերջին գիրքն է, ուր առաջին մասին մէջ՝ կը քննարկուին մարդու ճանաչողական կարողութիւնը, հաճոյքն ու տհաճութիւնը եւ ցանկութեան կարողութիւնը ապա երկրորդ մասին մէջ՝ կը նշուին տարբեր ժողովուրդներու ազգագրական ակնյայտ յատկանիշներն ու բնութագիրները:

Կանտ հայերու մասին գրած է (էջ B 310).—

«... Այլ քրիստոնէայ ժողովուրդի մը՝ Հայերուն մօտ, կը տիրէ իւրա-յատուկ վաճառականական ոգի մը. անոնք, փոխանակութեամբ կը զբաղին, ճամբորդելով Չինաստանի սահմաններէն մինչեւ Կորսոյի հրուանդանը՝ Կուինէական ծովափին (Cape Corso in West Africa): Ատիկա ցոյց կուտայ այս բանիմաց եւ ժրաջան ժողովուրդին բնութագիրը, ժողովուրդ մը, որ հիւսիս-արեւելքէն մինչեւ հարաւ-արեւմուտք ուղին կը կտրէ, անցնելով գրեթէ ամբողջ Հին Աշխարհի մէջէն եւ կը կարողանայ խաղաղասէր հանդիպումներ կայացնել բոլոր ժողովուրդներուն հետ ...:»

ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ՔԷՀԵԱՆԵԱՆ  
Գերմանիա

(Շար. 2)

**ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ**

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՇՆՈՐՀԱՒՈՐԵՑ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՅ  
ՏԻԱՐ ՎԱՅԱԳՆ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆԸ**

Կիրակի, 13 Մարտին, տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության նորընտիր նախագահ վսեմաշուք Վահագն Խաչատուրեանի երդման արարողությունը: Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը Ազգային ժողովի նախագահին կողմէ հրաւիրուած էր ներկայ գտնուելու երդման արարողութեան:

Այս առիթով, Նորին Սրբութիւնը հետեւեալ նամակը յղեց նորընտիր նախագահին. -

Նորին Վսեմութիւն  
Տիար Վահագն Խաչատուրեան  
Նախագահ Հայաստանի Հանրապետութեան  
Երեւան

Սիրելի Պրն. Նախագահ,

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն քրիստոնեական ջերմ սիրով ու Հայրապետական օրհնութեամբ կ'ողջունենք ձեզ, եւ ջերմօրէն կը շնորհաւորենք ձեր ընտրութիւնը, որպէս Նախագահ Հայաստանի Հանրապետութեան:

Համաշխարհային բազմազան ու այլազան տազնապներով յղի այս օրերուն, մեր հայրենիքը իր կարգին կը դիմագրաւէ ներքին խոր մտահոգութիւններ, եւ ենթակայ է շրջանային թէ միջազ-



գային աշխարհաքաղաքական իրադարձություններու ազդեցութեան: Արցախի պատերազմին յառաջացուցած ծանր հետեւանքները տակաւին կը մնան անլոյծ ու Արցախի ապագան անորոշ:

Արդարեւ, ներկայ ճգնաժամային շրջանին ձեր պատասխանատուութիւնը, որպէս նախագահ, ձեզ կը դնէ լուրջ մարտահրաւերներու դիմաց: Մեր յոյսն է ու սպասումը միանգամայն, որ կարենաք խոհեմութեամբ ու քաջութեամբ դիմագրաւել բոլոր դժուարութիւնները՝ մեր հայրենիքը հեռու պահելով ներքին բեւեռացումներէ, ամրապնդելով մեր ժողովուրդին միասնականութիւնը, ամուր հիմերու վրայ դնելով Հայաստանի հողային ամբողջականութիւնը, անվտանգութիւնը ու անկախութիւնը եւ միշտ հետապնդելով համազգային շահերը, ինչպէս խոստացաք կատարել այս առաւօտ ձեր երդման արարողութեան ընթացքին:

Յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, եւ անձնապէս, կը վստահեցնենք ձեզ, որ մեր Սուրբ Աթոռը պիտի շարունակէ զօրավիգ կանգնիլ Հայաստանի պետութեան ամրացման, Հայաստան-Սփիւռք գործակցութեան առաւել ծաւալման, եւ մեր ազգի ու հայրենիքի գերագոյն եւ ընդհանրական շահերու հետապնդման ու իղծերու իրագործման նպաստող ծրագիրներուն ու աշխատանքներուն:

Կ'աղօթենք առ բարձրեալն Աստուած, որ ձեզի շնորհէ քաջամոլջութիւն եւ իմաստութիւն, որպէսզի ձեր նախագահութեան ներքեւ մեր հայրենիքը ապրի խաղաղ ու բարգաւաճ տարիներ: Թող Աստուած պահէ ուպահպանէ մեր սիրելի ժողովուրդը ամէն տեսակ չարէ ու չարիքէ՝ ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփիւռս աշխարհի:

Հայրապետական օրինութեամբ եւ հայրական սիրով,

Աղօթարար՝

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**



Ի պատասխան Արամ Ա. Կաթողիկոսի շնորհաւորական նամակին, Յ.Յ. Նախագահ Տիար Վահագն Խաչատուրեան հետեւեալ շնորհակալական գիրը յղած է Վեհափառ Հայրապետին:

Երեւան, 18 Մարտի 2022 թ.

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս  
Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Առաջինին  
Անթիլիաս, Լիբանան

Վեհափառ Տէր,

Խորին երախտագիտութիւն եմ յայտնում Հանրապետութեան Նախագահի պաշտօնում ընտրուելու կապակցութեամբ Ձեր յղած ջերմ շնորհաւորանքի եւ անկեղծ բարեմաղթանքների համար:

Անուրանալի է Ձեր՝ որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ Սուրբ Աթոռի առաջնորդի անմնացորդ նուիրուածութիւնն ու անխոնջ աշխատանքն ազգապահպանութեան, աշխարհասփիւռ հայութեան միասնութեան եւ համազգային համերաշխութեան գործում:

Համոզուած եմ, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Սուրբ Աթոռը կը շարունակի նպաստել մեր պետութեան հզօրացմանը, Հայրենիք-Սփիւռք փոխգործակցութեան առաւել ամրապնդմանը եւ ազգային նպատակների իրականացմանը:

Մաղթում եմ Ձեզ, Վեհափառ Տէր, քաջառողջութիւն եւ արեւշատութիւն Ձեր բարձր առաքելութեան իրականացման ճանապարհին՝ ի շահ համայն հայութեան եւ բարօրութիւն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու:

Խորին յարգանքով՝

**ՎԱՀԱԳՆ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ**

**ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՏԻՐՈՋ ՄԻՋԵՒ  
ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ**

Երեքշաբթի, 19 Ապրիլին, Ռաֆայել Պետրոս ԻԱ. Հոգևոր Տերը այցելեց Արամ Ա. Վեհափառ Հայրապետին: Հանդիպումին ներկայ էին՝ օգնական Եպիսկոպոս Պեյրութի Թեմին Արհ. Տ. Գեորգ Եպս. Ասատուրեան, Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Շահե Արք. Փանոսեան, միջ-եկեղեցական յարաբերութեանց յանձնախումբի ատենապետ Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեմեգեան եւ Չալքայի Ս. Խաչ եկեղեցւոյ ժողովըրդապետ Հ. Սեպուհ Վրդ. Կարապետեան:



Երկու հոգևոր պետերու միջեւ աւելի քան ժամ մը տևող հանդիպումը առիթ հանդիսացաւ քննարկելու Լիբանանի, Սփիւռքի եւ Հայաստանի կապուած այժմեական հարցեր:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆՈՐՀԱՒՈՐԵՑ  
ՖՐԱՆՍԱՅԻ ՆԱԽԱԳԱՐ Է. ՄԱՔՐՈՆԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ**

Ֆրանսայի նախագահ Էմմանուել Մաքրոնի ուղղած յատուկ նամակով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան շնորհաւորեց անոր վերընտրութիւնը՝ որպէս նախագահ Ֆրանսայի Հանրապետութեան:



Խօսելով ներկայ ժամանակներու տագնապներու մասին՝ Նորին Ս. Օծութիւնը յիշեցուց, թէ «Ֆրանսասան ճշդորոշիչ դեր ունի ներկայ աշխարհաքաղաքական պայմաններուն մէջ», աւելցնելով՝ թէ «Ֆրանսասան իբրեւ խորհրդանիշ արդարութեան, բազմազանութեան եւ մարդկային իրաւանց, կոչուած է իր դերը վերաշեշտել, յատկապէս Եւրոպայի, Միջին Արեւելքի եւ Կովկասի մէջ ի խնդիր մարդկային իրաւանց եւ արժանապատուութեան պաշտպանութեան»:

Ապա, գնահատելով նախագահ Մաքրոնի զօրակցութիւնը հայ ժողովուրդին ու Հայ Դատին՝ կոչ ուղղեց, որ «Ֆրանսասան շարունակէ իր զօրակցութիւնը ի խնդիր Արցախի անկախութեան եւ Հայաստանի գերիշխանութեան ու հողային ամբողջականութեան պաշտպանութեան»:

Ֆրանսայի դերը Լիբանանի համար կենսական նկատելով, Նորին Ս. Օծութիւնը յոյս յայտնեց, որ «Լիբանանը շարունակէ մնալ նախագահին կարեւոր առաջնահերթութիւններէն մէկը, յատկապէս Լիբանանի պատմութեան ներկայ ճակատագրական շրջանին»:

**ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ  
ՍԵՈՒՏԱԿԱՆ ԱՐԱԲԻՈՅ ԴԵՍՊԱՆԻՆ  
ԻՖԹԱՐԻ ԶԻՐԸ**

Երեքշաբթի, 26 Ապրիլին, ընդառաջելով Լիբանանի մօտ Սեուտական Արաբիոյ դեսպան՝ Ուալիտ Ալ-Պուխարիի հրավերին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ներկայ գտնուեցաւ դեսպանին տան մէջ կազմակերպուած իֆթարին: Հրավերին ներկայ էին նաեւ Լիբանանի համայնքներու հոգեւոր պետերը, Ծոցի երկիրներու դեսպաններն ու Ամերիկայի Միացեալ Նահանգներու դեսպանուհին:



Հանդիպումը առիթ հանդիսացաւ ընդհանուր խորհրդակցութիւն մը ունենալու Լիբանանը յուզող հարցերուն շուրջ:

## ՍՓԻԻՌԻՔԻ ՏԱՐԻ

### ՍՓԻՐՔԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՎ ԱՌՑԱՆՑ ՔՆՆԱՐԿՈՒՄ

*Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին 2022 թուականը «Սփիւռ-  
քի Տարի» հռչակելուն առիթով, Ուրբաթ, 8 Ապրիլ 2022-ին տեղի ունեցաւ  
երկրորդ առցանց խորհրդակցութիւն-քննարկումը: Նիստին նախագահեց  
Վեհափառ Հայրապետը: Մասնակցեցան Միացեալ Նահանգներէն՝ Խաչիկ  
Թէօլէեան, Երուանդ Զօրեան, Հայկ Օշական, Գանատայէն՝ Լոուի Պէրպէր-  
եան, Հայաստանէն՝ Ռուբէն Ճանպազեան, Ֆրանսայէն՝ Յովէլ Շնորհօքեան,  
Զուիցերիայէն՝ փրոֆ. Թենի Փիրրի-Սիմոնեան, Արժանթինէն՝ Խաչիկ Տէր-  
Ղուկասեան, Լիբանանէն՝ Սեդա Խտրըշեան, Շահան Գանտաշարեան եւ Խա-  
չիկ Տէտէեան:*

*Տրուած ըլլալով, որ առաջին նիստը յատկացուած էր ընդհանուր մտա-  
ծումներու տեսութիւններու ներկայացման, որոշուած էր որ երկրորդ հան-*



դիպումը իբրեւ օրակարգ ունենայ քայլ մը դէպի գործնականացում նիւթը, հեռանկար ունենալով «Սփիւռքի Տարի»ն տարբեր ձեւերով յատկանշելու առաջադրանքը:

Վեհափառ Հայրապետը բացման իր խօսքին մէջ ընդգծեց.-

ա) Սփիւռքը կարիքը ունի վերակազմակերպումի. այս առիթով ան լուսարձակի տակ առաւ հարցադրումը՝ արդեօ՞ք Սփիւռքը պատրաստ է վերակազմակերպուելու:

բ) Իրապաշտ արժեւորումի անհրաժեշտութիւնը, իբրեւ մեկնակէտ՝ հարցերու դիմադրաւման եւ լուծման եղանակներու ճշգրտմին:

գ) Սփիւռքի վերակազմակերպման աշխատանքներու ծրագրաւորումի գործընթացի մշակումը. եւ այստեղ իբրեւ ենթաբաժին՝ եկեղեցին, եկեղեցւոյ շուրջ գործող մարմիններն ու միութիւնները եւ մեր ականազական կառույցները:



Նորին Ս. Օծութիւնը ընդգծեց, որ նոր օրակարգերու ճշգրտմի հրատապութիւնը, ի պահանջեալ հարկին, կառույց, համակարգ, մեթոտաբանութիւն եւ կանոնադրութիւններ արմատապէս բարեփոխելու սկզբունքը:

Այնուհետեւ ծաւալեցաւ մասնագիտական մակարդակի քննարկում: Ժողովականները կեդրոնացան Սփիւռքի այսօրուան քարտէսին, տարբեր բնութագիրներուն, կորիզ-չերտեր յարաբերակցութեան եւ աշխատանքի թիրախաւորման, ընդհանուր նուազագոյն համաձայնական փաստաթուղթի մը մէջ ամփոփելու համասփիւռքեան առաջադրանքներուն, արհեստագիտութեան, արհեստավարժութեան, թուային-ելեկտրոնային ծրագիրներու լիարժէք օգտագործման՝ ցանցային համակարգեր ստեղծելու հնարաւորութիւն-

ներուն եւ յատկապէս մասնագիտական բնագաւառներով նոր աշխատակարգեր որդեգրելու հրամայականին:

Նախորդ նիստին առանցքային կարեւորութեամբ նշուեցաւ երիտասարդութեան եւ կանանց ներգրաւման անհրաժեշտութիւնը: Այս երկրորդ նիստին օգտաշատ մասնակցութիւն ունեցան երիտասարդ խաւի ներկայացուցիչներ, որոնք աշխոյժ ներկայութիւն են սփիւռքահայ կազմակերպ կեանքին մէջ:

Նիստի եզրափակիչ խօսքին մէջ Վեհափառ Հայրապետը քննարկումի ընթացքին հնչած տեսակէտները ամփոփ կէտերու մէջ բանաձեւեց եւ ընդգծեց երեք ուղենիշ յետագայ աշխատանքներուն համար.-

ա.- Հաւաքական արժէքներ

բ.- Ինքնութիւն

գ.- Մասնակցութիւն

Վեհափառ Հայրապետը իր գոհունակութիւնը յայտնեց խորքային քննարկումի մասնագիտական մակարդակին եւ հաստատեց, որ ինչպէս առաջադրուած էր այս նիստը արձանագրեց քայլ մը դէպի աշխատանքային ուղիներ, դէպի գործնական դաշտ:



### ԱՌՑԱՆՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ ԴԵՏ

«Սփիւռքի Տարի» հռչակելէն ետք, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը անմիջապէս նախաձեռնեց գործնական քայլերու: Այս ծիրէն ներս տեղի կ'ունենան զանազան շրջանակներու հետ խորհրդակցական հանդիպումներ: Արդարեւ, Երեքշաբթի, 19 Ապրիլի երեկոյեան, առցանց խորհրդակցական հանդիպում կայացաւ Վեհափառ Հայրապետին եւ զանազան երկիրներու մէջ գործող 30-է աւելի երիտասարդներու հետ, որոնք գործօն մասնակցութիւն ունին իրենց գաղութներուն մէջ:

Նորին Ս. Օծութեան նախագահութեամբ կայացած նիստը վարեց՝ Արագ Գոճայեան: Բացման խօսքէն ետք, Վեհափառ Հայրապետը իր մտածումներն ու պատկերացումները փոխանցեց երիտասարդներուն: Ան դրուատեց անոնց դրական ներգրաւուածութիւնը իրենց գաղութներուն մէջ եւ նախանձա-

խնդրութիւնը գաղութներու վերանորոգման՝ ընդգծելով, որ ընկերութիւն մը չի յառաջդիմեր առանց երիտասարդութեան: Երիտասարդութիւնը ընկերութեան արիւնն է, ներկան է եւ ո՛չ միայն՝ ապագան: Անդրադառնալով Սփիւռքին առնչուած խնդիրներուն, Նորին Սրբութիւնը պարզեց մարտահրաւէրները եւ լուսարձակի տակ առաւ վերակազմակերպման աշխատանքներուն հրամայականը՝ երիտասարդներուն գործօն մասնակցութեամբ: Նկատի ունենալով, որ Սփիւռքը թէ՛ Հայոց Ցեղասպանութեան հետեւանքով յառաջացած եւ թէ՛ Հայաստանի տնտեսական տագնապէն մղուած արտագաղթած հայորդիներէ բաղկացած է, ինքնանպատակ վիճակ մը չէ եւ մնայուն շարժումի մէջ է. հետեւաբար, ճիշդ չէ ընդհանրական մօտեցումներով քննել եւ արժեւորել Սփիւռքը, որուն գաղութներուն միջեւ հասարակաց գիծը հայկական ինքնութիւնն ու պատկանելիութիւնն է: Ինչ կը վերաբերի երիտասարդութեան շօշափելի դերակատարութեան, ան քաջալերեց, որ երիտասարդութիւնը հետեւողի դերէն դուրս գայ, միաժամանակ նաեւ ընդգծելով, որ սորվողի դերին մէջ ըլլալը կարեւոր է, սակայն երբեք չի նշանակեր կրաւորական կեցուածք ունենալ: Աւարտին, Վեհափառ Հայրապետը ըսաւ, որ տուեալ առցանց խորհրդակցութեան նպատակն է լսել երիտասարդները, իմանալ անոնց դժուարութիւնները, ակնկալութիւնները, խօսիլ անոնց ընելիքներուն մասին, մանաւանդ համաշխարհայնացած եւ թուային աշխարհին ու անցակապատ ընկերութեան մէջ մեր ինքնութիւնը պահելու ու պահպանելու ուղիներուն մասին:

Ապա, խօսք առին մասնակիցները եւ անդրադարձան զիրենք յուզող հարցերուն: Անոնք դրին մայրենի լեզուին օգտագործման նուազումին եւ օտար լեզուամտածողութեան հարցը, ուղղագրութեան անբաւարար իմացութեան պատճառով առցանց հաղորդակցութեան մէջ հայատառ հայերէնի օգտագործման պակասը, ընկերային ցանցերու վրայ Հայաստան-Սփիւռք յաճախ





իրար չհասկնալու պատճառով իրար հակասելու խնդիրը, օտար վարժարան յաճախելու անպատեհութիւնները, արհեստագիտութեան անբաւարար օգտագործումը, երիտասարդութեան մօտ ինքնաճանաչման պակասը, Արցախեան վերջին պատերազմի պատճառով երիտասարդութեան մօտ յուսալքման խնդիրը, ղեկավարութիւն-երիտասարդութիւն յարաբերութիւններու խընդիրները՝ մեկնած հնամաշ հաղորդակցութեան միջոցներէն եւ սերնդային մեծ տարբերութիւններէն, տնտեսական իրավիճակի հետեւանքով գաղութը լքելու հարցը: Յիշեալ քննարկումներուն լոյսին տակ երիտասարդները նաեւ հանդէս եկան առաջարկներով՝ կրթական, կազմակերպչական, արհեստագիտական եւ եկեղեցական մարզերու առնչութեամբ:

Աւարտին, Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց մասնակիցներուն շինիչ ներդրումը եւ այդ գծով իր մտածումներն ու խորհուրդները փոխանցեց անոնց՝ ընդգծելով, որ այսօր չենք կրնար խոսափիլ համաշխարհայնացման մշակոյթէն, սակայն այս իրողութեան դիմաց հարկ է հասկնալ ու ըմբռնել մեր ինքնութիւնը, որ հիմնուած պէտք է ըլլայ արժէքներու եւ խարսխուած՝ իտէալներու վրայ. ուստի, հարցադրումներու ճամբով անդրադարձաւ հայ ըլլալու չափանիշներուն ներկայ դարուն մէջ եւ առաջարկեց մտածել համակարգ մը յառաջացնելու մասին, որ մեզ ո՛չ կը հեռացնէ ներկայ ընկերութենէն եւ ոչ ալ կը կղզիացնէ, այլ ներքին յարակցութիւն մը կը ստեղծէ երկուքին միջեւ: Ապա, ան քաջալերեց երիտասարդները շարունակել մասնակցութիւն բերել մեր հաւաքական կեանքին՝ դիտել տալով, որ իւրաքանչիւր կազմակերպութիւնը կամ կառույց պէտք է վերանորոգման ընթացք մը ճշդէ, որպէսզի դառնայ ներկայ աշխարհի պահանջներուն համահունչ:

Նշենք, որ խորհրդակցական հանդիպումները պիտի շարունակուին տարբեր ոլորտի մասնագէտներու շրջանակներու հետ:



### ՄԵՆՔ ԿԸ ՆԱՅԻՆՔ ՁԵՉԻ...

Երկնային օրհնութիւններով լեցուն Ս. Ծննդեան հրաշափառ տօնին յաջորդեցին հոգեւոր մտամփոփման քանի մը օրեր, որոնց ընթացքին կարելիութիւնը ունեցայ մտածումներուս կարկինը լայնցնելու, մեր ազգը յուզող ժամանակակից ներկայ տագնապներուն ու ցաւերուն վրայ: Խոստովանիմ, որ բազում են անոնք՝ հայրենականէն մինչեւ համազգայինը, ներազգայինէն մինչեւ գաղութայինները, ա՛լ չհաշուած տեղականները, կամ՝ ընդհանրապէս, աշխարհի առողջական, քաղաքական, ռազմական, ընկերային, տնտեսական համընդհանուր իրավիճակներն ու օրական դրութեամբ մարդկութիւնը նորովի ցնցող եւ իրենց տեսակին մէջ նոր ու բաւականին սուր մարտահրաւէրները...

Խորհրդածեցի ու ցաւեցայ: Առաւել ե՛լս վրդովեցայ մեր հայրենեաց զաւակներուն եւ հողերուն կորուստով: Անդադրում տագնապելով՝ յաւելեալ մտահոգութեամբ պաշարուեցայ մեր ազգային երանգապնակի, մեր ժողովուրդի ոգեղէ՛ն տեսիլքներու մթազնման հոլովոյթը աչքի առաջ ունենալով: «Յո՞ երթանք՝ հայրենիք ու ազգ» հարցումը բազմիցս խանգարեց ներաշխարհս: Թէեւ քաջ գիտեմ, որ հոգեւոր սպասաւորը կոչուած չէ յուսահատելու, եւ թէ ան՝ յաչս Աստուծոյ եւ ժողովրդեան, հրաւիրուած է անդադար յոյս ու լոյս ներշնչելու բոլորին՝ յանուն վաղուան արգասաբեր առաւօտեան, այսուհանդերձ, ունեցայ մարդկային տկարութեան պահեր, հոգեկան սրբափոքներ, նոյնիսկ մսեցայ ներքնապէս այնքան, որ իմ կարգին ե՛ս ալ փնտռեցի շող մը արեւի՝ հոգիս, միտքս ու մտածումներս կարենալ ջերմացնելու եւ լուսաւորելու համար:

Այսպիսի ծանր պահու մը մէջ էի, երբ մտքիս պաստառին կայծ տուաւ «2022-Սփիւռքի Տարի» բառակապակցութիւնը, մինչ Սփիւռքը ինձմէ դուրս յորդեցաւ այսպէս.

Սփիւռքը ամէն տեղ, բայց՝ ոչ մէկ տեղ,  
 Սփիւռքը՝ ուժեղ, բայց՝ խոնջ ու վհատ,  
 Սփիւռքը՝ առաջնորդող, բայց՝ անառաջնորդ,  
 Սփիւռքը՝ տարբեր, բայց՝ անտարբեր,  
 Սփիւռքը՝ լուսաւոր, բայց՝ մթամած,  
 Սփիւռքը՝ հայրենիքով, բայց՝ «անհայրենիք»,  
 Սփիւռքը՝ հարուստ, բայց՝ խիստ կարիքաւոր,  
 Սփիւռքը՝ զօրեղ ձայն, բայց՝ անձայնութիւն,  
 Սփիւռքը՝ շեշտակիր հրաման, բայց՝ անշեշտ վերաբերում,  
 Սփիւռքը՝ հզօր բազուկ, բայց՝ թեւաթափ ու թեւազուրկ,

Սփիւռքը՝ զգօն ու վստահ, բայց՝ խորթ ու անմիաբան,  
 Սփիւռքը՝ գերհզօր բռունցք, բայց՝ անկշռելի արդիւնք,  
 Սփիւռքը՝ հսկայ՝ մեծ ու վիթխարի, բայց՝ հիւլէ մը փոքրիկ, աննշմարելի՛,  
 Սփիւռքը՝ տարածուն ու անծայրածիր, բայց՝ անքարտէզ ու բացակայ,  
 Սփիւռքը՝ ահ բաշխող սարսափ, բայց՝ խոցուած արդարութիւն,  
 Սփիւռքը՝ պայքարի դրօշակիր շեփոր, բայց՝ իրաւագուրկ ինքնութի՛ւն...

\* \* \*

*Մտքիս թափը վերագտած, կը խորհրդածեմ բարձրաձայն. -*

Այս Սփիւռքի մասին է, որ կը խօսի Վեհափառ Կաթողիկոսը եւ ազգային առաջնահերթութիւն կը նկատէ անոր վերակազմակերպումը, 2022 թուականի իր Հռչակագրին ճամբով:

Մենք Սփիւռքն ենք: Մէկը անոնցմէ՝ ե՛ս ալ Սփիւռքն եմ եւ հահ՛, յանուն Արեւմտեան Թեմի, կը նայիմ ձեզի, Վեհափառ Տէր՝ իբրեւ Սփիւռքի հովուապետ-դեկավարի, որ առաջնորդողի ցուպը բարձր բռնած, Սփիւռքը վերակազմակերպելու, զայն նոր ժամանակներու չափանիշերով աշխատանքի մղելու, աւելի գործունեայ, արդիւնաւէտ ու նպատակասլաց դարձնելու ուղենշային պատգամ կը յղէք բոլորիս: Մենք կը նայինք ձեզի՝ հետեւելով ձեր ցուցմունքներուն, որպէսզի ձեր առաջնորդութեամբ մենք կարենանք մեր ժողովուրդի զաւակները դուրս բերել անտարբերութեան ճիրաններէն, սպիտակ ջարդի եւ բազում այլ անտեսանելի գերութիւններէ: Դուք՝ նման Մովսէս Մարգարէին, ձեր հայրապետական ասայով կ'առաջնորդէք մեզ եւ նոյն Մարգարէին նման, որ գերութենէ դուրս բերաւ Իսրայէլի իր ժողովուրդը, կը ձգտիք դուրս բերել մեզ այլասերման գերութենէն:

Եւ ո՛չ միայն: Ձեր Հռչակագրով, Վեհափա՛ռ Հայր, դուք նաեւ արդարօրէն մարտահրաւէր կը նետէք Սփիւռքին՝ իր հին ու լճացած, ժամանակավրէպ մտայնութենէն ու գործելաոճէն ձերբազատելու եւ նոր ու թարմ, մասնագիտացած երիտասարդութեամբ օժտելու իր կառոյցները, միութիւնները, աշխատանքի դաշտերն ու ղեկավարութիւնը, այլեւ նորոգ թափով վերակազմակերպուելու եւ երիտասարդական աւիշով մեր ազգային կեանքը թարմացնելու, վերաերիտասարդացնելու համար: Երիտասարդութիւն, որ արհեստագիտական նոր տուեալներով, մեթոտներով ու նորագոյն հնարքներով պիտի լեցնէ հայկական կեանքը շարժող բոլոր լծակներն ու ազդակները ու պիտի ըլլայ աւելի՛ տեսանելի ու աւելի՛ պատասխանատու ազգային կեանքի բոլոր բնագաւառներէն ներս, միաժամանակ իրենց աչքին առաջ ունենալով նախորդներու վաստակն ու փորձառութիւնը:

**Միրելի՛ Վեհափառ Տէր,**

2022 տարուան ձեր Հռչակագրին ընդմէջէն մենք մեզ կը զգանք լիարժեքօրէն ատակ այն ոստումին, զոր ազգովին պիտի նետենք՝ յանուն նոր սերունդներու առողջ ու հայեցի դաստիարակութեան եւ յանուն Հայ եկեղեցի, ազգ ու հայրենիք եռամիասնական ճիգերու առաւել ներդաշնակման ու հզօրացման:

Մեր խնդրանքն է, որ ձեր Հայրական օրհնանքը անպակաս ընէք մեր վրայէն, որովհետեւ մենք կը նայինք եւ մի՛շտ պիտի նայինք ձեզի:

ԹՈՐԳՈՄ ԵՊՍ. ՏՕՆՈՅԵԱՆ  
Առաջնորդ Ա.Մ. Նահանգներու  
Արեւմտեան Թեմի



**ՍՓԻՌՔԻ ԶԳՏՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԱԿԱՍՈՂ  
ՈՐԵՒԷ ԶԻԶՈՒՄ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ Է**

2022 թուականին «Սփիւռքի տարի» հռչակումը եւ Սփիւռքի մէջ բարեփոխումներու ձեռնարկումը մոռացութեան պէտք չէ մատնէ Հայաստանի հետ յարաբերութեան կարեւորութիւնը: Սփիւռքի վերակազմակերպման անհրաժեշտութեան շեշտումը զայն Հայաստանէն անջատելու նպատակ չի հետապնդեր: Ընդհակառակն, կազմակերպ ու գործօն Սփիւռքը Հայաստանի համար կրնայ դառնալ կարեւոր յենարան մը՝ աղբիւր թէ՛ մասնագիտացած մարդու թիւ եւ թէ՛ տնտեսական ներդրումներու:

Սփիւռքի մէջ փոփոխութիւններու զուգահեռ, անհրաժեշտ է սակայն հայաստանեան հասարակութեան ընկալումին փոփոխութիւնը Սփիւռքի նկատմամբ:

Ի՞նչ է Սփիւռքը հայաստանաբնակ հայուն համար: Կար ժամանակ, երբ հայաստանցիները կը կարծէին, որ ամէն սփիւռքահայ հարուստ է կամ առնուազն՝ բարեկեցիկ: Այս ըմբռնումը պատճառ կը դառնար, որ հայաստանցին մտածէ, որ սփիւռքահայը անկարող է հասկնալու տնտեսական ու ընկերային վատ պայմաններու մէջ տուճալող Հայաստանի քաղաքացիին վիճակը: Քանի որ Հայաստան այցելելու հնարաւորութիւն ունէին յարաբերաբար բարեկեցիկ սփիւռքահայերը, Հայաստանի քաղաքացին չէր ըմբռներ, որ գրեթէ բոլոր գաղութներուն մէջ կան հարուստներ ու բարեկեցիկներ, բայց նաեւ՝ աղքատներ, նոյնիսկ ընչազուրկներ:

Մփիւռքէն ակնկալուած թիւններու չափազանցուած պահանջը մինչեւ հիմա, կարգ մը «քաղաքագէտներու» կողմէ շահագործումի նիւթ է: Կարծէք Մփիւռքը եւս հայկական պետութիւն մըն է, որուն իշխանութիւնը կրնայ, երբ ուզէ, որոշումներ կայացնել եւ Հայաստանի օժանդակութեան ծրագիրներ իրագործել: Կը մոռցուի, որ սփիւռքահայերը տարբեր երկիրներու քաղաքացիներ են, ունին այդ երկիրներու քաղաքացիներուն իրաւունքներն ու պարտաւորութիւնները, իսկ համայնքին հայեցի դիմագիծի պահպանման ու պարագայբար Հայաստանի օժանդակութեան իրենց գիտակից պարտաւորութիւնը կը կատարեն յաւելուածաբար, զոհաբերելով ժամանակ, հանգիստ ու նիւթական միջոցներ: Մփիւռքեան կառոյցները կը գործեն առաւելաբար բարերարներու կողմէ կատարուած նուիրատուութիւններու շնորհիւ եւ ընդհանուր առմամբ հեռու են նիւթական ապահովութիւն ունենալէ: Արժանին պէտք է մատուցել թէ՛ նուիրատուներուն եւ թէ՛ այդ կառոյցները կամաւոր հիմունքով դեկավարողներուն:

Մփիւռքի մէջ ունինք զանազան ասպարէզներու մէջ յաջողած ու հռչակի տիրացած անհատներ: Արուեստներու, մարզախաղերու, գիտութեան, տնտեսութեան, ճարտարարուեստի, առեւտուրի ու այլ ասպարէզներու մէջ կան իրենց ապրած երկիրներուն մէջ յաջողած, նոյնիսկ միջազգային համբաւի տիրացած հայեր: Արդարօրէն հպարտ ենք այս բացառիկ հայերու իրագործումին համար: Նման անհատներու ներդրումը հայրենի քաղաքական, տնտեսական ու ընկերային կեանքին կարեւոր նպաստ մը կրնայ բերել Հայաստանի բարգաւաճման: Անկասկած: Սակայն սխալ է նման անհատներու հոյլը շփոթել Մփիւռքի հետ ու անոնց կամ այն հարցի մասին դիրքորոշումը թարգմանել իբրեւ Մփիւռքի հաւաքական տեսակէտ: Մփիւռքը ներգործօն իրականութիւն է շնորհիւ իր ստեղծած կառոյցներուն, որոնց նկատմամբ հայրենիքը պէտք է ուշադիր ըլլայ ու լսէ անոնց փորձառութենէն բխած ձայնը:

Վերելի մտորումները ծնունդ առին մտահոգութենէ մը: Մփիւռքի վերակազմակերպման որեւէ փորձ չի կրնար չունենալ քաղաքական ենթահող: Առաւելաբար Յեղասպանութեան հետեւանքով կազմաւորուած սփիւռքահայ համայնքներու համար Յեղասպանութեան միջազգային ճանաչումը, հատուցման պահանջն ու հայութեան եւ Հայաստանի ազատագրութեան համար պայքարը կը կազմեն քաղաքական ենթահողի էտարրերը:

Հայ-թրքական բանակցութիւններու առիթով, աւելորդ թող չհամարուի հայրենի իշխանութիւններուն յիշեցնել, որ Մփիւռքի ձգտումներուն հակասող որեւէ գիշում, որեւէ յանձնառութիւն անընդունելի է: Թուրքիան յաճախ Մփիւռքին վերագրած է իր նկատմամբ ժխտական դիրքորոշումը:

Անհրաժեշտ է ցոյց տալ, որ հայութիւնը մէկ է ու Հայաստանը համայն հայութեան հայրենիքն է:

ՏԻԳՐԱՆ ԶԻՆՊԱՇԵԱՆ

**ԸՆԿԵՐԱՑԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՒՆ**

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՒ ՍՈՒՐԻՈՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ ՆԻԹԱՊԷՍ ԳՆԱՀԱՏԵՑ**

*Ուսուցչաց տօնին առիթով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը իր Հայրապետական օրհնութիւնն ու գնահատանքը փոխանցեց Լիբանանի եւ Սուրիոյ ուսուցիչներուն: Այս առիթով, ան նիւթական օժանդակութիւն կատարեց Լիբանանի (662) եւ Սուրիոյ (400) անխտիր բոլոր վարժարաններու ուսուցիչներուն: Նորին Սրբութիւնը շեշտեց, որ «Յիշեալ երկիրներուն դիմագրաւած տնտեսական տագնապին լոյսին տակ, մեր կարիքաւոր ընտանիքներուն առընթեր, հրամայական է յատուկ ուշադրութիւն ընծայել մարդակերտումի եւ հայակերտումի առաքելութեան լծուած մեր ուսուցիչներուն»:*

*Յայտնենք, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, հետեւողական կերպով, ընկերային ծառայութեան ճամբով կ'օժանդակէ համայնքային կառոյցներուն եւ կարիքաւոր ընտանիքներուն:*

**ՀԱՅՐԱԿԱՆ ՀՈԳԱԾՈՒԹԻՒՆ**

*Արամ Ա. Վեհափառ Հայրապետը իր ամէնօրեայ խնամքին կիզակէտը դարձուցած է իր հոգեւոր-ազգային խնամքին յանձնուած բանաւոր հօտը, մանաւանդ երբ ան ընկերատնտեսական բազմապիսի դժուարութիւններու մէջ կը տուայտի եւ իր յոյսի փարոսը կը նկատէ Հայ եկեղեցին:*

*Հակառակ արտաքնապէս պարտադրուող եւ օր ըստ օրէ առաւել եւս սաստկացող տարածաշրջանային ամէն տեսակի աշխարհաքաղաքական խոչընդոտներուն, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, հայ-քրիստոնէական կոչումի օղակաւորումի անքակտելի խոր գիտակցութեամբ, կը շարունակէ իր համազգային առաքելութիւնը եւ Հայաստան, Արցախ ու Սփիւռք եռազնաց անսահմանափակ ծառայութեամբ կը ջանայ իր կարելին ընծայաբերել հայապահպանումի եւ հայակերտումի սրբազան ուխտի սեղանին: Եւ այս բոլորը, որպէսզի ամէն տեղ ծաղկի, կազմակերպուի եւ հզօրանայ հայ ընտանիքը, հայ դպրոցը, Հայ եկեղեցին, հայ մշակոյթը, հայ պահանջատիրութիւնն ու հայ հայրենիքը, ի մի բան՝ համայն հայութիւնը անխտիր: Մանաւանդ, երբ այս տարի Հայրապետական հռչակագիրով ազգովին հրաւիր-*

ուած ենք «Մփիւռքի Տարի»ի պրիսմակէն դիտելու եւ արժեւորելու մեր պատասխանատուութիւններն ու պարտաւորութիւնները եւ մեր մանուկներուն աչքերուն մէջ արիաբար նայելով՝ հայ պատմութեան դիմաց հաշիւ տալու մեր կատարածին համար:

Այս մտածումներով կը ողողուին մեր մտքերը, երբ 9 Մարտի նախօրեակին, Ուսուցիչներու Տօնին առիթով, Արամ Ա. Սրբազնագոյն Կաթողիկոս Լիբանանի եւ Սուրիոյ 1062 հայ ուսուցիչներուն իր Հայրապետական օրհնութիւնը կը բաշխէ եւ նիւթական գնահատանքը կը յայտնէ: Մանաւանդ Մեծ Պահքի այս օրերուն, այս մէկը այնքա՛ն դիպուկօրէն կը ցոլացնէ Տէրունի այն հրահանգը, որ կը թելադրէ հաց ուզող զաւակին քար չտալ (հմմտ. Մտ 7.9): Առաւել, կը պատգամէ նաեւ, որ հարցը տրամադրուած գումարին մէջ չէ, այլ՝ անով արտայայտութիւն գտած խորհրդանշական հայրական գօրակցութեան մէջ, որ կը թարգմանուի որպէս յանուն հայ աշակերտին եւ հայ ծնողքին երախտիքի անգին խօսք ըսել եւ սիրտէ-սիրտ զգացում թրթռացընել Ս. Մեսրոպ Մաշտոցի անդուլ յաջորդներուն:

Այս գուգորդումով, միտքս կու գան Սրբոց Թարգմանիչ Վարդապետներուն եւ անոնց ընդմէջէն մեր հայ գիրի բոլոր մշակներուն ու ուսուցիչներուն նուիրուած «Որք գարդարեցին» շարականին այս տողերը, որոնք Շարակնոցէն փոխ առնելով, բոլոր հայ աշակերտներուս կողմէ Ուսուցչապետ՝ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եւ իրեն առաքելակից մեր բոլոր հայ ուսուցիչներուն կը նուիրեմ՝ ի յիշատակ մեր բոլոր հանգուցեալ ուսուցիչներուն եւ ի յարգանս ողջ ուսուցիչներուն. «Սուրբ առաքեալներուն ճշմարիտ սիրոյ օրինակին նման Ս. Հոգիին անսպառ շնորհները ձեզմէ աղբերացան մեր մէջ»:

ՆԱՐԵԿ ԱՐՔ. ԱԼԵՄԵՉԵԱՆ



1062 ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ  
ԱՐԱՄ Ա. ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԿՈՂՄԵ

ՆՇՄԱՐ

Երեւոյթ մը, որուն մասին հարկ է անդրադառնալ: Երեւոյթ մը, որ մեզ կը հրաւիրէ լուսարձակի տակ բերելու հայ ուսուցիչին առանցքային կարեւորութիւնը մեր ժողովուրդի կեանքէն ներս: Այսպէ՛ս հաւատացած է ու ա՛յս

հաւատքով գործած է Վեհափառ Հայրապետը, Լիբանանի իր առաջնորդութեան օրերէն սկսեալ:

Ճի'շդ է, յատկապէս վերջին տարիներուն, Սուրիոյ եւ Լիբանանի տնտեսական տագնապի դառն պայմաններուն մէջ, Վեհափառ Հայրապետը օժանդակեց ու կը շարունակէ օժանդակել հազարաւոր կարիքաւոր ընտանիքներուն եւ մեր կառոյցներուն: Սակայն, ուսուցիչներուն կատարուած ներկայ օժանդակութիւնը վստահ եմ, որ Նորին Սրբութեան համար տարբեր իմաստ ու նպատակ ունի:

Անիկա արտայայտութիւնն է .-

- Հայակերտումի առաքելութեան նկատմամբ Վեհափառին ունեցած առաջնահերթ կարեւորութեան:

- Հայ մարդու կազմաւորման լծուած հայ դպրոցին վիճակուած նուիրական կոչումին:

- Հայ դպրոցին առաքելութիւնը իրագործող հայ ուսուցիչին նկատմամբ Վեհափառ Հայրապետին ունեցած յարգանքին ու գնահատանքին:

- Սփիւռքի վերակազմակերպման հաւաքական աշխատանքին մէջ կարեւոր դերակատարութիւն ունենալու կոչուած հայ ուսուցիչին նկատմամբ Նորին Սրբութեան ունեցած սպասումին:

Ահա թէ ինչո՛ւ, սովորական իմաստով պէտք չէ մօտենալ Հայրապետին հայրական օժանդակութեան: Անիկա հայ ուսուցիչին գնահատանք ու միաժամանակ սպասում է: Անիկա նաեւ յիշեցում մըն է մեր շրջապատին, թէ որքան կենսական է դերը հայ դպրոցին ու հայ ուսուցիչին:

ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉ





**ՏՕՆԱԿԱՆ**

**Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐՉԻ ԱԶԻ ՄԱՍՈՒՆՔԸ  
ՕՐՀՆԵՑ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ**

**ՈՒԽՏԻ ՕՐՈՒԱՆ ՀՍԿՈՒՄԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ**

*Շաբաթ, 2 Ապրիլին, Դպրեվանքի սաներն ու ուխտաւորներ առաւօտեան կանուխ ժամերուն ուխտերթ կատարեցին Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքէն Անթիլիասի Մայրավանք, որմէ ետք մատուցուեցաւ Ս. եւ Անմահ Պատարագ. յաջորդիւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս «Կիլիկիա» թանգարանէն դուրս բերաւ մեր եկեղեցւոյ հոգեւոր հարստութիւններէն սրբազան մասունքներ, իսկ երեկոյեան, նախագահութեամբ Վեհափառ Հայրապետին, Մայրավանքին մէջ տեղի ունեցաւ հսկումի արարողութիւն:*

*Արարողութեան աւարտին Վեհափառ Հայրը իր պատգամին մէջ, խօսեցաւ Գրիգոր Լուսաւորչին մեզի պարգեւած հոգեւոր վերածնունդի եւ հոգեւոր յեղափոխութեան մասին՝ նշելով, որ կարելի չէ հասկնալ սուրբը առանց անդրադառնալու մեր ժողովուրդի կեանքէն ներս իր կատարած հոգեւոր յեղափոխութեան: Ան դիտել տուաւ, որ «Թէեւ Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս առաքեալները Աստուծոյ լոյսը բերած էին Հայաստան, սակայն այդ մէկը տակաւին կենդանի եւ ամէնօրեայ ներկայութիւն չէր եղած ժողովուրդին մօտ, իսկ Լուսաւորիչը ինք եղաւ հաւատքի առաքեալը՝ յեղաշրջելով մեր ժողովուրդի կեանքը եւ գայն թրծելով Աստուածային լոյսով եւ երկնային օրհնութեամբ: Եթէ նայինք մեր ժողովուրդի պատմութեան, մեր մշակոյթին, յատկօրէն պիտի տեսնենք հոգեւոր արժեքներուն տիրական ներկայութիւնը: Մեր հոգեւոր մշակոյթը ծնունդ առաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչով եւ ապա՝ թարգմանչաց սերունդով նոր տարածք ու նոր ծաւալ ստացաւ»:*

*Խօսելով սօնին անժամանակ հրամայականին մասին, Վեհափառ Հայրապետը ըսաւ. «Այսօր աւելի քան երբեք մենք կարիքը ունինք Լուսաւորչի հոգեւոր վերածննդեան. Մեր շուրջը տիրող խաւարին եւ խաւարային մտածումներուն դիմաց այսօր մենք կոչուած ենք Ս. Գրիգոր Լուսաւորչի հոգեւոր վերածնունդը շարունակելու՝ հաւատարիմ ըլլալով աստուածաշնչական արժեքներուն եւ ուսուցումներուն: Աստուծոյ Որդին Ինք աշխարհ բերաւ հոգեւոր վերածնունդը եւ Ինք սկսաւ հոգեւոր յեղափոխութիւնը մարդկային կեանքին մէջ»: Եզրափակելով իր պատգամը, Նորին Սրբութիւնը յայտնեց, թէ «Լուսաւորիչը մեր կեանքին առջեւ քացաւ հաւատքի, լոյսի, հոգեւոր*

արժեքներու, նուիրումի, միասնականութեան, հայրենասիրութեան քամբան եւ իւրաքանչիւր հայ կոչուած է քալելու այդ քամբէն: Մենք Ս. Գրիգոր Լուսաւորչի գաւակներն ենք եւ որպէս գաւակներ՝ մենք պէտք է հետեւինք մեծ հայրապետին, մեծ սուրբին հոգեւոր վերածննդեան»:

*Նշենք, որ Անթիլիասի Մայր Տաճարի Ուխտի Օրոտան առիթով ուխտաւորներ աղօթական միջնոլորտի մէջ կը գիշերեն Տաճարին մէջ:*

**ՈՒԽՏԻ ՕՐՈՒԱՆ Ս. ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ**

*Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայոց աշխարհին մէջ ամրապնդեց Հայկական ինքնութեան հիմնաքար հանդիսացող քրիստոնէութիւնը եւ իր հաւատքին ու կամքին շնորհիւ ամբողջ ազգ մը դարձի բերաւ: Իր այս առաքելութեան ընթացքին ան դիմագրաւեց բազմաթիւ սոսկալի չարչարանքներ, որոնց յիշատակութիւնը Հայ եկեղեցին կը նշէ Գալստեան Կիրակիին: Լուսաւորչի մոտն ի վիրապ մօտին կը նշենք նաեւ Հայրապետարանիս ուխտի մօնը՝ Մայրավանքին համանուն Տաճարին նուիրուած:*



*Կիրակի, 3 Ապրիլին, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Վեհարանի դահլիճէն սկիզբ առաւ Հայրապետական թափօրը, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հոգեւոր հարստութիւնը համարուող սրբազան մասունքներու արկղով մուտք գործեց Մայր Տաճար: Ս. եւ Անմահ Պատարագը մատուցեց եւ յաւուր պատշաճի քարոզեց՝ մայր Տաճարի լուսարարապետ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան: Սրբազանը իր քարոզը սկսաւ Լուսաւորչի վիրապ մոտքի շարականի խօսքերով, որ արտայայտութիւն է ցնծութեան եւ հրաւէր՝ աղօթքի ու ապաշխարութեան: Ան ըսաւ, որ*

այսօր մենք էականորեն կարիքը ունինք աշխարհով մէկ հոգեւոր արթնութեան: Սրբազանը ամփոփելով տօնին պատմագը՝ նշեց, որ Ս. Գրիգոր Լուսաւորիչ ընդհանրական եկեղեցւոյ մեծ սուրբն է: Ան ոչ միայն հայոց հաւատքի կերտիչն է, այլեւ՝ հայ քրիստոնեայ ազգին կերտիչը: Սրբազան հայրը իր քարոզը եզրափակեց վստահեցնելով, որ իւրաքանչիւր հաւատացեալ հաւատքի իր զօրութեան չափով կը ստանայ ամէն ինչ որ կը խնդրէ սուրբէն, որովհետեւ սուրբերուն մէջ Քրիստոս կը բնակի:



Ս. Պատարագի աւարտին, գլխաւորութեամբ Վեհափառ Հայրապետին, տեղի ունեցաւ սուրբին լուսաւորող Աջով աւանդական թափօր: Յայտնենք, թէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետի Ս. Աջին կողքին հաւատացեալ ժողովուրդը օրհնուեցաւ նաեւ եկեղեցւոյ մեծագոյն սուրբերէն՝ Ս. Սեղբեստրոս եւ Ս. Նիկողայոս հայրապետներու աջերով, ինչպէս նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Կիլիկիա» թանգարանը ի պահ դրուած այլ սրբազան մասունքներով: Թափօրի աւարտին, ընկերակցութեամբ միաբան հայրերու, Նորին Ս. Օծութիւնը բարձրացաւ Ս. Խորան եւ Լուսաւորչի սրբազան Աջով կատարեց ջրօրհնէքի արարողութիւն: Ապա, Մայր Տաճարի խորանին վրայ գետեղուեցան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետին, Ս. Սեղբեստրոս եւ Ս. Նիկողայոս Հայրապետներուն աջերը, որոնք միաբան հայրերու հսկողութեան ներքեւ Խորանին վրայ մնացին մինչեւ ուշ երեկոյ:

**Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԼՈՐԻԶ ՀԱՄԱՏՈՅ ՄԵՐ ՀԱՅՐԸ**

ԱՅՍՕՐ ԶՈՒԱՐՃԱՑԵԱԼ՝ ՑՆԾԱՑ ԵԿԵՂԵՑԻ .  
ԴՐԱԽՏ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՆԿ ԾԱՂԿԵԱԼ .  
ՅՈՐՄԷ ՏՈՒԱԻ ՄԵՋ ՏՈՒՆԿ ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ  
ՏԷՐ ԳՐԻԳՈՐԻՈՍ ԵՒ ՊՏՂՈՎՆ ԻԻՐՈՎ ԵԼԻՑ՝  
ԶՏԻԵԶԵՐՍ ԱՄԵՆԱՅՆ»:

(Շարակնոց)

Սուրբ Գրիգոր Լուսաւորչի Խոր վիրապ մուտքի շարականի խօսքերը հրճուանքի եւ ցնծութեան մէջ կը ներկայացնէ եկեղեցին: Եկեղեցին, որ վերածուած է դրախտի, ուր ծաղկած է Աստուածատունկը՝ կենաց ծառը եւ որմէ մեզի տրուեցաւ անմահութեան տունկ մը՝ Սուրբ Գրիգորը, որ իր պտուղովը լիացուց ամբողջ Տիեզերքը:

Այսօր մեր սրտերը դարձեալ ցնծութեան մէջ են, Սուրբի Խոր վիրապ մուտքի տարեկան յիշատակի տօնակատարութեան առիթով:

Օրհնեալ Սուրբ աջը դարձեալ կը բարձրանայ Օրհնելու ուխտաւոր ժողովուրդը, Հայ Եկեղեցին, Տանն Կիլիկիոյ Աստուածանուէր Հայրապետութիւնը՝ շառաւիղը Լուսաւորչի ու ուխտաւոր զաւակները եկեղեցւոյ:

Եկէք մեր հոգիներու աչքերը բանանք եւ խոստովանինք, որ Հայ Եկեղեցւոյ կեանքին վրայ մեծ է եղած Սուրբ Գրիգոր Լուսաւորչի քրիստոնէական հաւատքի դրոշմը՝ Լուսաւորումը: Եկէք վկայենք, որ Սուրբի անձին վրայ հաստատուած է հայ ազգի լուսաւոր ինքնութիւնը:

Սուրբ Գրիգոր Հայոց Հայրապետի մուտն ի վիրապի նշումը աղօթքի եւ ապաշխարութեան հրաւէր է բոլոր հաւատացեալներուն:

Այս տօնին ընդմէջէն այսօր կը վերանորոգենք մեր ուխտը, սէրն ու անհուն յարգանքը հանդէպ Հայոց հաւատոյ Հօր: Կը գիտակցինք, որ այսօր որքա՛ն կարիքը ունինք, աշխարհով մէկ, հոգեւոր արթնութեան՝ Սուրբին հայրական Լուսաւորութեան օրինակին հետեւելով:

Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց հայրապետները, մեծ եղեռնի հալածանքէն եւ աքսորէն ետք, հզօր կամքով ու վերանորոգ հաւատքով վերականգնեցին պատմական Սսոյ, այսինքն՝ Կիլիկեան Հայոց Հայրապետութիւնը, Լիբանան հաստատուած, Հայոց Ցեղասպանութենէն ազատած, հայ որբերու մեծադոյն կեդրոնին՝ Անթիլիասի մէջ: Հոս բոցավառեցաւ կրկին կանթեղը Սուրբ Լուսաւորչի... եւ սա Հրաշք Աստուածային նախախնամութիւնն էր: Հայոց հայ-

րապետները գիտէին, որ Սուրբի հայրական ու կենդանի օրհնութեամբ դարձեալ պիտի վերականգնի ողջ հայ ազգը՝ իր սրբութիւններուն կառչած ոգիով: Ահա թէ ինչո՞ւ մեծ ցնծութեան տօն է Սուրբին վիրապ մուտքը:

Երեք ճշմարտութիւններ կ'ուզենք ընդգծել այսօր, Սուրբ Գրիգոր լուսաւորչի Խոր վիրապ մուտքի յիշատակին առիթով, իբրեւ խոկման կէտեր:

**Ա) Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ կենդանի ներկայութիւն էր երէկ, է այսօր եւ պիտի մնայ յաւիտեան:** Ան, ինչպէս պիտի բնութագրէին կարգ մը վարդապիւրներ, յորովայնէ ընտրեալ սուրբն է հայ ազգին՝ առաքեալը հայ աշխարհին: Անոր սրբազան կոչումն էր հայ ժողովուրդին հոգևոյ լուսաւորութիւնը: Հետեւաբար, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ կենդանի ներկայութիւն պէտք է դառնայ գալիք սերունդներուն:

Աւանդութիւնը կը պատմէ, թէ Լուսաւորչի մայրը զինք յղացաւ երբ սուրբ Թադէոսի գերեզմանը այցելեց, եւ մեր եկեղեցւոյ շարականը կ'երգէ այդ աւանդութիւնը ըսելով՝ Սուրբ Թադէոսի պարզեւական զաւակ՝ սուրբի կենդանի նշխարներուն: Սուրբ Գրիգոր տեւաբար ունեցաւ Սուրբ Թադէի օրհնութիւնն ու աղօթքները, որոնք ընկերացան իր մանկութենէն սկսեալ: Ապացոյցը՝ դեռ երեսայ հասակին ազատեցաւ իր հօր սպանութեան արհաւիրքէն:

**Բ) Սուրբ Գրիգոր Լուսաւորչի յորովայնէ ընտրեալ ըլլալուն երկրորդ վկայութիւնը կը տեսնենք Յովհաննու աւետարանի առաջին գլուխին մէջ, ուր յիշուած է Յիսուսի եւ հայոց առաջին լուսաւորիչներէն Նաթանայէլին (Բարթողոմէոս) խօսակցութիւնը:**

Նաթանայէլ երբ գիտցաւ թէ Յիսուս տեսաւ զինք իր տան թղենիին տակ աղօթած պահուն, հիացումով լեցուեցաւ ու խոստովանեցաւ Անոր Աստուծոյ Որդին ու սպասուած Մեսիան ըլլալը: Յիսուս ըսաւ անոր. «Կը զարմանա՞ս որ քեզ տեսայ թղենիին տակ, ճշմարիտ կ'ըսեմ քեզի թէ պիտի տեսնես երկինքը բացուած ու աստուծոյ որդին հրեշտակներով շրջապատուած»:

Յիսուս դեռ նոր իր առաքելները կը հաւաքէր: Հետեւաբար, կանուխ էր իր երկրորդ գալուստին եւ դատաստանին մասին խօսիլը: Մեր համոզումն է, որ մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս կ'ակնարկէր այն երեւոյթին, որ տեղի պիտի ունենար Հայաստանի մէջ, մեր երկրորդ Լուսաւորիչին՝ Սուրբ Գրիգորի դիմաց: Այո՛, Յովհաննու աւետարանի առաջին գլուխի 51-րդ համարը, կ'ակնարկէր Սուրբ Գրիգորի տեսիլքին: Տէրը ի յառաջագունէ տեսնելով սուրբին լուսաւորիչ առաքելութիւնը, նախախնամութեան յարմարագոյն պահուն իջաւ վաղարշապատ՝ Սուրբ Գրիգորի աղօթքներուն ի վկայութիւն:

«Ճշմարիտ կ'ըսեմ. պիտի տեսնէք երկինքը բացուած եւ Աստուծոյ հրեշ-

տակները որ կ'ելլեն ու կ'իջնեն Որդի Մարդոյ վրայ»: Աստուածորդին կը տեսնէր Լուսաւորիչ հայրապետի առաքելական գործը ու կ'օրհնէր Հայաստանն էջքով:

**Գ) Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի Աստուծոյ ընտրեալը ըլլալու երրորդ վկայութիւնը՝ երկար տարիներ Խոր Վիրապ թաղուելէն ետք դուրս գալն է, յարութիւն առնելն է:**

Տէրը ինչպէս Դանիէլը առիւծներու գութին մէջ կենդանի պահեց, այնպէս ալ պահեց Սուրբ Գրիգորը: Երբ ժամանակը հասաւ, բացաւ դռները վիրապին ու դուրս հանեց՝ Հայաստան աշխարհը անգամ մը եւս աւետարանի սրբազան լոյսով լուսաւորելու:

Ազգ մը, ժողովուրդ մը կը բարգաւաճի հերոսներով: Մեծ Հերոսներ են անոնք՝ որոնք կեանքի գարունը կ'ընծայեն Աստուծոյ, կ'ուխտեն իրենց անձը նուիրաբերել ընդհանուրի բարիքին՝ ազգին, եկեղեցւոյ ու հայրենիքին: Անոնք են, որ ամէն գնով կը նուիրուին առաքելութեան՝ իրենց ժողովուրդի հոգեմտաւոր արթնութեան: Անձնուէր ծառայութեամբ կը ջանան ամոքել հասարակած ցաւերն ու կը սատարեն ազգի գաւազներուն բարւոք գոյակերտումը: Աստուած այնպիսիները միշտ կ'ընտրէ իբրեւ առաջնորդ, թագաւոր, կաթողիկոս, առաքեալ իր սիրելի գաւազներուն:

**Դ) Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ ոչ միայն հայոց հաւատքի կերտիչն է, այլեւ հայ քրիստոնեայ ազգին կերտիչը:**

Մեծ են մեր հաւատոյ հօր բարիքները: Ան հայու սրտին մէջ խորապէս դրոշմեց Քրիստոսի հաւատքն ու սէրը: Ծաղկեցուց ու վերալուսաւորեց Հայ Եկեղեցին, մանաւանդ անմիաբան ու անորոշութեամբ առաջնորդուած մէկ պահուն: Հայոց նախարարական տունները զինեց Քրիստոսի սուրբ հաւատքով, նոր իմաստութեամբ: Հաւատքի լոյսով միաւորեց հայոց ղեկավարութիւնը ու ազգին տուաւ միասնականութեան կամք, ազգային բարոյական ոգի, հայրենասիրութիւն, քրիստոնէական հաւատքով պսակուած ազգային նոր ինքնութիւն:

Հայոց հաւատոյ հայրը՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ, Վաղարշապատի մէջ սրախողխող նահատակուած սուրբ Հռիփսիմէն ու ութը կոյսերը թաղելէ ետք վաթսուն օրեր, Առաջաւորաց բարեկենդանէն մինչեւ Սուրբ Զատիկ, աւետարանեց ու քրիստոնէական հաւատքի լոյսը փոխանցեց հայ ժողովուրդին: Ինչպէս Յովնան մարգարէն, երբ կէտ ձուկին փորէն դուրս եկաւ, Նինուէի ժողովուրդը ապաշխարութեան հրաւիրեց, նոյնպէս Սուրբ Գրիգոր, երբ վիրապէն հրաշքով ազատագրուեցաւ, զղջման ու ապաշխարութեան հրաւիրեց հայ ժողովուրդը՝ առաջաւորաց պահքը հաստատելով:

Հաւաքական, կենսական եւ գիտակից հաւատքը՝ եկեղեցւոյ մէջ է: Հայ Եկեղեցին Հայաստան երկրի վրայ Աստուծոյ թագաւորութեան տաճարն է: Այսպէս կարողացաւ հայ ժողովուրդը, իբրեւ մէկ եկեղեցի ու մէկ ամբողջութիւն, դէպի Աստուած իր պաշտամունքով՝ Աստուածային հովանիին տակ պաշտպանուած ազգ դարձաւ: Նոր իսրայէլ, նոր հոգեւոր իշխանութիւն հիմնուեցաւ Կովկասի լեռնաշղթայէն անդին: Հայ ազգը գոյատեւեց դարերու ընթացքին, ու Լուսաւորչի տեսիլքով ու հաւատքով միայն կրնայ գոյատեւել գալիք դարերուն:

Ե) Սուրբ Գրիգոր լուսաւորիչ նաեւ վերակազմաւորեց Հայ Եկեղեցւոյ կառոյցը: Ան հաստատեց օրէնքներ, օրհներց Սուրբ Միւռոնը, ու ամենակարեւորը, տուաւ Հայ Եկեղեցւոյ Ուղղափառ հաւատքը: Արդար է զինք կոչել Կեսարիոյ հոգեւոր կեդրոնին առաջին աստուածաբանը ու մեծ աստուածաբաններու խումբին գլուխը: Յոյն ուղղափառ եկեղեցին զինք կը կոչէ «Սուրբ Գրիգոր հրաշագործ հայրապետը մեծն հայոց» եւ կը տօնէ սեպտեմբեր 30-ին: Արդար է նաեւ ըսել, որ սուրբին փոխանցած Քրիստոնէական Հաւատքը հայոց համար զօրութեան աղբիւր դարձաւ:

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ վերածեւաւորեց Հայ Եկեղեցւոյ կրօնական դիմագիծը: Հայ Եկեղեցւոյ կառոյցը դարեր շարունակ մնաց այնպէս՝ ինչպէս որ Սուրբ Գրիգոր հաստատեց եւ ուսոյց: Կատարեալ եկեղեցի մը՝ ծէսով, աղօթքներով ժամերգութիւններով, Ս. եւ Անմահ Պատարագով, Աննման հոգեւոր երաժշտութեամբ, շարականով, ճարտարապետութեամբ, եւ մանաւանդ հաւատոյ բանաձեւերու դաւանութեամբ: Անհամար սուրբեր հալածուեցան եւ նահատակութեամբ պաշտպանեցին այդ հաւատոյ դաւանութիւնը, եւ Հայ Եկեղեցին պատմութեան մէջ դարձաւ ու մնաց կատարեալ Մայր եկեղեցի մը զրահուած անգին ժառանգութեամբ: Մէկ խօսքով Սուրբ Գրիգոր շնորհեց հոգեւոր հայրենիք մը ողջ հայութեան:

Սուրբ Գրիգոր Հաւատոյ Հանգանակին մէջ թերին լրացուց՝ արդարօրէն աւելցնելով մէկ Աստուծոյ՝ Սուրբ Երրորդութեան հաւատքը. «Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս երկրպագանելով Սրբոյ Երրորդութեան եւ Միոյ Աստուածութեան»:

Ազաթանգեղոս իր հեղինակած հայոց պատմութեան գիրքին մէջ կը ներկայացնէ Սուրբ Գրիգորի վարդապետութիւնը, որոնք Հայ Եկեղեցւոյ հաւատոյ բանաձեւերը հանդիսացան: Դարեր ետք, Սուրբ Գրիգոր Տաթեւացի խօսելով Սուրբին քրիստոսաբանական ժառանգութեան մասին, կը շեշտէ թէ այդ հաւատքը Սուրբ Լուսաւորիչէն մեզ մնացած հայոց դաւանութիւնն է: Սուրբ Գրիգոր Տաթեւացի կը գրէ իր ոսկեբորիկ գրքին մէջ հետեւեալը. «Սուրբ Երրորդութեան երկրորդ դէմքը՝ Բանն Աստուածը, մարդեղութեամբ

Աստուածային եւ մարդկային բնութիւնները միացուց իր մէկ անձին մէջ: Բնութեանց միութիւնը Հայոց անխախտ հաւատքն է, Սուրբ Գրիգոր Լուսաւորչէն ժառանգուած:

Սուրբ Գրիգոր կը պատուիրէ՝ պատուէ հայրդ ու մայրդ, որպէսզի կեանքդ երկար ըլլայ. Նոյն Աստուածային այդ պատուիրանի հրաւերով, երբ ազգովին պատուենք, սիրենք ու մեծարենք մեր հաւատոյ հայրն ու բոլոր հոգեւոր հայրերը, ա՛յն ատեն ազգն ու եկեղեցին երկար կեանք պիտի ունենայ:

Հարկ է վերականգնել, վերալուսաւորել հայ ազգի զաւակներու սրտերուն մէջ ճշմարիտ հաւատքը Քրիստոսի, սէրը ազգային ինքնութեան, Մայր եկեղեցւոյ ու հայ դպրութեան հանդէպ: Էական է հաւատարմութիւն ունենալ Հայ Եկեղեցւոյ եւ մեր հաւատոյ Հօր՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչին նկատմամբ, որովհետեւ այս արժէքները կը մնան պահպաններն ու պաշտպանները հայ ժողովուրդին:

Հաւատքիդ չափով կը դատուիս: Վստահ եղէք, թէ իւրաքանչիւր հաւատացեալ հաւատքի իր զօրութեան չափով կը ստանայ բժշկութիւն:

Աղօթենք առ Աստուած, ինդրենք Սուրբ Լուսաւորչի՝ Հայոց հօր բարեխօսութիւնը: Ամէն հայ հաւատացեալ հոգւոյ աչքերով թող մօտենայ եւ օրհնուի անոր հայրական Սուրբ Աջէն, ստանայ յաւերժօրէն ճառագայթող Սուրբ Հոգիի շնորհքն ու երկնային պահպանութիւնը:

Սուրբ Գրիգոր Լուսաւորչի յիշատակի սրբազան տօնին եւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տարեկան ուխտի օրուան առիթով, կը շնորհաւորենք Սուրբ Գրիգոր Լուսաւորչի արժանաւոր ժառանգորդ մեր սիրելի Վեհափառ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետն ու մեր Կիլիկեան սուրբ միաբանութիւնը: Կ'օրհնենք լուսաւորչահաւատ հայ ժողովուրդը: Սա Հայ Եկեղեցւոյ հաւատարիմ ըլլալու, հաւատարիմ մնալու ուխտի տօնն է: Հազար փառք Ամենասուրբ Երրորդութեան՝ Հօրը եւ Որդիին եւ Սուրբ Հոգիին, որով օրհնեալ էք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԿՈՄԻՏԱՍ ԱՐՔ. ՕՀԱՆԵԱՆ



## ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԸ ԴԱՐՁԵԱԼ ԾԱՂԿԱԶԱՐԴՈՒԵՑԱԲ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԶԱԲԱԿՆԵՐՈՎ

Կիրակի, 10 Ապրիլի առաւօտուն, Անթիլիասի Մայրավանքի Մայր Տաճարն ու շրջափակերը ողողուած էին հազարաւոր մանուկներով, որոնք իրենց ծաղկազարդող ներկայութեամբ մասնակից դարձան Քրիստոսի Երուսաղէմ յաղթական մուտքի տօնի յիշատակութեան՝ եկեղեցական արարողութեանց ու մանուկներու աւանդական թափօրին: Այս առիթով, Ս. եւ Անմահ Պատարագը մատուցեց եւ յաւուր պատշաճի քարոզեց՝ Կաթողիկոսարանի «Կիլիկիա» մատենադարանի տեսուչ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան:

Բազմաթիւ հայորդիներու մասնակցութեամբ աւանդական մանուկներու թափօրէն ետք, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը հաւատացեալ ժողովուրդին յղեց իր Հայրապետական խօսքը: Առաջին հերթին, ան գոհութիւն ու փառք յայտնեց Աստուծոյ, որ դարձեալ առիթը ունեցանք ի մի համախմբուելու եւ միասնաբար մեծաշուք հանդիսութեամբ նշելու մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Երուսաղէմ յաղթական մուտքի տօնը: Ի տես բազմահազար հայորդիներու ներկայութիւնը Անթիլիասի Մայրավանքին մէջ,





*Նորին Սրբութիւնը յայտնեց, որ մեր հաւատքը խորացնող եւ մեր յոյսը ամրացնող տեսարան է սա՛ յատկապէս Լիբանանի հայութեան կեանքէն ներս: Ան դիտել տուաւ, որ մեր ողջ պատմութեան ընթացքին, ինչպէս նաեւ ներկայիս, դժուար օրեր ապրած ենք ու կ'ապրինք, սակայն մեր հաւաքական հաւատքով, կամքով ու տեսիլքով կարողացած ենք դիմագրաւել եւ յաղթա-*



հարել ամէն տեսակ դժուարութիւն: «Մի՛ վախնար, ժողովուրդ հայոց: Մի՛ վախնար որեւէ չարէ ու չարիքէ: Հաւա՛տք ունեցիր, որպէսզի հաւատքով դիմակայենք ամէն տեսակ դժուարութիւն ու մարտահրաւեր: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը՝ իր գահակալով, միաբանութեամբ, թեմական եւ ժողովական կառոյցներով, լիքանաճահայութեան կողմէն է: Ամէն իմաստով քեզի հետ պիտի շարունակենք ըլլալ, որովհետեւ Լիբանանի հայութիւնը կարելոր դեր ունի ո՛չ միայն Լիբանանի մէջ, որպէս Լիբանանի գլխաւոր համայնքներէն մէկը, այլ նաեւ՝ Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի տարածքին: Հետեւաբար, սա պահուն, վերանորոգեմք մեր հաւատքը, կամքը ու յոյսը. համախմբուինք մեր եկեղեցւոյ ու կառոյցներուն շուրջ եւ վստա՛հ եղէք, երբ միակամ եմք, կրնանք ամէն տեսակ չար ու չարիք հեռացնել մեր կեանքէն եւ շարունակել մեր կազմակերպ ու կենսունակ կեանքը», **չեչտեց Վեհափառ Հայրապետը եւ հրաւիրեց հաւատացեալները Քրիստոսի մուտքը Երուսաղէմ հաւատքով դիմաւորելու, որպէսզի Անոր ներկայութեամբ մեր կեանքը ծաղկազարդուի հոգեւոր, ազգային ու բարոյական արժէքներով:**

**Հայրապետական խօսքէն ետք, փոքրիկները բարձրացան Արամ Ա. Կաթողիկոսին մօտ եւ ստացան անոր օրհնութիւնը:**

**Նշենք, որ նոյն օրը երեկոյեան, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Անթիլիասի մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ Դոնբասցէի խորհրդաւոր հոգեպարար արարողութիւնը:**

**Արարողութեան աւարտին յաւուր պատշաճի քարոզեց՝ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան: Մեկնելով օրուան խորհուրդէն, բանալու Աստուծոյ արքայութեան դուռը՝ սրբազանը ընդգծեց, որ մարդիկ յաճախ հետաքրքրուած են իրենց տան, պաշտօնին, ունեցուածքին դռները փակելով: Ան ըսաւ, որ այլոց առջեւ դուռ փակելով մենք մեր առջեւ փակած կ'ըլլանք հաղորդութեան եւ սիրոյ դռները, որուն համար եկաւ Տէրը՝ Երկնքի Արքայութեան միակ Դուռը բանալու բոլոր անոնց առջեւ, որոնք հեզութեամբ, խոնարհութեամբ, զղջումով, յանձնառութեամբ կը մօտենան այդ Դռան եւ կը մտնեն ողորմութեան լոյսին մէջ:**

**ԱԻԱԳ ՇԱԲԱԹՆ ՈՒ Ս . ԶԱՏԻԿԸ  
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ**

**ՏԱՍՆ ԿՈՒՍԱՆԱՑ**

*Աւագ Երեքշաբթի, 12 Ապրիլի Երեկոյեան, Անթիլիասի Մայրավանքի Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ «Տասն Կուսանաց» յիշատակի նուիրուած Երեկոյեան ժամերգութիւն:*



*Արարողութեան աւարտին, փոխ-լուսարարապետ Հոգշ. Տ. Օշին Վրդ. Չուալերթանեանի առաջնորդութեամբ, Քրիստոսի պատմած առակին տասը կոյերը խորհրդանշող կիրակնօրեայ վարժարանի տասը աշակերտներ, վարժարանի տնօրէնուհիին եւ աշակերտներու ծնողներուն ընկերակցութեամբ, բարձրացան Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին մօտ՝ ստանալու համար անոր հայրական օրհնութիւնը:*

*Վեհափառ Հայրապետը գնահատելով մեր եկեղեցւոյ ու անոր սրբազան Աւանդութիւններուն նկատմամբ Կիրակնօրեայ վարժարանի աշակերտներուն ու անոնց ծնողներուն ունեցած նախանձախնդրութիւնը՝ իր հայրական օրհնութիւնը փոխանցեց եւ յորդորեց ներկայ աշխարհի պայմաններուն մէջ առաւելագոյն չափով կառչած մնալ մեր եկեղեցական ու ազգային արժէքներուն:*

**ՈՏՆԼՈՒԱՅ**

Աւագ Հինգշաբթի կը նշենք Քրիստոսի վերջին ընթրիքը, որուն ընթացքին Աստուծոյ Որդին խոնարհաբար եւ սիրոյ ծառայութեամբ կը լուայ իր առաքեալներուն ոտքերը, կը հաստատէ Ս. Հաղորդութեան խորհուրդը եւ կ'ենթարկուի մատնութեան ու ձեռքակալման, որպէսզի իր արեան գնով փրկէ համայն մարդկութիւնը:

Առ այդ, Աւագ Հինգշաբթի, 14 Ապրիլի երեկոյեան, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ կարգ ոտնլուայի: Նորին Ս. Օծութիւնը, հետեւելով Քրիստոսի օրինակին, դենջակ կապած ծունկի գալով լուաց Յիսուսի տաներկու աշակերտները խորհրդանշող միաբան հայրերուն եւ Դպրեվանքի սաներուն ոտքերը: Յիշեալ խորհրդալից արարողութենէն ետք, Նորին Սրբութիւնը հաւատացեալներուն ուղղեց իր Հայրապետական պատգամը՝ առանցք ունենալով քրիստոնէական հաւատքի էութիւնը կազմող սէրը:

Վեհափառ Հայրապետը դիտել տուաւ, որ ոտնլուայի արարողութեան ընթացքին ընթերցուած աղօթքներուն եւ երգուած շարականներուն մէջ կը շեշտուի սիրոյ հրամայականը, իսկ սէրը տեսութիւն մը չէ, այլ կեանք է: Ան շեշտեց, որ «Աստուած սէր է եւ սէրը Աստուած է: Աստուած սէրէն մղուած ստեղծեց տիեզերքն ու մարդը եւ իր Միածին Որդին դրկեց աշխարհ: Աստուծոյ Որդին նոյն սէրէն մղուած խաչ բարձրացաւ, որպէսզի Աստուծմէ հեռացած եւ սէրը ատելութեան վերածած մարդը փրկէ: Աստուած Ի՛նք սիրեց մարդը եւ Ի՛նք մօտեցաւ մարդուն, եւ ըսաւ՝ ուր Աստուած կայ հոն



սեր կայ, իսկ հոն ուր Աստուած չկայ՝ ասելուօրին, թշնամանք ու խաւար կը տիրէ»:

*Շարունակելով իր պատգամը, Նորին Սրբութիւնը ընդգծեց, որ «Ուրն-լուայի արարողութիւնը յիշեցում մըն է մեր բոլոր գաւակներուն՝ Հայաստանի, Արցախի, Լիբանանի եւ սփիւռս աշխարհի, որ որպէս քրիստոնէութիւնը պետական կրօնք ընդունած առաջին ժողովուրդ, կոչուած ենք ամէն բանէ աւելի ու առաջ սերը մեր կեանքին մէջ գործնապէս թարգմանելու: Փաստօրէն, ներկայիս կը բացակայի սերը մեր կեանքէն. ուստի, կոչուած ենք հայ կեանքին մէջ ամէն տեղ զիրար սիրելու եւ մեր կեանքէն հեռու պահելու ամէն տեսակ երեւոյթ, արարք, յարաբերութիւն եւ կեցուածք, որ ասելուօրին եւ թշնամանք կը սերմանէ»:* Ան խրախուսեց մեր ժողովուրդի գաւակները, ըսելով, որ «Այսօր անգամ մը եւս Քրիստոս կը պատգամէ մեզի.– սիրեցէ՛ք զիրար: Եթէ մենք չսիրենք զիրար ներկայ փոքորկալից աշխարհին մէջ, մեր հայրենիքին, Արցախին, Սփիւռքին, մեր ողջ ազգին կեանքը պիտի լեցուի ահաւոր փոքորիկներով, մեր կեանքի ցամաքն պիտի լեցուի խաւարով եւ ահաւոր անորոշութիւններով»:

*Իր պատգամի աւարտին, Վեհափառ Հայրապետը հրաւիրեց հաւատացեալները լսելու Քրիստոսի պատգամը, ինչպէս լսեցին մեր հայրերը եւ ամէն անգամ, որ մեր հայրերը, պատմութեան ընթացքին, լսեցին Քրիստոսի պատգամը, սիրով պայծառացաւ Հայաստանի երկինքը, երկնային շնորհներով եւ պարգեւներով լեցուեցաւ մեր կեանքը. իսկ ամէն անգամ, որ հեռու մնացինք Աստուծոյ մեզի տուած սիրոյ պատուիրանէն՝ մեր կեանքը լեցուեցաւ ահաւոր փոթորիկներով:*

*Նշենք, որ նոյն օրը երեկոյեան, նախագահութեամբ Արամ Ա. Կաթողիկոսին, տեղի ունեցաւ Խաւարման Գիշերի արարողութիւնը:*

#### ԿԱՐԳ ԹԱՂՄԱՆ

*Աւագ Ուրբաթ, 15 Ապրիլի երեկոյեան, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եւ մասնակցութեամբ բազմաթիւ ուխտաւորներու, Անթիլիասի Մայրավանքի Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ յուզումնախառն շարականներով, մեղեդիներով եւ աղօթքներով շաղախուած Թաղման Կարգի արարողութիւնը:*

*Արարողութեան ընթացքին, Վեհափառ Հայրապետը փոխանցելով օրուան պատգամը, վերջիչեցուց հաւատացեալներուն Աւագ Ուրբաթ օրուան խորհուրդը: Վկայակոչելով Պետրոս առաքեալի ընդհանրական առաջին թուղթին մէջ նորադարձ քրիստոնէաներու ուղղած խօսքը, ուր կ'ըսէ անոնց, որ Աստուծոյ Որդին մեղաւորներու համար չարչարուեցաւ եւ խաչուեցաւ, որպէսզի մեզ Աստուծոյ մօտեցնէ, ան ըսաւ, որ «Առաքեալի խօսքին մէջ խտացած է ո՛չ միայն Քրիստոսի չարչարանքին ու թաղման իմաստը, այլ նաեւ՝ Աստուծոյ Որդւոյն մարդեղացման խորհուրդը: Աստուծոյ Որդին աշխարհ*



եկած էր նպատակի մը համար: Պատահական չէր Անոր էջֆը երկինքէն երկիր: Ան եկած էր աշխարհ, որպէսզի մեղքին մէջ իրուած, Աստուծմէ հեռացած մարդը մօտեցնէ Աստուծոյ եւ մարդուն ցոյց տայ փրկութեան ցանապարհը: Աստուած մարդը իր պատկերին համաձայն ստեղծած եւ անոր բանականութիւն տուած էր, որպէսզի ան այս աշխարհին վրայ շարունակէ իր գործը՝ առաւել հարստացնելով զայն, այնուամենայնիւ հսկայ պատասխանատուութեան կոչուած մարդը մերժեց Աստուծոյ կողմէ իրեն տրուած երկնային շնորհքը եւ իր կեանքը դարձուց մարդակեդրոն: Աստուած սիրեց մարդը ու բնաւ չհեռացաւ անկէ, այլ միշտ փորձեց մարդուն մօտենալ, ուստի իր Որդին դրկեց, որպէսզի մարդը վերադարձնէ Աստուծոյ. Առաքելին բառերով՝ հաշտեցնէ Աստուծոյ հետ: Քրիստոս իր արիւնը թափեց, որպէսզի մարդը մօտեցնէ, հաշտեցնէ Աստուծոյ հետ. ահաւասիկ Քրիստոսի առաքելութեան նպատակը: Մարդկային պատմութեան մէջ մեծ իրագործումները կը կատարուին հաւատով, նուիրումով, պայքարով, խաչով, նոյնիսկ՝ արիւնով ու նահատակութեամբ»:

*Իր պատգամին մէջ, Նորին Սրբութիւնը երկու կարեւոր շեշտադրումներ կատարելով յորդորեց հաւատացեալները թաղելու իրենց մեղքերը եւ ապա՝ վերադառնալու Աստուծոյ: «Քրիստոս իր արիւնով եւ խաչով մեր առջեւ բացաւ փրկութեան տանող ցամաք եւ այդ ցամաքէն մենք կոչուած ենք ֆալելու: Փրկութեան տանող ցամաքն դիւրին եւ ծաղկաւետ ցամաքայ չէ, իսկ մենք՝ անկատարներս, մեղանչական բնութիւն ունինք եւ պետք է գիտակցինք, թէ մեղքեր կը գործենք, եւ այսօր, Քրիստոսի թաղման օրը, առիթ է բոլորիս համար, մեր մեղքերը Քրիստոսի գերեզմանին մէջ թաղելու», եզրափակեց ան:*

Արարողութեան աւարտին, Վեհափառ Հայրապետը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դարաւոր գանձերուն մաս կազմող եւ Քրիստոսի Խաչափայտի մասունքը կրող գեղարդածեւ խաչով օրհնեց հաւատացեալ ժողովուրդը, որմէ ետք հաւատացեալներ խոնարհեցան Քրիստոսի գերեզմանին առջեւ եւ զայն զարդարող ծաղիկներէն առնելով տարին իրենց տունները՝ իբրեւ օրհնութիւն:

**Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՃՐԱԳԱԼՈՅՑԻ ՊԱՏԱՐԱԳ**

Աւագ Շաբաթ, 16 Ապրիլի երեկոյեան, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ մատուցուեցաւ մեր Տիրոջ եւ Փրկչին Յիսուս Քրիստոսի հրաշափառ Յարութեան Ճրագալոյցի Ս. եւ Անմահ Պատարագը: Ս. Պատարագը մատուցեց եւ յաւուր պատշաճի քարոզեց՝ Կաթողիկոսարանի «Կիլիկիա» մատենադարանի տեսուչ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան:



Սրբազան հօր քարոզին առանցքը կազմեց Ղուկասու Աւետարանի 24-րդ գլխուն մէջ յիշուած Եմմաուսի ճամբորդներուն դրուագը, ուր մեր Տէրը իր հրաշափառ յարութենէն ետք կ'երեւի իր աշակերտներէն երկուքին եւ վերնատան մէջ տեղի ունեցած վերջին ընթրիքին պատկերով՝ անոնց հետ ընթրիքի կը նստի: Վերնատան վերջին ընթրիքէն ետք մեր Տէրը մատուցեցաւ, հալածուեցաւ, չարշարուեցաւ, խաչուեցաւ, իր արիւնը թափեց եւ գերեզմանուեցաւ մեզի համար, սակայն երրորդ օրը յարութիւն առաւ. սա իր յա-



րութենէն ետք առաջին ընթրիքն էր որ կատարեց Եմմաուսի ճամբորդներուն հետ: Ուստի, այսօր, Ճրագալոյցի Ս. Պատարագով, մենք եւս յարուցեալ Քրիստոսի սեղանակիցները դարձանք:

Ս. Պատարագի աւարտին, Մայրավանքի Մայր Տաճարին լուսարարապետ՝ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան բարձրանալով Ս. Խորան, վար բերաւ Քրիստոսի Յարութեան լոյսը խորհրդանշող մոմը եւ յանձնեց Վեհափառ Հայրապետին: Ապա, Նորին Ս. Օծութեան գլխաւորութեամբ, միաբան հայրերն ու հաւատացեալներու հոծ բազմութիւնը միաբերան երգեցին «Այսօր յարեաւ ի մեռելոց» յարութեան հոգեթով շարականը: Շարականի երգեցողութենէն ետք, Հայրապետական թափօրը ուղղուեցաւ Վեհարանի դահլիճ, ուր կատարուեցաւ Զատիկական Տնօրհնէքի արարողութիւն:

**Ս. ԶԱՏԻԿ**

Կիրակի, 17 Ապրիլի առաւօտուն, հաւատացեալներու հոծ բազմութիւն մը հաւաքուած էր Անթիլիասի Մայրավանք, մասնակցելու Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ Հայրապետական Ս. Պատարագի մատուցման եւ ունկնդրելու Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին պատգամը: Որպէս առընթերակայ, Ս. Խորանին վրայ Նորին Սրբութեան կողքին ներկայ էին՝ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեանն ու Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեանը:





*Ս. Ե. Անմահ Պատարագի ընթացքին Վեհափառ Հայրապետը հաւատացեալ ժողովուրդին փոխանցեց հետեւեալ պատգամը:*

**ՅԱՐՈՒՅԵԱԼ ՔՐԻՍՏՈՍԸ ԱՊՐԻՆ՝  
ՈՐՊԵՍ ԿԵԱՆՔԻ ՈՒՂԵՑՈՅՑ**

Քրիստոսի հետ ապրած, անոր երկրաւոր կեանքի բոլոր դրուագներուն հաղորդակից դարձած, անոր ուսուցումները լսած ու հրաշքներուն ականատես եղած աշակերտներուն համար խորապէս ցնցիչ դէպք մըն էր Քրիստոսի յարութիւնը: Անոնք տակաւին չէին կրցած լիովին ըմբռնել յարութեան խորհուրդը: Յարութեան դէպքէն որոշ ժամանակ ետք միայն, առաքելները սկսան հասկնալ ու Քրիստոսի հետեւորդներուն բացատրել յարութեան դէպքին իւրայատուկ նշանակութիւնը՝ յատկապէս շեշտելով անոր առանցքային կարեւորութիւնը քրիստոնէայ մարդու կեանքին մէջ եւ կոչ ուղղելով ապրելու յարութեան խորհուրդն ու իմաստը:

Քրիստոսի յարութեան խորհուրդով օծուն այս օրերուն, անհրաժեշտ է հետեւեալ կարեւոր յիշեցումները կատարել. -

- **Քրիստոսի յարութիւնը՝ հիմքն է մեր հաւատքին:** Պօղոս առաքելաւ շեշտակիօրէն կը հաստատէ եւ կը յիշեցնէ նորադարձ քրիստոնէաներուն,

թե՛ եթե Քրիստոս յարութիւն առած չըլլար մեր հաւատքը պիտի կորսնցներ իր հիմքն ու իմաստը (Կր 15.13): Յարութիւնն էր որ Աստուծոյ Որդւոյն ուսուցումներուն ու հրաշքներուն եւ ընդհանրապէս անոր երկրաւոր առաքելութեան իմաստն ու նպատակը պարզեց: Արդ, առանց յարութեան կարելի չէ հասկնալ Քրիստոսի մարդեղութիւնը եւ մարդու փրկութիւնը, որուն համար աշխարհ եկած էր Աստուծոյ Որդին:

- **Քրիստոսի յարութիւնը՝ յաղթանակն է կեանքին:** Կեանքը, Աստուծոյ պարգեւը մարդուն, ապականած էր Ադամի մեղքով եւ անոր յաջորդող սերունդներուն մարդակեդրոն կենցաղակերպով: Աստուծոյ Որդին աշխարհ եկած էր այլափոխելու մեղքով ու ապականութեամբ շաղախուած մարդու կեանքը, եւ զինք օժտելու նոր կեանքով: Իր խաչով ու յարութեամբ Քրիստոս յաղթեց մահուան եւ մարդուն պարգեւեց աստուածատուր կեանքը վերըստին ապրելու շնորհքը: Քրիստոսի յարութեամբ, մարդը զինուեցաւ մահէն դէպի կեանք ընթանալու հաւատքի ու յոյսի զօրութեամբ: Առաքեալը կը վկայէ թէ Աստուած, մարդը «Վերստին կեանքի կոչեց Քրիստոսով» (Եփ 2.5): Նոյն առաքեալը նաեւ կը հաստատէ, թէ իրեն համար կեանքը Քրիստոսն է:

- **Քրիստոսի յարութիւնը՝ հրաւեր է Աստուծոյ հետ հաշտութեան:** Աստուած առաջին մարդը իրեն գործակից նշանակած էր, զինք օժտելով բանականութեամբ ու կամքի ազատութեամբ, եւ անոր տալով տիեզերքը կառավարելու եւ առաւել հարստացնելու պարտականութիւնը: Սակայն, մարդը հաւատարիմ չէր գտնուած իր կոչումին եւ հեռացած Աստուծմէ: Աստուծոյ Որդին իր մարդեղութեամբ ու առաքելութեամբ մարդը մօտեցուց Աստուծոյ եւ հայր եւ որդիի փոխյարաբերութեան ուխտը կնքեց Աստուծոյ եւ մարդուն միջեւ. առաքեալին բառերով՝ «Աստուած իր Որդիին մահով մեզ իր հետ հաշտեցուց» (Հն 5.10): Առաքեալը ապա կոչ կ'ուղղէ ըսելով՝ «Հաշտուեցէ՛ք Աստուծոյ հետ, որովհետեւ Աստուած մեզի համար մեղքի պատարագ ըրաւ Քրիստոսը» (Բ.Կր 5.20-21):

- **Քրիստոսի յարութիւնը՝ ճանապարհ է փրկութեան:** Քրիստոսի առաքելութեան նպատակը անկեալ մարդուն փրկութիւնն էր, անառակացած մարդուն վերադարձը իր երկնաւոր Հօր, մահացած մարդուն նոր կեանք պարգեւել էր: Խաչի զօրութեամբ ու յարութեան յաղթանակով Քրիստոս մարդուն առջեւ բացաւ փրկութեան ճանապարհը: Պօղոս Առաքեալ իր կեանքի փորձառութեամբ կը վկայէ թե՛ «Պիտի փրկուիմք Քրիստոսի կեանքով» (Հն 5.10):

Արդ, քրիստոնէայ մարդը կոչուած է ոչ միայն Քրիստոսը դաւանելու որպէս միակ Փրկիչը աշխարհին, այլ՝ մարդուն համար խաչով յարութիւն կերտած յարուցեալ Քրիստոսը ապրելու: Առաքեալը կը հաստատէ՝ «Ինձի

համար կեանքը Քրիստոս է» (Փլմ 1.21) եւ կ'աւելցնէ՝ «Ես չէ որ կ'ապրիմ, այլ՝ Քրիստոս է որ կ'ապրի իմ մէջս» (Գղ 2.20):

Ի՞նչ կը նշանակէ Քրիստոսը ապրի՛լ՝ որպէս կեանքի ուղեցոյց ու նպատակ:

Քրիստոսը ապրի՛լ՝ հաւատարիմ ըլլալով Աստուածաշունչին, անոր ուսուցումներուն ու արժէքներուն:

Քրիստոսը ապրի՛լ՝ մեր մտածումներուն ու գործերուն առանցքը դարձնելով:

Քրիստոսը ապրի՛լ՝ օգնելով կարիքաւորին ու գրկեալին եւ ծառայելով ուրիշին:

Քրիստոսը ապրի՛լ՝ որպէս «Ճանապարհ, նշմարտութիւն եւ կեանք», ինչպէս Քրիստոս բնութագրեց ինքզինք (Յհ 14.6):

Ա՛յս է քրիստոնէայ ըլլալու նշմարիտ կերպը, նի՛շդ նամբան:

Կ'ապրինք չարով ու չարիքներով լեցուն աշխարհի մը մէջ: Շրջապատուած ենք մարդու կեանքէն Աստուծոյ ներկայութիւնը հեռացնող տեսանելի եւ անտեսանելի երեւոյթներով: Բազմաթիւ դժուարութիւններով տիրապետուած է մեր կեանքը: Զմոռնանք առաքեալին յիշեցումը, թէ՛ Քրիստոս «Իր անձը տուաւ մեր մեղքերուն համար, որպէսզի Աստուծոյ՝ մեր Հօրը կամքով մեզ ազատէ ներկայ չար աշխարհէն» (Գղ 1.4): Արդ, ներկայ ժամանակներու դառն պայմաններուն դիմաց, պէտք է գիտութեամբ Քրիստոսի յարութեան հաւատով ու յոյսով: Ներկայ փոթորկայոյց աշխարհին մէջ Քրիստոսը պէտք է ապրինք, որպէս մեր կեանքին միակ ուղեցոյցը ու ապաւէնը:

Ա՛յս է Քրիստոսի թափուր գերեզմանէն հնչող պատգամը:

\*

\* \*

Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Յարութեան տօնին առիթով, եղբայրական ջերմ սիրով կ'ողջունենք Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, մաղթելով եկեղեցաշէն իրագործումներով երկար գահակալութիւն: Կ'ողջունենք նաեւ Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեանը եւ Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Սահակ Արք. Մաշալեանը, իրենց մաղթելով բեղմնաւոր ծառայութիւն հայ եկեղեցւոյ անդաստանէն ներս:

Հայրապետական օրհնութեամբ ու հայրական սիրով կ'ողջունենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Թեմակալ Առաջնորդները, Հոգեւոր Դասը, Ազգային Իշխանութիւնները, մեր ժողովուրդի կեանքին մէջ գործող

կազմակերպութիւններն ու միութիւնները եւ մեր հաւատացեալ ժողովուրդը: Կ'աղօթեմք առ Աստուած, որ Իր երկնային հովանիին ներքեւ պահէ ու պահպանէ Հայաստանն ու Արցախը եւ մեր ազգին սիրելի զաւակները, որ պէսզի կարենանք, Յարուցեալ Փրկչին յաղթանակով հզօրացած, վերանորոգել մեր կեանքը եւ դիմագրաւել ներկայ ժամանակներու բազմազան մարտահրաւերները:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց. օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի:

*Յայտնենք, որ Ս. ԵԼ ԱՆՄԱՀ Պատարագին ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան դեսպանը, Սեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամներ, դեսպանատան անձնակազմը, կուսակցութեանց, կազմակերպութեանց, կառույցներու ու մարմիններու ներկայացուցիչներ եւ ազգային ու քաղաքական բարձրաստիճան պատասխանատուներ. իսկ Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց Կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախումբը:*

*Յիշենք, որ Ս. ԵԼ ԱՆՄԱՀ Պատարագի աւարտին, Վեհարանի դահլիճին մէջ, Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց մեր ժողովուրդի զաւակներուն եւ ազգային ու քաղաքական բարձրաստիճան պատասխանատուներու Ս. Զատիկուան տօնին շնորհաւորանքները:*



### ԵՒ ԲԱՅՈՒԵՅԱՆ ԴՈՆԵՐՆ ՅՈՒՍՈՅ

Աշխարհի մէջ տեղի ունեցած անբնական ընթացքը մեզ հեռացուցած էր ամէն տեսակ արժէքներէ: Պսակաձեւ ժահրը ստիպած ու պարտադրած էր անձերու միջեւ հեռաւորութիւնը, կեանքի արժէքներէ անջատուիլը, եկեղեցւոյ արարողութիւններուն հեռուէն հետեւիլը եւ ամէն ինչի կարօտ մնացած էինք:

Այս տարի տարբեր էր, այս տարի վերապրեցանք մեր հին օրերը, երբ տեսանք եկեղեցական արարողութիւններու ընթացքին ժողովուրդով շրջապատուած ենք. երբ տեսանք մեր երգեցողութիւններն ու պատգամները միայն լուսանկարիչի գործիքին առջեւ չէ՛, այլ՝ մարդոց, ժողովուրդին ու եկեղեցւոյ: Ժողովուրդը կարօտցած էր եկեղեցւոյ արարողութիւններուն հետեւիլ եկեղեցւոյ մէջ, իսկ հոգեւորականաց դասը՝ արարողութիւնները կատարել ժողովուրդին հետ:

Անթիլիասի Մայրավանքը ստացաւ իր նո՛յն հմայքը, երբ Անթիլիասի Ուխտի Օրը դարձեալ ձեռքերու մէջ թաշկինակները կը քսուէին մեր հաւատքի հօր Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի Աջին՝ Վեհափառ Հայրապետին եւ միաբանութեան մաղթելով երկար կեանք եւ առաքելութեան մէջ հաստատակամութիւն, երբ Ծաղկազարդին մանուկները դարձեալ իրենց սպասած վայրկեանները ապրեցան, մօտենալով Նորին Սրբութեան առնելու օրհնութիւնը Հայրապետին եւ վերջապէս՝ Ս. Յարութեան տօնին, երբ Հայրապետական պատգամի ընթացքին դարձեալ ժողովուրդին ուշադրութիւնն ու աչքերը կը յարէին Ս. Խորան լսելու համար, թէ Հայրապետը ի՛նչ պիտի ըսէ իր հօտին: Ազդեցիկ էր պահը այնքան, որ փշաքաղուեցան մեր մարմինները, երբ ժողովուրդը սկսաւ «Երբ որ բացուին...»ը երգել, եւ իսկապէս բացուեցան յոյսի դռները:

Սուրբ Խորանէն կը հնչէր զօրեղ ձայնը Հայրապետին, երբ ժողովուրդին աչքերուն նայելով, կ'ըսէր. «Սիրելի՛ լիբանանի հայութիւն, մեր Եկեղեցին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ձեզի հետ է, որովհետեւ մենք եւ դուք չկա՛յ: Մենք հաւաքական մե՛նք ենք. եկեղեցին ժողովո՛ւրդն է, մենք բոլորս ենք միասնաբար՝ ազգը, համայնքն ու եկեղեցին եւ պիտի շարունակենք միշտ ձեր կողմին ըլլալ, ձեզի հետ՝ ըլլալ ամէն իմաստով»: Տաղնապահար եւ մտահոգուած հօտը պէտք ունէր լսելու, որ ինք առանձին չէ՛ եւ իր կողքին ունի Կաթողիկոսութիւն մը ամբողջ:

Սուրբ Յարութեան տօնը յաղթանակի օր է, ինչպէս պատգամին սկիզբը

ըսաւ Հայրապետը: Ասիկա յիշեցում մըն է, թէ հօտ եւ հովիւ միասնաբար Յարուցեալով կը յաղթեն, եւ պիտի յաղթենք ամէնէն դժուարին օրերուն, պիտի յաղթենք տազնապներուն, պիտի յաղթենք անարդարութեան, պիտի յաղթենք մի'շտ Քրիստոսով, որովհետեւ ամէն ինչ կրնանք տանիլ շնորհիւ Քրիստոսի, որ մեզ զօրացուց (հմմտ Փլպ 4.13):

Մենք չենք տկարանար եւ ոչ ալ պատմութեան փոշիներուն տակ կ'անցնինք, եթէ սիրենք, նուիրուինք ու կառչած մնանք մեր հայրենիքին՝ Հայաստանին ու Արցախին: Անոնք մե'րն են եւ կոչուած են միայն մե'րը մնալու: Չկայ աշխարհի վրայ անձ մը, որ կը վաճառէ իր մայրը կամ հայրը, նմանապէս անվաճառելի է հայրենիքն ու մայրենիքը, անոնք վե'ր են ամէն բանէ, անոնք վե'ր են ամէն տեսակ նիւթական արժէքներէ, անոնք վե'ր են ամէն տեսակ ոյժերէ ու շահերէ եւ անոնք վե'ր են ամէն տեսակ համաձայնութիւններէ ու համաձայնագրութիւններէ: Վեհափառ Հայրապետը շեշտելով ուղղեց իր խօսքը Հայրական, ըսելով՝ «Անկախութիւնը եւ արդարութիւնը աստուածատուր արժէքներ եւ իրաւունքներ են: Արցախի ժողովուրդը հաւաքաբար հաստատած եւ ամրապնդած է իր անկախութիւնը այն հողին վրայ, ուր դարեր շարունակ ապրած ու ստեղծագործած է. հետեւաբար, ժողովուրդի մը անկախութիւնը չի' կրնար սակարկութեան սեղանի նիւթ դառնալ»: Մակայն, դժբախտաբար «Բերան ունին՝ բայց չեն խօսիր, աչքեր ունին՝ բայց չեն տեսներ, ականջ ունին՝ բայց չեն լսեր» (Մղ 115.5-6): Անոնց աչքերուն համար կ'ըսենք. «Եփփաթա՛» (Մր 7.34):

Անթիլիասը վերածաղկազարդուեցաւ իր ժողովուրդով, պատգամեց իր ժողովուրդին եւ բոլորս միասնաբար վերապրեցանք մեր աւանդական ու սրբազան արժէքներն ու պահերը՝ մեր սրբազան արարողութեանց ու տօներուն ընդմէջէն: Բոլորս աղօթող ենք, որ «Յոյսի դռները» միշտ բա'ց մնան մեր բոլորին առջեւ:

*Անթիլիասը վերահարստացաւ իր ժողովուրդով:*

*Անթիլիասը վերականգնացաւ իր հաւատացեալներով:*

*Անթիլիասը վերաշնչեց իր զաւակներով:*

Ա.Ի.ԵՏԻՔ Ա.ԲՂ. ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 107-ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ  
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ**

*Կիրակի, 24 Ապրիլի առաւօտուն, Հայոց Յեղասպանութեան 107-ամեակին առիթով, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եւ ներկայութեամբ Պոլրճ Համուտէն քայլարշաւով Մայրավանք հաւաքուած մեր ժողովուրդի բազմահազար զաւակներուն, մատուցուեցաւ Ս. եւ Անմահ Պատարագ: Ս. եւ Անմահ Պատարագը մատուցեց Լիբանանի Հայոց թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեանը: Աւարտին, Կաթողիկոսարանի շրջափակէն ներս Սրբոց Նահատակաց մատրան առջեւ Նորին Սրբութիւնը փոխանցեց իր Հայրապետական պատգամը: (Տես փոխան խմբագրականի, էջ 139):*





### «ՇՆՈՐՀԱԼԻ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԵՐԳՈՎ ՎԵՐԱՆՈՐՈԳԵՑ ՄԵՐ ՊԱՅԱՆՁԱՏԻՐԱԿԱՆ ԵՐԹԸ

Կիրակի, 24 Ապրիլի երեկոյեան, օրհնութեամբ Ս. Աթոռոյս զահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, մասնակցութեամբ միաբան հայրերու, դպրեվանեցիներու, Ազգային Կեդրոնական Վարչութեան, ազգային ու քաղաքական կառոյցներու ներկայացուցիչներու եւ հայրենասէր ու ազգասէր հայորդիներու, «Լիֆաա» հանդիսասրահին մէջ տեղի ունեցաւ Կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախումբին ազգային երգերու համերգը՝ ձօնուած Հայոց Յեղասպանութեան 107-ամեակին, խմբավարութեամբ միաբանութեան երիտասարդ անդամներէն՝ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեանի:



Համերգը սկիզբ առաւ Լիբանանի, Հայաստանի ու Արցախի քայլերգներով, ճոխացաւ ու խանդավառուեցաւ ազգայնաշունչ ու ժողովրդային երգերով եւ իր զազաթնակէտին հասաւ ամբողջ հայ ազգը ի մի համախմբուելու եւ ազգային մարտահրաւէրները քաջութեամբ ու արիութեամբ դիմագրաւելու կոչող «Հայե՛ր, միացե՛՛ք» ազգայնաշունչ ու մարտական երգով:

«Հիանալի, սքանչելի եւ կարելի է այլ ածականներ եւս շարել՝ բնորոշելու, բնութագրելու ու նկարագրելու համար այս գեղեցիկ համերգը» բա-

ներով սկսաւ Վեհափառ Հայրապետը իր եզրափակիչ հայրական խօսքը: Խօսելով մեր ազգային երգերու արժէքներուն մասին եւ պահանջատիրական պայքարին մէջ անոնց ունեցած ազդեցութիւնը մեր ժողովուրդի զաւակներու ապրումներուն վրայ, ան ըսաւ, որ «Ցեղասպանութենէն ետք տարիներ ու տասնամեակներ շարունակ մեր սերունդները այս երգերը երգեցին ու այս երգերով ներշնչուեցան ու կազմաւորուեցան՝ ազատ ու անկախ եւ ամբողջական հայութեամբ ամբողջական Հայաստանի երազը ունենալով մեր կեանքին առջեւ»:

Ապա, Նորին Սրբութիւնը իր խօսքը ուղղելով խմբավար Հայր Սուրբին եւ երգչախումբի ու նուագախումբի անդամներուն, բարձր գնահատեց անոնց կատարումը, նուիրուածութիւնը եւ զոհողութիւնը, նկատի առնելով Լիբանանի ներկայ ընկերային-տնտեսական տագնապները: Անդրադառնալով անդամներուն կատարողութեան, Նորին Ս. Օծութիւնը գնահատեց անոնց այնքա՛ն ներշնչումով, նոյնիսկ տագնապով երգելու եւ նուագելու ապրումները: Վեհափառ Հայրապետը իր խօսքը եզրափակեց ընդգծելով, որ այսօր Ապրիլ 24 է. ան մէկ պատգամ ունի մեզի փոխանցելիք՝ «միացե՛ք, հայեր»: ուստի, ան հրաւիրեց բոլոր ներկաները, մեր պահանջատիրական ոգին արտայայտող ու պայքարի կամքը հզօրացնող «հայե՛ր, միացե՛ք» ազգայնաշունչ երգը միահունչ եւ միաբերան երգելու:



**ԴՊՐԵՎԱՆՔ**

**ՀՈԳԵԻՈՐ ՈՒ ՄՇԱԿՈՒԹ-ԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ  
ԴՊՐԵՎԱՆՔԷՆ ՆԵՐՍ**

**ԱՄԵՐԻԿԱԶ ԱՅ ԲԺԻՇԿՆԵՐՈՒ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ**

*Չորեքշաբթի, 9 Մարտի երեկոյեան, Ֆրեզնոյէն յատուկ առաքելութեամբ Լիբանան ժամանած հայ բժիշկներու պատուիրակութիւնը այցելեց Դպրեվանք եւ բժշկական քընտրութիւններու կողքին, ծանօթացաւ Դպրեվանքի առօրեային: Այս ուրախ առիթով, բժիշկները եղան նաեւ դպրեվանեցիներուն ճաշի հիւրը:*



*Պատուոյ ընթրիքի ընթացքին, Տեսուչ Հոգւ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեանը խօսք առնելով նշեց, որ դպրեվանեցիներուն հետ ճաշի սեղան նստիլ կը նշանակէ Դպրեվանքի ընտանիքին մաս կազմել. ապա, ան գնահատեց պատուիրակութեան նըւիրական ծառայութիւնը:*

*Խօսք առաւ նաեւ Ֆրեզնոյի մէջ Հայաստանի պատուոյ հիւպատոս Պերճ Սրկ. Աբգարեանը, որ իր քաջալերական խօսքերով մաղթեց, որ դպրեվանեցիները իրենց առաքելութեամբ հայ գաղութները նոր կեանքով աշխուժացընեն: Աւարտին, Տեսուչը յուշանուէր մը եւ Վեհափառ Հայրապետին կողմէ գիրքեր նուիրեց անոնց:*

**ՊՈԼՍԱԶԱՅ ԵՐԳՉՈՒՀԻ ՍԻՊԻԼ ԴՊՐԵՎԱՆՔԻՆ ՄԷՋ**

*Երկուշաբթի, 14 Մարտի առաւօտուն, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանք այցելեց պոլսահայ երգչուհի Սիպիլը, ընկերակցութեամբ Համազգայինի շրջանային վարչութեան եւ «Քնար» պարախումբի վարչութեան անդամներու ու պարուսոյցներու:*



*Սիպիլ Դպրեվանեցիներուն ներկայացուց հայկական փունջ մը երգեր, որուն ավարտին խօսք առնելով Հոգչ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան, իր գնահատանքը յայտնեց Սիպիլին եւ շեշտեց, որ «Իւրաքանչիւրիս պարտաւորութիւնն է պահպանել հայկական մշակոյթը, եւ մենք այս առաքելութեան մէջ կը նոյնանանք»:*

*Գեղարուեստական յայտագիրէն ետք, Սիպիլ մտերմիկ հանդիպում մը ունեցաւ Գ. եւ Դ. Ընծայարանի սարկաւազներուն հետ, որմէ ետք հիւրերը միացան կէսօրուան ճաշին եւ սիրոյ սեղանը ձոխացուցին հայկական աշուղային եւ ազգային երգերով:*

**ԱՐՑԱԽԷՆ ԺԱՄԱՆԱԾ ՏԱՂԱՆԴԱԻՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ  
ԱՅՑԵԼ ԵՑԻՆ ԴՊՐԵՎԱՆՔ**

*Զորեքշաբթի, 6 Ապրիլին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանք այցելեցին Արցախէն ժամանած տաղանդաւոր պատանիները՝ ընկերակցութեամբ Արցախի կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարարի ներկայացուցիչին եւ «ԶԱՀ» յանձնախումբի անդամներուն:*

*Պատանիները մասնակցեցան Խաղաղական ժամերգութեան եւ շրջափակեցան Ս. Աստուածածին Վանքէն ներս, որմէ ետք «Բրաբրոն Տումանեան» սրահին մէջ գեղարուեստական յայտագիրով մը հանդէս եկան:*

*Յանուն Դպրեվանեցիներուն եւ ուսուցչակազմին, հիւրերուն բարի գա-*

լուստի խօսք արտասանեց Ընծայարանի սաներէն՝ Հրակ Թաշճեան եւ ընդ-  
գծեց Արցախի կարեւորութիւնը հայ կեանքէն եւ յատկապէս Դպրեվանքի  
կեանքէն ներս: Իսկ Արցախի պատանիներուն եւ անոնց հրամցնելիք գե-  
ղարուեստական կտորները ներկայացուց՝ «ԶԱՀ»ի անդամներէն Պրն. Զաքար  
Քէչիշեան: Արցախի պատանիները ապրումով փունջ մը հայրենաշունչ եւ  
ազգային երգեր ու ասմունքներ հրամցուցին ներկաներուն:



Աւարտին, Դպրեվանքի տեսուչ Հոգչ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան խօսք  
առնելով գնահատեց պատանիները, ըսելով, թէ «Այսօր ձեր ներկայութեամբ,  
Արցախը կենդանացաւ եւ մարմնաւորուեցաւ մեր մէջ, որովհետեւ ձեր դէմ-  
քերուն վրայ տեսանք մեր հողը, օդն ու ջուրը, ինչպէս նաեւ՝ մեր նահատակ-  
ներուն սուրբ զոհողութիւնը»: Աւարտին, տեսուչ հայր սուրբը յուշանուէր  
մը յանձնեց նախարարի ներկայացուցիչին՝ անմահացնելու համար գեղեցիկ  
երեկոն:

Գեղարուեստական յայտագիրէն ետք, Դպրեվանքի մեծ ընտանիքը եւ  
արցախցիները սիրոյ սեղանի շուրջ իրար աւելի մօտէն ծանօթացան եւ միա-  
սին երգեցին հայրենասիրական երգեր:

**ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ**

**ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԻՐԱՆԻ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ  
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ  
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՁԵՌՆԱՐԿԻՆ**

*Երեքշաբթի, 1 Մարտի առաւօտուն, Հովանաւորութեամբ Լիբանանի մշակոյթի նախարար Մոհամմետ Մուրթատայի, կազմակերպութեամբ Լիբանանի մօտ Իրանի Իսլամական Հանրապետութեան դեսպանատան Մշակութային Կեդրոնին եւ համագործակցութեամբ Մշակոյթներու Երկխօսութեան Միջազգային Կեդրոնին, յոյն կաթողիկէ Պատրիարքական կեդրոնատեղիին մէջ տեղի ունեցաւ «Մշակութային Բազմազանութիւն՝ Քաղաքացիութեան եւ Պատկանելիութեան Միջեւ» խորագրով ձեռնարկը: Սոյն ձեռնարկին, տարբեր համայնքներու ներկայացուցիչներու կողքին, յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մասնակցեցաւ՝ Գերպ. Տ. Փառէն Ծ. Վրդ. Վարդանեան, որ ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին խօսքը:*

*Ողջունելէ ետք կազմակերպիչները նման ձեռնարկի մը կայացման համար, Վեհափառ Հայրապետը իր խօսքին մէջ ընդգծած էր համակցութեան*



կարեւորութիւնը՝ նշելով, որ ներկայ ժամանակներու ընկերութիւնը բազմա-  
զանութեամբ կը յատկանշուի եւ ուստի կը պահանջէ երկխօսութիւն՝ փոխա-  
դարձ յարգանքի հիման վրայ: Նորին Սրբութիւնը լուսարձակի տակ առած  
էր Լիբանանի ընկերային դրուածքը, ինչպէս նաեւ Իրանի Իսլամական Հան-  
րապետութիւնը, ուր հայեր իբրեւ տիպար քաղաքացիներ կ'ապրին ու կը  
ստեղծագործեն՝ պահպանելով իրենց մշակոյթն ու կրօնքը: Ասկէ մեկնելով,  
Վեհափառ Հայրապետը շեշտը դրած էր կողմերու միջեւ փոխ-հասկացողու-  
թեան եւ ազգային ինքնութեան պահպանման եւ առողջ երկխօսութեան ան-  
հրաժեշտութեան վրայ:

### ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Ուրբաթ, 11 Մարտին, Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց Միջին  
Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդը (Մ.Ա.Ե.Խ.) ներկայացնող պատուիրա-  
կութիւն մը՝ գլխաւորութեամբ ընդհանուր քարտուղար դոկտ. Միշէլ Ապ-  
սին:



*Պատուիրակույթի ենթախումբի անդամները Մ.Ա.Ե.Խ.-ի աշխատանքներուն եւ յառաջիկայ ծրագիրներուն շուրջ ընդհանուր զեկոյց մը փոխանցեց Վեհափառ Հայրապետին, որմէ ետք զինք հրաւիրեց Եգիպտոսի մէջ տեղի ունենալիք Մ.Ա.Ե.Խ.-ի ընդհանուր համաժողովին ներկայ գտնուելու եւ խօսքը ուղղելու:*

*Վեհափառ Հայրապետը ողջունելէ ետք պատուիրակույթեան անդամները, կարեւորութեամբ շեշտեց Մ.Ա.Ե.Խ.-ի նոր մղում տալու անհրաժեշտութիւնը, ինչպէս նաեւ նոր ծրագիրներ մշակելու ու աշխատանքներ իրագործելու անյետաձգելի հրամայականը՝ յատկապէս շրջանը եւ եկեղեցիները դիմագրաւող ներկայ մարտահրաւէրներուն դիմաց:*

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ  
ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ KAICIID-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ  
ՄԻՋ-ԿՐՕՆԱԿԱՆ ԵՐԿԵՕՍՈՒԹԵԱՆ ՄԵՋ  
ԿՆՈՋ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐՈՒՄ**

*25-29 Մարտին, Ապտալլա Բ. Թագաւորի Միջ-կրօնական եւ Միջ-մշակութային Երկխօսութեան Միջազգային Կեդրոնին (King Abdullah bin Abdulaziz International Centre for Interreligious and Intercultural Dialogue (KAICIID)) կազմակերպութեամբ՝ համագործակցաբար Արաբական Աշխարհին Մէջ Երկ-*





խօսութեան եւ Համագործակցութեան Միջ-Կրօնական Հարթակին (The Inter-religious Platform for Dialogue and Cooperation in the Arab World (IPDC)), Յորդանանի մէջ կայացաւ «Հիա Լիլ Հիոլար – She4Dialogue» կամ «Կինը՝ Երկխօսութեան Համար» ծրագիրին երկրորդ հանգրուանը:

Ծրագիրը կ'ընդգրկէ երեք հանգրուաններու վրայ տարածուող միջ-Կրօնական Երկխօսութեան մէջ կնոջ դերը զարգացնող եւ ամրապնդող վարժողական դասընթացներու շարք մը, որուն աւարտին մասնակիցները իրենց համայնքներուն մէջ պիտի կազմակերպեն կնոջ դերակատարութեան թափ տուող եւ զարգացնող ծրագիրներ: Սոյն ծրագիրին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ս. Աթոռին կողմէ կը մասնակցի Արազ Գոճայեանը:

Այս հանգրուանին հինգ արաբական երկիրներէ (Սէուտական Արաբիա, Իրաք, Եգիպտոս, Սուրիա եւ Լիբանան) եկած շուրջ 20 կիներ հետեւեցան կրօններու երկխօսութեան, խաղաղութեան կերտման, բռնարարքներու դէմ պայքարին, հակամարտութիւններու լուծման եւ քաղաքականութեան մէջ կիներու ազդեցութեան մասին՝ բոլորը դիտուած ֆեմտըրի տեսանկիւնէն:

Յիշեցնենք, որ համաճարակին ստեղծած ծանր պայմաններուն պատճառով, հանդիպումներու շարքին առաջինը կայացած էր Մայիս 2021-ին, առցանց:



**ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ**

**ԱՇՈՏ ԱԲՂ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ՍՏԱՑԱԿՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԳԱԻԱՉԱՆ ԿՐԵԼՈՒԻՇՆԱԿՆՈՒԹԻՒՆ**

Երեքշաբթի, 22 Փետրուարին, բարձր տնօրինութեամբ եւ օրհնութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Ֆրեզլոյի Ս. Երրորդութիւն Մայր եկեղեցւոյ մէջ, Սրբոց Ղեւոնդեանց տօնին նուիրուած Ս. եւ Անմահ Պատարագի ընթացքին, տեղի ունեցաւ Հոգւ. Տ. Աշոտ Աբղ. Խաչատուրեանի Վարդապետական գաւազանի տըւուչութեան արարողութիւնը՝ ձեռամբ Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեանին եւ Խարտաւիլակութեամբ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեանին:

Իր խօսքին մէջ, Առաջնորդ սրբազան հայրը անդրադառնալէ ետք Սըրբոց Ղեւոնդեանց տօնի խորհուրդին, Թեմի Կրօնական Ժողովին ու Ազգային Վարչութեան անունով շնորհաւորեց Արամ Ա. Վեհափառ Հայրապետը, Կիլիկեան Ուխտի Միաբանութիւնը եւ մասնաւորաբար Հայր Աշոտը եւ յոյս յայտնեց, որ վասն անսասանութեան Հայ եկեղեցւոյ, մասնաւորաբար Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ս. Աթոռին եւ պայծառութեան Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմին, հայր սուրբը պիտի շարունակէ իր ամբողջանուէր ծառայութիւնը բերել Ֆրեզլոյի հայ կեանքին:

Յայտնենք, որ Հայր Աշոտ իր վարդապետական ակարտաճառին համար

նիւթ ընտրած էր Չարեհ Ա. Կաթողիկոս Փայասլեանի եւ Թեհրանի Հայոց Թեմին միջեւ կատարուած նամակագրութիւնները եւ այս ծիրէն ներս կատարած էր վերլուծական աշխատանք:

**ՖՐԵՉԼՈՅԷՆ ԼԻՔԱՆԱՆ ԺԱՍԱՆԱԾ ԲԺԻՇԿՆԵՐԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱՆ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՀԵՏ**

Լիբանանահայութեան իրենց անվճար ծառայութիւնը մատուցելու եւ դժուար պայմաններու դէմ յանդիման կանգնած իրենց քոյր-եղբայրներուն բուժման օժանդակելու նպատակով Լիբանան ժամանած Ֆրեզլոյի բժշկական առաքելութեան բժիշկները, զըլխաւորութեամբ Ֆրեզլոյի մէջ Հայաստանի Հանրապետութեան պատուոյ հիւպատոս եւ առաքելութեան խորհուրդի նախագահ՝ Պերճ Աբգարեանի, Կիրակի, 6 Մարտի առաւօտուն, ներկայ գտնուեցան Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ մատուցուած Ս. Պատարագին, ապա այցելեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին:

Նորին Սրբութիւնը ջերմօրէն ողջունեց լիբանանահայութեան բժշկական կարիքներուն օժանդակելու յանձնառութեամբ Լիբանան ժամանած բրժիշկները եւ մեծապէս գնահատեց անոնց անշահախնդիր եւ անանձնական ծառայութիւնը՝ շեշտելով, որ ինչպէս հոգեւորականը, նոյնպէս նաեւ բժիշկը կոչումի գիտակցութեամբ կոչուած է

կատարելու իր առաքելութիւնը: Ապա, Վեհափառ Հայրապետը ընդհանուր գիծերով պարզեց անցնող տարիներուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նախաձեռնութեամբ իրականացուած ընկերային ծառայութեան աշխատանքները՝ թէ՛ Սուրիոյ եւ թէ՛ Լիբանանի մէջ: Այս առիթով, Հայրապետը անգամ մը եւս շեշտեց, որ մեր Ս. Աթոռը եղած է, է ու միշտ պիտի ըլլայ մեր ժողովուրդին հետ ու մեր ժողովուրդին կողքին:

Այս առիթով, խօսք առին տոքթ. Էլի Թաշճեանն ու Պերճ Աբգարեանը, որոնք անդրադարձան յիշեալ նախաձեռնութեան տուն տուող պատճառներուն, առաքելութեան եւ յատկապէս Լիբանանի մէջ իրականացուելիք աշխատանքին: Անոնք, իրենց կարգին, շեշտեցին բժիշկներուն առաքելութեան կարեւորութիւնը՝ յայտնելով, որ այս առաքելութեան իրականացումը ընդառաջում էր Արամ Ա. Վեհափառ Հայրապետին կողմէ հռչակուած «Սփիւռքի Տարի»-ի ուղղուած կոչին:

**ՖՐԵՆՆՈՅԻ ՄԷՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒՅ  
ՀԻՊԱՏՈՍ ՊԵՐՃ ԱԲԳԱՐԵԱՆԸ  
ԱՅՅԵԼԵՑ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Շաբաթ, 12 Մարտին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը իր գրասենեակին մէջ ընդունեց Ամերիկայի Միացեալ Նահանգներու Ֆրեզնօ քաղաքի Հայաստանի պատուոյ հիւպատոս Պերճ Աբգարեանի այցելութիւնը:

Մարտի առաջին շաբաթուան ընթացքին, Պերճ Աբգարեանի նախաձեռնութեամբ ութ անձերէ բաղկացած բժշկական խումբ մը, ծանօթ Ֆրեզնոյի Բժշկական Առաքելութիւն (Fresno Medical Mission) անունով, այցելեց Լիբանան՝ առողջապահական մարզին

մէջ օգտակար ըլլալու լիբանանահայութեան: Անոնք իրենց հետ նաեւ մեծ քանակութեամբ դեղորայք բերած էին:

Բժշկական խումբը այցելեց գանազան կառոյցներ եւ կատարեց բժշկական քննութիւններ Լիբանանի հայ համայնքէն ներս՝ բարեսիրական կազմակերպութիւններու աջակցութեամբ:

Հանդիպման ընթացքին Աբգարեան ընդհանուր գիծերով գեկուցեց Վեհափառ Հայրապետին բժշկական խումբին կատարած աշխատանքներուն եւ յառաջիկայ ծրագիրներուն մասին:

Նորին Սրբութիւնը բարձրօրէն գընահատեց ու իր օրհնութիւնը փոխանցեց Պերճ Աբգարեանին եւ բժշկական խումբին մաս կազմող բժիշկներուն, անոնց կատարած յոյժ կարեւոր առաքելութեան համար:

Յայտնենք, որ անոնք անցնող տարիներուն նոյն առաքելութեամբ մեկնած էին Հայաստան ու Արցախ:

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ  
Հ.Բ.Ը.Մ.-Ի ՆԱԽԱԳԱՀ  
ՊԵՐՃ ՍԵՂՐԱԿԵԱՆԸ**

Հինգշաբթի, 17 Մարտին, Կաթողիկոսարանի Վեհարանին մէջ շուրջ երկու ժամ տեւողութեամբ հանդիպում մը տեղի ունեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (Հ.Բ.Ը.Մ.) նախագահ Պերճ Սեղրակեանի միջեւ:

Հանդիպումը առիթ հանդիսացաւ լայնօրէն քննարկելու Հայաստանը, Արցախը եւ Սփիւռքը յուզող շարք մը հարցեր: Լուսարձակի տակ առնուեցան յատկապէս Սփիւռքի հետ աղերս ունեցող մտահոգութիւններ ու առաջադրութիւններ՝ Վեհափառ Հայրապետին կողմէ հռչակուած «Սփիւռքի Տարի»-ին լոյսին տակ:

**ԼԻՔԱՆԱՆԻ ԹԵՄԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ԽՈՐՀՈՒՐԴՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ  
ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ  
ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՍԸ ԱՅՑԵԼԵՑ  
ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Շաբաթ, 19 Մարտին, Լիբանանի Թեմի Ուսումնական Խորհուրդն ու ազգային վարժարանները ներկայացրևող պատուիրակություն մը այցելեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին:

Այցելութեան նպատակն էր շնորհակալութիւն յայտնել Վեհափառ Հայրապետին ուսուցչաց տօնին առիթով Լիբանանի ու Սուրիոյ բոլոր հայ դպրոցներու ուսուցիչներուն կատարած նիւթական օժանդակութեան համար:

Իր խօսքին մէջ, Նորին Սրբութիւնը իր բարձր գնահատանքը յայտնեց ուսուցիչներուն կատարած աշխատանքին՝ զայն նկատելով առաքելութիւն: Ան ըսաւ, որ «Հայ դպրոցը իր էութեամբ առաքելութիւն է եւ զայն իրագործողը հայ ուսուցիչն է: Եթէ կ'ուզենք հայ դպրոցին առաքելութիւնը առաւել ծաղկեցնել, պէտք է հայ ուսուցիչին նկատմամբ գործնապէս յարգանք ու գնահատանք ցուցաբերենք: Որեւէ ժամանակէ աւելի, հայ ուսուցիչին կողմէ կատարուող առաքելութիւնը կոչումի գիտակցութեամբ հարկ է որ կատարուի, որովհետեւ, յատկապէս Սփիւռքի մէջ, հայապահպանումը հրրամայական անհրաժեշտութիւն է եւ այս ծիրէն ներս հայ ուսուցիչին դերը վճռական է»: Միաժամանակ ան յիշեցուց, որ ընկերային ծառայութիւնը մեր եկեղեցւոյ առաքելութեան էական տարածքներէն մէկն է: Հետեւաբար, մեր կարելիութեան սահմաններէն ներս պիտի շարունակենք զայն կատարել:

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ  
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ՍԳԱՑ ՄԱՅԸ  
ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ  
ԳԱՌՆԻԿ ԵԱԳՈՒՊԵԱՆԻ**

Յանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, միաբանութեան, Ազգային Կեդրոնական Վարչութեան Քաղաքական եւ Կրօնական Ժողովներուն, կը սգանք մահը ազգային բարերար հանգուցեալ Գառնիկ Եագուպեանի:

Արդարեւ, հանգուցեալը ստանձնած էր բարերարութիւնը Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի Վեհարանին եւ եպիսկոպոսաց շէնքին: Այս առիթով Վեհափառ Հայրապետը Կիլիկեան Իշխանի Կարգի շքանշանով (2014) պարգեւատրած էր հանգուցեալը եւ իրեն ուղղած սրբատառ Հայրապետական Կոնդակի մէջ գրած էր հետեւեալը. «Որքան գօտեպնդիչ էր յիշել, որ թէ՛ Անթիլիասի մէջ 1968-ին կառուցուած Վեհարանին եւ թէ՛ Պիքֆայայի մէջ բարձրացած այս նորաշէն Վեհարանին առնչուած են Ձեր ծնողաց եւ Ձեր անունները: Արդարեւ, Տեր եւ Տիկին Գեորգ եւ Արշակունիի Չաթալպաշեանները շուրջ կէս դար առաջ սիրայօժար ստանձնեցին Անթիլիասի Վեհարանին շինութեան ծախսերը՝ ընդառաջելով երջանկայիշատակ Խորէն Ա. Կաթողիկոսի առաջարկին: Եւ ահաւասիկ այսօր դուք եւս, որպէս իրենց դուստրը եւ փեսան, սիրով ընդառաջեցիք Մեր փափաքին եւ Ձեր իշխանական նուիրատուութեամբ Պիքֆայայի Վանքը օժտեցիք այս գեղակերտ Վեհարանով: Յիշեալ բարերարութիւնը, ի շարս Ձեր կատարած այլ բազմաթիւ նուիրատուութիւններուն եւ օժանդակութիւններուն, պերճախօս վկաներն են մեր սուրբ եկեղեցւոյ, ազգին ու հայրենիքին նկատմամբ Ձեր ունեցած ամուր կապուածութեան ու ջերմ սիրոյն: Թող Աստուած բազմապատիկ վարձահատոյց ըլլայ Ձեզի՝ Ձեր բոլոր բարի գոր-

*ծերուն համար»:*

Իմանալով ազգային բարերար Գառնիկ Եազուպեանի մահը, Նորին Սրբութիւնը հետեւեալը հաստատեց. «Գառնիկ Եազուպեան այն հազուագիւտ բարերարներէն մէկն էր, որ առանց խտրութեան ազգին, հայրենիքին ու եկեղեցիին բարձրագոյն աստիճանի նուիրումով ու հաւատքով ծառայեց՝ իր ճակտի քրտինքով ձեռք ձգած վաստակէն բաժին մը հանելով: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն ներս իր փափաքով բարերարութիւնը ստանձնեց երկու կարեւոր կառոյցներու, հետեւելով իր աներօր՝ ազգային բարերար հանգուցեալ Գեորգ Չաթալպաշեանի բարի օրինակին»:

Ս. Էջմիածնի Ս. Հռիփսիմէ վանքին մէջ տեղի ունեցած հանգուցեալի հոգեհանգստեան արարողութեան նախագահեց եւ իր Հայրապետական խօսքը ուղղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետը շեշտեց հանգուցեալին եկեղեցաշէն ու ազգանուէր ոգին եւ իր կատարած բարերարութիւնը եկեղեցւոյ ու ազգին:

Յանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին հոգեհանգիստին եւ յուղարկաւորութեան ներկայ գտնուեցաւ Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեմէզեան: Սրբազանը Վեհափառ Հայրապետին ցաւակցութիւնը փոխանցեց հանգուցեալի այրիին եւ զաւակներուն:

Յայտնենք, որ Արամ Ա. Կաթողիկոսին նախագահութեամբ, Անթիլիասի Մայր Տաճարին մէջ եւս տեղի ունեցաւ հոգեհանգիստ:

#### **ԴՈԿՏ. ԵՐՈՒԱՆԴ ՉՕՐԵԱՆ ԱՅՅԵԼԵՑ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ**

Կիրակի, 20 Մարտին, Armenian Virtual College-ի եւ Synopsia Armenia-ի

հիմնադիր, տեղեկագիտութեան ոլորտի մասնագետ՝ դոկտ. Երուանդ Չօրեան այցելեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին: Հանդիպման ներկայ էր «Սփիւռքի Տարի»ի ծրագիրներու համակարգող յանձնախումբի անդամ՝ Շահան Գանտահարեան:

Դոկտ. Երուանդ Չօրեան Սիլիքոն Վալիյի մէջ իբրեւ գլխաւոր ճարտարապետ կը ղեկավարէ «չիփերու» ձեւաւորման բաժանմունքը: Ան մասնակցած էր «Սփիւռքի Տարի»ի առիթով Վեհափառ Հայրապետին գլխաւորութեամբ տեղի ունեցած առցանց առաջին խորհրդակցութեան:

Դոկտ. Չօրեան ներկայացուց տեղեկագիտական ոլորտի նորարարիւնները, թուային համակարգերու եւ ելեկտրոնային տարածքներու վրայ համախմբումներ ձեւաւորելու նորագոյն եղանակները՝ ընդգծելով նման ծրագիրներ հայկական աշխարհին մէջ իրականացնելու անհրաժեշտութիւնը:

Վեհափառ հայրապետը գնահատեց դոկտ. Չօրեանին կատարած աշխատանքները եւ բերած նպաստը տեղեկագիտութեան առումով հայկական իրականութեան մէջ եւ խօսեցաւ նոր աշխարհակարգին, առցանց տարածականութեան եւ հայկական աշխարհի տարբեր բնագաւառներու մասնագիտական մարդուժը իրար կապակցելու հրամայականին մասին: Շեշտելով երիտասարդութեան դերը եւ անոր աշխոյժ ներկայութիւնը թուային եւ համացանցային տարածքներու վրայ, Նորին Ս. Օծութիւնը արծարծեց այս բոլորի նպատակաւորումը դէպի Սփիւռքի վերակազմակերպում:

Դոկտ. Երուանդ Չօրեան գոհունակութիւն յայտնեց, որ իբրեւ մասնագետ նկատի առնուած է «Սփիւռքի Տարի»ի ծրագրաւորման խորհրդակցութիւններուն եւ պատրաստակամութիւն յայտնեց իր ներդրումը բերելու

տեղեկագիտութեան մարզին մէջ յառաջիկային տեղի ունենալիք քննարկումներուն եւ աշխատանոցներուն:

**ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՈՒ ԸՆԴՈՒՆԵՑ  
ԱՐԳԱՎԱՆ ՄԻԱՑԵԱԼ ԷՄԻՐՈՒԹԵԱՆՑ  
ՄՕՏ ԼԻԲԱՆԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ**

Ուրբաթ, 1 Ապրիլին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց Արաբական Միացեալ Էմիրութեանց (Ա.Մ.Է.) մօտ Լիբանանի դեսպան՝ Ֆուատ Շըհապ Տանտանին այցելութիւնը: Հանդիպման ներկայ էր նաեւ՝ Ա.Մ.Է. եւ Զաթարի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մեսրոպ Եպս. Սարգիսեան:

Հանդիպման ընթացքին յատկապէս քննարկուեցան Ա.Մ.Է. մէջ հաստատուած հայ համայնքին առնչուած հարցեր: Վեհափառ Հայրապետը ողջունեց առաջնորդ սրբազանին եւ դեսպանին միջեւ գոյութիւն ունեցող գործակցութիւնը, ինչպէս նաեւ սրբազան հօր ունեցած կապերը այլ համայնքներու եւ պետական շրջանակներու հետ: Ան նաեւ իր գնահատանքը յայտնեց դեսպան Տանտանին՝ Ա.Մ.Է. հաստատուած մեր ժողովուրդի զաւակներուն նկատմամբ անոր ցուցաբերած նախանձախնդրութեան ու աջակցութեան համար:

**ԱՐՑԱԿԵՆ ԺԱՍՏԱՆԱԾ ՏԱՂԱՆԴԱԻՐ  
ՊԱՏԱՆԻՆԵՐ ԱՅՅԵԼԵՑԻՆ ԱՆԹԻԼԻԱՍ**

Երեքշաբթի, 5 Ապրիլի երեկոյեան, Արցախի կրթութեան, գիտութեան, մըշակոյթի ու մարմնակրթութեան նախարարութեան հովանաւորութեամբ եւ «ԶԱՀ» (Զաւախք, Արցախ, Հայաստան) յանձնախումբին կազմակերպութեամբ, Լիբանան եկան Արցախէն խումբ մը տաղանդաւոր պատանիներ,

որոնք այցելեցին Անթիլիասի Մայրավանք եւ ստացան օրհնութիւնը Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին:

Նորին Սրբութիւնը ջերմօրէն ողջունեց հայրենի հողին եւ ինքնութեան ամուր կառչած քաջարի զաւակները Արցախի եւ ուրախութիւն յայտնեց ի տես թշնամիին հանդէպ անոնց ցուցաբերած դիմադրութեան, որ այս պարագային կ'արտացոլայ անոնց տաղանդին ընդմէջէն: Պատանիները, իրենց կարգին, արտայայտուեցան արուեստի լեզուով եւ հրամցուցին փունջ մը ազգային երգեր ու երաժշտութիւն: Մտերմիկ մթնոլորտի մէջ տեղի ունեցաւ նաեւ զրոյց, որուն աւարտին Նորին Ս. Օծութիւնը յուշանուէրներ յանձնեց փոքրիկ արուեստագետներուն:

Նշենք, որ անցնող շաբթուան ընթացքին պատանիները լիբանանահայ գաղութին ծանօթացման զանազան տեսակցութիւններ ունեցան, որոնց շարքին՝ Դպրեվանք եւ «Թռչնոց Բոյն»:

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆՆ ՈՒ ՄԻԱՑԵԱԼ  
ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄՕՏ ԼԻԲԱՆԱՆԻ  
ՆԱԽԿԻՆ ԴԵՍՊԱՆԸ**

Երեքշաբթի, 5 Ապրիլին, Վեհափառ Հայրապետը ընդունեց Լիբանանի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Վահագն Աթաբէկեանի այցելութիւնը:

Հանդիպումը առիթ հանդիսացաւ արծարծելու հայութիւնը յուզող եւ Հայաստան-Սփիւռք գործակցութեան առնչուած հարցեր: Այս առիթով անդրադարձ կատարուեցաւ նաեւ Վեհափառ Հայրապետին հռչակած «Սփիւռքի Տարի»-ին լոյսին տակ Սփիւռքը վերակազմակերպելու անհրաժեշտութեան՝ երիտասարդներու գործօն մասնակցութեամբ:

Նոյն օրը երեկոյեան, Նորին Ս. Օծութիւնը ընդունեց նաեւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու մօտ Լիբանանի նախկին դեսպան՝ Սիմոն Զարամը:

**ՏԻՐԸԻ ՀԱՍԱՅՆՔԻ ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԸ  
ԱՅՅԵԼԵՑ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Ուրբաթ, 8 Ապրիլին, տիւրզի համայնքի հոգեւոր պետ՝ Շէյխ Սամի Ապու Ալ Մունա, հոգեւորականներէ բաղկացած պատուիրակութեամբ, այցելեց Անթիլիասի Մայրավանք եւ հանդիպում ունեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին հետ: Շէյխին պատուիրակութեան մաս կը կազմէին տիւրզի համայնքի դատական, կրթական ու բարեսիրական կառոյցներու պատասխանատու հոգեւորականներ: Վեհափառ Հայրապետին կողքին ներկայ էին՝ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեան, սրբազան ու միաբան հայրեր, ինչպէս նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Կեդրոնական Վարչութեան համաատենապետ՝ Ստեփան Տէր Պետրոսեան եւ Լիբանանի քրիստոնեայ-իսլամ յանձնախումբի անդամ՝ դոկտ. Ժան Սալմանեան:

Ողջունելով տիւրզի համայնքի հոգեւոր պետին այցելութիւնը, Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ հայ եւ տիւրզի համայնքներուն սերտ բարեկամութեան ու գործակցութեան, այս ծիրէն ներս յիշելով Ազունիէի Ազգային Բուժարանը: Նորին Ս. Օծութիւնը նաեւ շեշտեց միջ-համայնքային գործակցութեան նոր թափ տալու եւ Լիբանանը ընկերային-տնտեսական տագնապէն դուրս բերելու հրամայականը:

Իր կարգին, տիւրզի համայնքի պետը խօսք առնելով ուրախութիւնը յայտնեց, որ կը գտնուի Կաթողիկոսարանէն ներս, ուր նախապէս մասնակից եղած էր Վեհափառ Հայրապետին կազմակերպած միջ-կրօնական երկխօսութեան: Ան նաեւ գնահատեց Ազունիէի Ազգային Բուժարանին կարեւոր ծառայութիւնը շրջանէն ներս: Վերջապէս, ան անդրադարձաւ Լիբանանի դիմագրաւած ընկերային-տնտեսական դժուարութիւններուն եւ շեշտեց ամէն գնով ժողովուրդին օգտակար հանդիսանալու անհրաժեշտութիւնը:

**ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԱԲԵՏԻՍ ԵՒ ՌԻԹԱ  
ԳԱՐԱԿԻԼԵԱՆ 100,000 ԱՄԵՐԻԿԵԱՆ  
ՏՈՒՆԱՐՈՎ ԴՊՐԵՎԱՆՔԻ  
ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ**

Երկուշաբթի, 11 Ապրիլին, նախկին հալէպահայ ազգայիններէն տէր եւ տիկին Աւետիս եւ Ռիթա Գարակիլեան այցելեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին: Հանդիպման ներկայ էր նաեւ Բերիոյ Հայոց Թեմի նախկին Առաջնորդ՝ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան:

Աւետիս եւ Ռիթա Գարակիլեան Վեհափառ Հայրապետին յայտնեցին, որ 100,000 ամերիկեան տոլարի գումարով կը փափաքին Դպրեվանքի հիմնադրամ մը հաստատել եւ յանձնառու եղան յառաջիկային աճեցնել հիմնադրամը:

Վեհափառ Հայրապետը բարձրօրէն գնահատեց Գարակիլեան ընտանիքին յանձնառութիւնը եւ իր Հայրապետական օրհնութիւնը փոխանցեց անոր՝ Դպրեվանքի առաքելութեան առաւել ծաղկման իր շօշափելի մասնակցութեան համար:

**ԻՐԱՔԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՄԱՐՄԻՆԸ ԱՅՅԵԼԵՑ  
ՎԵՐԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Երեքշաբթի, 12 Ապրիլին, Իրաքի Հայ Դատի մարմինը, ընկերակցութեամբ Լիբանանի Հայ Դատի մարմինին, այցելեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին:

Իրաքի Հայ Դատի մարմինը ամփոփ գիծերով Վեհափառ Հայրապետին ներկայացուց իր աշխատանքները: Ապա, Նորին Ս. Օծութիւնը իր մտածումները պարզեց եւ թելադրութիւնները կատարեց իսլամական աշխարհին մէջ Հայ Դատի աշխատանքները աւելի ազդու կերպով կազմակերպելու գծով, յատկապէս նկատի ունենալով միջավայրին առնչուած քաղաքական ու կրօնական մօտեցումներն ու զգայնութիւնները:

Այս առիթով Վեհափառ Հայրապետը գնահատեց թէ՛ իսլամական աշխարհին մէջ եւ թէ՛ ընդհանրապէս Հայ Դատի մարմիններուն կատարած աշխատանքը մեր ժողովուրդի բռնաբարուած իրաւունքներուն հետապնդման ուղղութեամբ:

**ԼԻԲԱՆԱՆԻ ՍՕՏ ՍԵՈՒՏԱԿԱՆ ԱՐԱՔԻՈՅ  
ԴԵՍՊԱՆԸ ԱՅՅԵԼԵՑ  
ՎԵՐԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Ուրբաթ, 15 Ապրիլին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին այցելեց Լիբանանի մօտ Սեուտական Արաքիոյ դեսպան՝ Ուալիտ Պուխարին եւ աւելի քան ժամ մը հանդիպում ունեցաւ Հայրապետին հետ:

Հանդիպման ընթացքին քննարկումները կեդրոնացան ընդհանրապէս Լիբանանի ներքին կացութեան եւ յառաջիկայ երեսփոխանական ընտրութիւններուն, ինչպէս նաեւ անդրադարձ կատարուեցաւ քրիստոնեայ-իսլամ երկխօսութեան եւ այս ծիրէն ներս

Վեհափառ Հայրապետին ունեցած առանցքային դերակատարութեան:

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ  
Հ.Բ.Ը.Մ.-ԷՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՍԸ**

Շաբաթ, 23 Ապրիլին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելութիւնը Լիբանանի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (Հ.Բ.Ը.Մ.) գանազան մարմինները ներկայացնող պատուիրակութեան մը, գլխաւորութեամբ Միութեան նախագահ՝ Պերճ Սեդրակեանի եւ շրջանային վարչութեան ատենապետ՝ Ժերար Թիւֆէնքճեանի:

Ողջունելով պատուիրակութեան այցելութիւնը Անթիլիասի Մայրավանք, Վեհափառ Հայրապետը գնահատեց տասնամեակներու վրայ տարածուած Հ.Բ.Ը.Մ.-ի ազգանուէր ծառայութիւնը Հայաստանի, Արցախի ու Սփիւռքի մէջ: Ան նաեւ ողջունեց հետզհետէ ծաւալող գործակցութիւնը Միութեան եւ Կաթողիկոսութեան միջեւ, ի նըպաստ մեր եկեղեցւոյ առաւել պայծառացման ու անոր առաքելութեան հզօրացման: Նորին Ս. Օծութիւնը իր մտահոգութիւնը յայտնեց Հայաստանէն ներս տիրող ներկայ կացութեան գծով եւ շեշտեց մեր ազգին ներքին միասնականութիւնը ամրապնդելու հրամայականը:

Բաժնելով Վեհափառ Հայրապետին մօտեցումներն ու մտահոգութիւնները, Պերճ Սեդրակեան ընդգծեց եկեղեցւոյ առանցքային դերակատարութիւնը՝ մեր ժողովուրդի զաւակները իր շուրջ համախմբելու եւ առաւել ազդու կերպով ծառայելու հայրենիքին հզօրացման եւ մեր իրաւունքներու հետապնդման գծով: Ան նաեւ շեշտեց մարդուժի պատրաստութեան կարեւորութիւնը՝ դիմագրաւելու ներկայ աշխարհի մարտահրաւերները:



Հանդիպման ընթացքին արծար-ծուեցան Լիբանանի, Սփիւռքի եւ Հայաստանի այժմու կացութեան հետ աղերս ունեցող խնդիրներն ու երեւոյթները:

**ԼԻԲԱՆԱՆԻ ՄՕՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ԱՅՅԵԼԵՑ ԱՆԹԻԼԻԱՍ**

Երեքշաբթի, 26 Ապրիլին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին այցելեց Լիբանանի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Վահագն Աթաբէկեան:

Հանդիպումը առիթ հանդիսացաւ ընդհանուր ակնարկ մը նետելու Ապրիլ 24-ի նշումին եւ ընդհանրապէս Հայաստանի, Արցախի եւ Լիբանանի կացութեան վրայ: Յատկապէս շեշտուեցաւ մեր ժողովուրդի ներքին միասնականութիւնը ամրապնդելու հրամայականը՝ մեզ շրջապատող մարտահրաւերները միասնաբար դիմագրաւելու յանձնառութեամբ:

**ՀԱՆԴԻՊՈՒՄ ՊԵՅՐՈՒԹԻ ՈՒՂԱՓՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԻԼԻԱՍ ԱՌԻՏԵՅԻՆ ՀԵՏ**

Հինգշաբթի, 28 Ապրիլին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը բարեկամական այցելութիւն մը տուաւ Պէյրութի Յոյն Ուղղափառ առաջնորդ՝ Իլիաս Աուտէին: Վեհափառ Հայրա-

պետը եւ Արքեպիսկոպոս Աուտէն համալսարանի մէջ դասընկերներ եղած են եւ երկար ժամանակ գործակցած միջ-եկեղեցական շարժումին մէջ, ինչպէս նաեւ՝ Լիբանանի միջ-համայնքային յարաբերութեանց ծիրէն ներս:

Հանդիպման ընթացքին անդրադարձ կատարուեցաւ Անտիոքի Յոյն Ուղղափառ Պատրիարքութեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, ինչպէս նաեւ երկու համայնքներու գործակցութեան գծով: Շեշտուեցաւ քրիստոնէական միութիւնը ամրացնելու եւ Լիբանանին կառչած մնալու հրամայականը, ինչպէս նաեւ երկրին տնտեսական տագնապը լուծելու եւ յառաջիկայ ընտրութիւնները խաղաղ պայմաններու մէջ կատարելու անհրաժեշտութիւնը:

**ՎԵՅԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒԼԵՑ Զ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ**

Ուրբաթ, 29 Ապրիլին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (Հ.Յ.Դ.) Բիւրոյի ներկայացուցիչ՝ Յակոբ Տէր Խաչատուրեանը, ընկերակցութեամբ Բիւրոյի անդամ՝ դոկտ. Մկրտիչ Մկրտիչեանի:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան յատկապէս Հայաստանն ու Արցախը դիմագրաւող ներկայ տագնապներուն, ինչպէս նաեւ Սփիւռքին առնչուած կարգ մը խնդիրներ:

**ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈԶ  
Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՄ ԿՈՂՄԷ**

ԿԻՐԱԿԻ, 6 ՄԱՐՏ 2022: Է. ՕՐ ՄԵԾԻ ՊԱՀՈՑ: Բ. ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ: ԱՐՏԱՔՄՄԱՆ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Հոգչ. Տ. Եսայի Աբղ. Էօրտէքեան եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Եղրաս Աբղ. Թէնէքէճեան:*

ԿԻՐԱԿԻ, 13 ՄԱՐՏ 2022: ԺԴ. ՕՐ ՄԵԾԻ ՊԱՀՈՑ: Գ. ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ: ԱՆԱՌԱԿԻՆ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Հոգչ. Տ. Եղրաս Աբղ. Թէնէքէճեան եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Եղիա Աբղ. Մալխասեան:*

ԿԻՐԱԿԻ, 20 ՄԱՐՏ 2022: ԻԱ. ՕՐ ՄԵԾԻ ՊԱՀՈՑ: Դ. ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ: ՏՆՏԵՍԻՆ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Հոգչ. Տ. Եղիա Աբղ. Մալխասեան եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Երեմիա Աբղ. Տէկիրմէնճեան:*

ԿԻՐԱԿԻ, 27 ՄԱՐՏ 2022: ԻԸ. ՕՐ ՄԵԾԻ ՊԱՀՈՑ: Ե. ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ: ԴԱՏԱԻՈՐԻՆ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Հոգչ. Տ. Երեմիա Աբղ. Տէկիրմէնճեան եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Եսայի Աբղ. Էօրտէքեան:*

ՇԱԲԱԹ, 2 ԱՊՐԻԼ 2022: ԼԴ. ՕՐ ՄԵԾԻ ՊԱՀՈՑ: ՏՕՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՁԻՆ ՄԵՐՈՑ ՍՈՍԿԱԼԻ ԶԱՐԶԱՐԱՆԱՑՆ ԵՒ ՄՏԱՆԵԼՈՅՆ Ի ՎԻՐԱՊՆ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Աւետիք Աբղ. Տէր Կարապետեան:*

ԿԻՐԱԿԻ, 3 ԱՊՐԻԼ 2022: ԼԵ. ՕՐ ՄԵԾԻ ՊԱՀՈՑ: Զ. ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ: ԳԱ-  
ԼԸՍՏԵԱՆ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատա-  
րագեց եւ քարոզեց՝ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան:*

ԿԻՐԱԿԻ, 10 ԱՊՐԻԼ 2022: ԾԱՂԿԱԶԱՐԴ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատա-  
րագեց եւ քարոզեց՝ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան:*

ԱԻԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ, 14 ԱՊՐԻԼ 2022: ՅԻՇԱՏԱԿ ԸՆԹՐԵԱՑ ՏԵԱՌՆ ՄԵ-  
ՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ՈՏՆԼՈՒԱՅՆ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատա-  
րագեց՝ Հոգշ. Տ. Եզրաս Աբղ. Թէնէքէճեան:*

ԱԻԱԳ ՇԱԲԱԹ, 16 ԱՊՐԻԼ 2022: ՃՐԱԳԱԼՈՅՑ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատա-  
րագեց եւ քարոզեց՝ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան:*

ԿԻՐԱԿԻ, 17 ԱՊՐԻԼ 2022: Ս. ԶԱՏԻԿ: ՏՕՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ  
ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատա-  
րագեց եւ իր Հայրապետական պատգամը փոխանցեց՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ  
Ա. Կաթողիկոս:*

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 18 ԱՊՐԻԼ 2022: Բ. ՕՐ ԶԱՏԻԿ: ՅԻՇԱՏԱԿ ՄԵՆԵԼՈՅ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատա-  
րագեց՝ Հոգշ. Տ. Եսայի Աբղ. Էօրտէքեան:*

ԿԻՐԱԿԻ, 24 ԱՊՐԻԼ 2022: Ը. ՕՐ ԶԱՏԻԿ: ՆՈՐ ԿԻՒՐԱԿԷ: ԿՐԿՆԱԶԱՏԻԿ:  
ՍՐԲՈՅ ՆԱՀԱՏԱԿԱՑՆ, ՈՐՔ ԿԱՏԱՐԵՑԱՆ ՅԸՆԹԱՑՍ ՀԱՅՈՅ ՑԵՂԱՍՊԱ-  
ՆՈՒԹԵԱՆ ՎԱՍՆ ՀԱԻԱՏՈՅ ԵՒ ՎԱՍՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատա-  
րագեց եւ քարոզեց՝ Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեան:*